

«DROSHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 3
M A R S
1931
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԵԱՆ ԴԱՂՆԵԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

„Դ Ա Շ Ն Ա Կ - Ն Օ Յ Պ Ո Ւ Ն“

Թիւրք մամուլը եւ մասնաւորապէս էնկիւրիի կիսապաշտօն բերան «Միլլիէթ»-ը վերջին ամիսներուն սոյն վերնադրով յօդւածներու երկար շարան մը կը հրատարակէ «Իաշնակ-Հոյպուն» գործակցութեան ներքին «գաղտնիքները» հրապարակ հանելու հաւակնութիւններով:

Նոյն ոճով, վերջին օրերս յայտարարութիւն մը բաց թողած է նաեւ Ա. ընդհանուր ջննիչ Իպրահիմ Թալին:

Ինչ ըսես, որ չի պատմւիր ատոնց մէջ իբր իրականութիւն—քիւրտերը խաղալիք եւ կոյր գործիք են դարձած նախ՝ Անգլիոյ, Ֆրանսայի ու պարսիկներու, ապա Հայերու ձեռքը: Քիւրտը եւ հայը ամենամահալտ թշնամիներ են եղած: Քիւրտն եւ թիւրքը միեւնոյն ծագումն, աւանդութիւնները եւ կրօնը ունին — նոյն ազգն են: «Թիւրքի եւ քիւրտի մէջ մէկ գիրի տարբերութիւն կայ»... Միայն թիւրքերն են, որ զեղուն զգացումներով տոգորւած են քիւրտ եղբայր ժողովուրդի հանդէպ: Եւ նման բազմաթիւ «ճշմարտութիւններ», որոնք կը համեմուին, ի հարկէ, «փաստերով», ինչպէս, օրինակ, քիւրտերը անգլիացիներու մասնակցութեամբ ժողովներ են գումարած, Ֆրանսացիներէ նիւթական օգնութիւն են ըստացիր եւ պարսիկներու հովանաւորութիւնն են վայելած, ատկէ դատ «դաշնակիներու» հետ ալ Պէլլուրի կարածներու եւ Փարիզի մէջ գաղտնի ժողովներ են ունեցիր, ուր մասնակցեր է, ի մէջ այլոց, նաև Պօղոս Փաշան, և... անչորհաբէ թիւրք Պէլլուրի ժողովէն տեսարան մը կուտայ: Ե՛ւ ապացոյց, որ քիւրտը հայուն երբեք բարեկամ չէ, շնակածներն կը պատմէ Պոլսոյ հայկական ջարդերէն պատկեր մը: Հոյպուն «Հայ-բոյն»-ի կը փոխէ... Եւ, վերջապէս, կուզէ հաւատացնել քիւրտ ժողովուրդին, թէ հայ կամաւորներ եւ ղեկավար-

ներ կային իրենց մէջ, որոնք վտանգի բուպէին ճշած-փախած են:

Անշուշտ, ինչպէս փաղաքշանքով կը յիշէ «Միլլիէթ»-ը, ամբողջ հայութիւնը չի արդարացներ «Իաշնակ-Հոյպուն» գործակցութիւնը. «Միայն Ռամկավար եւ Հնչակ կուսակցութեանց ծանրագլուխ, շիտակ խորհող եւ թիւրքերու բարեկամութիւնը սիրող մարդիկ անջատեցան այդ քաղաքակառնութենէն...», իսկ դաշնակներն ալ «բաժան-բաժան եղած՝ աննշան ոյժ են արդէն»:

Այսպէս կը գրէ «Միլլիէթ»-ի պատմաբանը:

Իսկ ի՞նչն է առիթ տւեր էնկիւրիին իբրք անցնելու եւ գայլի աւետարան կարգալու քիւրտերու գլխուն:

Շէյխ Սալիտի ապստամբութեան մէջ անոնք կը տեսնէին Համիտի ժառանգորդներու եւ յետագիւմական տարբերու դրդումը, որոնց ետեւը՝ Անգլիոյ ուրակահանը կար:

Արարատի շարժման մէջ անգլիացիներու, Ֆրանսացիներու եւ պարսիկներու հետ կը նշմարէին հայ յեղափոխականի սուտերը:

Արարատի եւ Զիլանի շարժումներուն մէջ անոնք տարբեր բան մը տեսան — շարժումներու կազմակերպումը բնոյթը — սպառնական հզօր գործածն թ ապստամբական շարժման հետ, թէեւ դեռ թերի:

Եւ էնկիւրիին, այս վտանգաւոր երեւոյթին հանդէպ, կը փոխէ (զոնէ առ այժմ) իր գործեակերպը:

Շարժման ընթացքին՝ իր կորուստներէն կատարած՝ վայրենօրէն շարդեց նախ տասնեակ հազար քիւրտ խաղաղ ազգաբնակչութիւն Զիլանի հովիտներու եւ Հէքքեարիի սարահարթներու վրա՝ աւելի ամալացնելով երկիրը, իսկ այժմ փոխելով իր գործեակերպը՝ կը սողոսկայ, մեղրանուշ և «եղբայրական» խորհուրդ-

ներ կուտայ քիւրտերուն եւ կաշիէն կելլէ հաւատացնելու համար, թէ աշխարհի մէջ անոնց միակ բարեկամը թիւրքն է: Իսկ շնականօրէն դաւեր կը նիւթէ միտքերը շիտթելու, ցեղերը իրար դէմ հանելու, վարկաբեկելու անոնց մըտաւորական ղեկավարները, բրդուելու հայերու եւ իրենց միակ զօրեղ եւ կազմակերպւած «Հոյպուն»-ի դէմ:

Այս նպատակով ահա հէքեաթներու երկար շարք մը կը ստեղծէ՝ տարով անոնց իրակաւնութեան շարքը:

Ինկիւրիին կը ջանայ պղտորել նաեւ Սիւրիոյ արարներու միտքերը քիւրտերու եւ Դաշնակցութեան դէմ, իբր երկրի հանգիստը վրդովող տարրերու...

Այս չէ միայն. Ըսմէ՞ք փաշան ճիգ մըն է որ կընէ վերականգնելու համար Թիւրքիոյ վարիւր միջազգային տնտեսական շուկային առջեւ եւ յաջողցնելու եւրոպական երկշտ, եւ գոյոյզ դրամագլխի մուտքը Թիւրքիա. կը թւի թէ «անօթի հաւր երազ կը տեսնէ»...

Քաղաքակիրթ մարդկութիւնը իր արժանի գնահատութիւնը, անշուշտ, պիտի տայ թիւրք բերան «Միլլիէթ»ի «փաստական պատմութեան», մանաւանդ որ Թիւրքիոյ քաղաքական պատմութիւնը առատ նիւթեր ունի շարքի բուն պատճառը գտնելու համար:

Պէտք չկայ որոնելու պատմութեան մէջ յոյներու, բուլղարներու, սերբերու, հայերու ապստամբութիւններուն պատճառները, երբ թիւրք տիրապետութեան պատմութեան էջերը ներկած են նոյն ազգերու արցունքովը եւ արիւնովը:

Ապարդիւն է որոնել «արտաքին դրդումներ» հոն, ուր տառապող ազգերը կընդվզեն բռնակալին դէմ՝ իրենց գոյութեան պահպանութեան համար:

Քրիստոնէայ ազգերու դէմ, Ֆէսով թէ գլխարկով, թիւրքը եղաւ անողոք դահիճ, եւ սրով ու հրով ջանաց խեղդել անոնց ազատութեան տենչը:

Այժմ հերթը մահմետական ոչ-թիւրք ազգերուն է, որոնց համար Թիւրքիոյ միջոցառար թունաւոր, կեանքը ահաւոր դժոխքի է վերածւած:

Մեծ Պատերազմէն վերջ քիւրտերը տասնեակ հազարներով քուսեցան իրենց տեղերէն, ոչնչացւեցան անոնց մտաւորականները, պետերը եւ անգլուխ մնացած քիւրտ ժողովրդի թրքացման բոլոր միջոցները ձեռք առնուեցան:

Շէյխ Սայիտի ապստամբութիւնը եղաւ հակահարւած մը, որ ձախողեցաւ, դժբախտաբար, ու թիւրքը տասնեակ հազարներ ողջ վառեց ու 4005 աւելի մտաւորականներ խեղդամահ ըրաւ:

Այսքան տառապանքէ վերջ պէտք կա՞յ որոնելու «արտաքին մատ»:

Ճնշւած ու հալածական ժողովրդի մը ահեղ կանչն է այս, որ դեռ երկար պիտի հնչէ թիւրքին սկանջին:

Եւ վաղը, անոր հետ բոլոր վրիժառու տարրերը, որոնք տառապած ու հալածւած են իրենց հայրենի երկրէն, բնակածօրէն անոր պիտի միացնեն իրենց ուժերը՝ ճգնելով փրկել իրենց հայրենիքը, կեանքն ու պատիւը բռնակալներէն:

ԱՅՆՏԵՂ, ՌԻՐ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

(Շարունակութիւն)

ՀՈՂԱՑԻՆ ԼԱՐՑ



Իրենց իշխանութեան հէնց առաջին օրերից սկսած բոլշեւիկները յայտարարեցին, որ դրաւելու են բոլոր կալւածատէրերի, հողատէրերի, կուլակների, վանքերի ու եկեղեցիների հողերը և բաժանելու են գիւղացիներին: Այս յայտարարութիւնը որոշ տպաւորութիւններաւ գիւղացիութեան վրա, որ անհամբեր սպասում էր տրւած խոստումի իրագործման: Բայց, ինչպէս բոլոր խնդիրներում, այստեղ էլ հիասթափումը շատ չուշացաւ: Հողերը գրաւուցին 1921-ին, իսկ հողաբաժանումը՝ կատարեց 1926-ին: Հինգ տարւայ ընթացքում չբժաններն ուղարկուցին երկրաչափ մասնագէտներ, ո-

րոնք չափեցին գիւղական հողերը և բաժանեցին ըստ տեսակների: Այս ցուցակագրեցին բոլոր գիւղացիներին և բաժանեցին երեք կատեգորիայի — չքաւոր, միջակ և ունեւոր:

Տեսակների բաժանւած հողերը նախ երկու տիպի էին — լեռնային և դաշտային. իւրաքանչիւր տեսակն էլ բաժանւեց նոյնպէս երկու մասի՝ ջրովի և անջրովի: 1926-ին վերջացան այս աշխատանքները և սկսեց հողաբաժանումը, համաձայն հիմնական օրէնքների: Թէ՛ լեռնային և թէ՛ դաշտային ջրովի հողերից տւին չքաւորներին՝ իւրաքանչիւր շնչին լաւ հողամասից, նայած դիւրի հողի քանակութեան, 12-22 լիտր հող (48 լիտրը հաւասար է մէկ դեսեատինի), միջակ հողամասից՝ նոյն

քանակութեամբ միջակ կատեգորիային, իսկ վատ հողամասերը՝ հարուստներին և կուլակներին: Ամենալաւ հողատարու տրւում էր կոմունստներին և բարակներին (մշակներին):

Նոյն հիմունքներով և միևնոյն քանակութեամբ բաժանում կատարեցին և անջրտի հողերի վերաբերմամբ: Հողաբաժանումից պարզ երևում էր, որ Հաստատանի գիւղացու իւրաքանչիւր շնչին տրւում էր աշխատանքի տեղերում մասուտրապէս միջին թելով 1/4 դեսեատին, իսկ լիւնային տեղերում՝ մի քիչ աւելի: Այն ինչ, որինակ, Ալբրէշանի գիւղացին ստանում է իւրաքանչիւր շնչին 2—2½ դեսեատին:

Կուլակները, սովորաբար, հրաժարում էին հող ստանալուց, կամ եթէ ստանում էին, աւելորդ էին համարում աշխատել վատ հողամասերի վրա և թողնում էին անմշակ:

Նոյն հիմունքներով բաժանելու համար զբաւեցին բոլոր այլեւնեքը և ապա լաւագոյն այլեւնեքը տւին կոմունիստներին, լաւերը՝ չքաւորներին, միջակները՝ միջակներին, իսկ վատերը՝ կուլակներին: Այնպէս որ, մի ապրիլ, որի պարարտացման ու բարեկարգման համար այս կամ այն ունեւորը տասնեակ տարիներ աշխատանք էր թափել՝ ձեռքից առնեց ու տրեց ուրիշին:

Ախ յայտարարութիւնը, թէ հողը տրւելու է գիւղացիներին հաւասար չափով, չիրագործեց. ոչ մի գիւղ ուրիշ գիւղին հաւասար հող չտացաւ. մի գիւղում գիւղացին աւելի հող ստացաւ, միւս գիւղում՝ պակաս: Բայց և այնպէս, 1926թ. հողաբաժանումից յետոյ, գիւղացու համար աւելի լաւ վիճակ տեղծեց. նրա ունեցած հողը աւելի էր, քան ցարկան իշխանութեան օրով: Այդ պատճառով էլ գիւղացիութիւնը մի առանձին ոգևորութեամբ կպաւ դործի, սկսեց վար ու ցանքի եւ ու գետ:

Այս ոգևորութիւնը, սակայն, երկար չտևեց. շուտով զգացեց եկամտային տուրքի ծանրութիւնը. գիւղացու արևելք-բարիստի մեծ բերած մթերքը, այս կամ այն տուրքի անուսով, մեծ մասամբ անցաւ կառավարութեան: Ու գիւղացին նորից «դատեց ու դատարկ նստեց»: Այն ժամանակ, 1927-ից սկսեցին ցանել այնքան, որքան մէկ տարում կը բաւարարէր իրենց ընտանիքին: Բայց իշխանութիւնը հազար ու մի միջոցներով ստիպում էր գիւղացուն ցանել. յայտարարում էին, թէ ով ցանի՝ ապա տ էլինի եկամտային այս ու այն տուրքերը վճարելուց: Եղան միամիտներ, որ խաբւեցին. թէ՛ աշնան և թէ՛ դարնան ցանեցին բոլոր հողերը: Բայց հարկային պաշտօնեաները թաղուն ցուցակագրում էին, թէ ինչ քանակութեամբ է ցանւել, և օգոստոսին ներկայացրին հարկային թղթերը և պահանջեցին ու դանձեցին սահմանւած բոլոր տուրքերը:

Գիւղատնտեսութեան զարկ տալու նպատակով տրակտորներ բերին: Գիւղացիութիւնը շատ ուրախացաւ, քանի որ լծկանների պակասութեան հետևանքով շատ արտեր մնում էին անմշակ: Բայց այս ուրախութիւնն էլ կարճ տևեց. երբ տրակտորները հասան գիւղ, ամէն մի դեսեատին հողը հերկելու համար պահանջեցին 75 բուրջի: Գիւղացիութիւնը սարսափեց և աւելի բարուք համարեց կամ բնաւ չցանել և կամ տալ լծկան

ունեցողներին ցանելու: Տրաքտորները մնացին անգործ, և կառավարութիւնը յետ տարաւ:

Ինքին հացահատիկներ մաքրելու մեքենաներ: Գիւղացիութիւնը անտարբեր վերաբերմունք ցուց տուրք: Եւ որպէսզի գիւղացիներն օգուտեն մեքենաներից, յայտարարեցին, թէ մաքրելու համար ոչ մի վճար չեն առնելու: Այս անգամ էլ գոմնեցին հաւատացողներ, որոնք բերին իրենց հացահատիկները մաքրելու: Այդ աշխատանքի ժամանակ գաղտնի ցուցակագրում էին, թէ ով ինչքան հացահատիկ է բերում մաքրելու: Ձմեռու հարկահաւաքները սկսեցին չըլել գիւղերը և մաքրւած հացահատիկի իւրաքանչիւր փթի համար պահանջել 2 Փունտ վարձ: Բարձրացած արժուիկին կարևորութիւն չուրին. վարձը գանձեցին: Գիւղացիութիւնը այս նոր տուրքից ապառուցում համար սկսեց փչացնել մեքենաները, կոտրատել մեքենայի գանազան մասերը: Այն ժամանակ կառավարութիւնը յայտարարեց, որ փթին 2 Փունտ հարկ պարտաւորեցուցիչ է, անկախ նրանից, թէ գիւղացիները կօչուտեն մեքենայից թէ ոչ: Գիւղացիութիւնը բարուք համարեց 2 Փունտ հարկը տալ, բայց մեքենաներից մերժեց օգուտել:

Կ Ո Լ Խ Ո Ա

Հողային խնդիրն ու նրանից առաջացած զրկանքներն ու հայածանքները շարունակեցին մինչև կոլխոզները*) անդէս գալը: Բուլձրիկներն իրենց համայնավարական ծրագրի իրագործելու համար յոյսեր դրրին կոլտնտեսութեան՝ հաւաքական տնտեսութեան վրա, որ երազում են հինգ տարում իրականացած տեսնել: Կոլխոզների յայտարարութեան հէնց առաջին օրերին, կարծէք սեւով պատեցին գիւղացիութեան սիրտն ու հոգին:

Նախ քան կոլխոզների հանդէս գալը գտում կատարեցին, բայց այս անգամ գարհուրելի ծրագրով: Ունեւորներին, կասկածելիներին և ձայնադուրկներին զբաւեցին հող ունեւորներ իրաւունքից, գրուեցին նրանց ամբողջ տնտեսութիւնը, խնցին շարժական և անշարժ գոյքը, տեղափոխեցին գաւառի կենտրոնական վայրը և աճուրդով ծախեցին յօգուտ կառավարութեան: Գրաւած անշարժ գոյքը յանձնեցին գիւղփոխին (փոխադարձ օգնութեան կոմիտէին): Վերջին էլ իր հայեցողութեամբ բաժանեց կոմսոմոլ բարակներին (կոմունիստ երիտասարդ մշակներին): Չուած ու ընչադուրկ դարձաների մի մասը մաքրուեց, միւս մասը բանտարկեց. մի մասն էլ սոված ու ծարաւ, աղիողորմ թափառում էր փողոցներում:

Կոլխոզի ծրագրի իրագործման համար գիմնեցին սպառնալիքի ու խարէութեան: Յայտարարեցին, թէ՛ ով չմտնի կոլխոզներին մէջ,՝ կը զրկւի հողից ու տնտեսութիւնից: Առաջին, թէ՛ իւրաքանչիւր անդամ պարտաւոր է անշարժ գոյքը վճարել 150 բուրջի միանալով, իր ունեցած կայքը ցուցակագրել և կառավարութեան նշանակած մարզկանց հետ դնահատել. այդ կայքը կը դառնայ պետութեան սեփականութիւն, իսկ պետու-

*) Կոլխոզ ևսւերիմ ԿОЛЛЕКТИВНОЕ ХОЗЯЙСТВО — հաս.ախկան տնտեսութիւն բառերի կրճատումն է:

թիւնը պարտաւորում է գնահատուած գոյքի արժէքը վճարել 10 տարւայ ընթացքում: Գիւղացիութիւնը մնաց անհրաժեշտ գրութեան մէջ. եթէ մերժէր՝ նշանակում է ունեցեալը պիտի գրաւէր և ինքը զրկէր ամէն բանից. կառավարութիւնը այլևս չպիտի վճարէր գրուած գոյքի փոխարժէքը: Այդ պատճառով, գիւղացիները մի մասը Հաւատաց ու մտաւ կոլտնտեսութիւնների մէջ: Սակայն, երբ աշխատանքները կատարւեցին՝ վերջացան, մի օր էլ յայտարարեցին, թէ՛ «Ստալինի կարգադրութեամբ օրէնքը փոխւել է. ցուցակագրուած ամբողջ գոյքը անցում է յօգուտ կոլտնտեսների, և կառավարութիւնը այլ ևս պարտաւոր չէ փոխարժէքը վճարելու նախկին սեփականատէրերին»:

Բարձրացաւ ընդհանուր գաղտնիք և անօրինակ վրդովում խորհրայ կառավարութեան դէմ: Գիւղացիութիւնը սկսեց անխնայ մորթել իր կաթնատու կենդանիներն ու լծկան հզները, այրել կամ գետնի տակ թաղել շարժական գոյքերը և, առհասարակ, իր ձեռքով ոչնչացնել տասնեակ տարիների ջրանաթոր աշխատանքով ձեռք բերած տնտեսութիւնը: Կառավարութիւնը, իր հերթին, գիմեց ծայրայեղ խստութիւնների — բանտարկութիւն, քարոք, գնդակահարութիւն: Իւրաքանչիւր շրջան Երևանից ուղարկեց պատժիչ զորամասեր, որոնք գրաւեցին գիւղացիների դեռ մնացած գոյքերը: Բռնի գրաւում էին և յետոյ գրում էին թերթերում, թէ գիւղացիները յօժար կամքով իրենց ունեցեալը յանձնեցին կոլտնտեսի և իրենք էլ անդամ գրւեցին: Այս ստախոսութիւնը աւելի էր գայրացնում գիւղացիներին:

ԱՊՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տեսնելով, որ բռութիւնների միջոցով չեն կարողանում Հասնել իրենց նպատակին, բոլշևիկները սկսեցին յետ կանգնել, բայց այլ ևս ուշ էր: Գործադրուած բռութիւնները արդէլ լեցրել էին գիւղացիութեան Համբերութեան քաժակը: Բացի կոմունիստ կոչւած միակերտներից, ողջ ազգաբնակչութեան մէջ չկար մի խաւ, որի վրա կառավարութիւնը կարող է յենել: 1930թ. փետրարից, ցուրտ ձմրան, գիւղացիութիւնը սկսեց բարձրանալ սարերը, և այնտեղ ըմբոստ տարրերը, առանց ազգի խորութեան, ձեռք ձեռքի տուն և երգչեցին կուել ընդհանուր թշնամու՝ բոլշևիկի դէմ: Վայց Զօրի ըմբոստների թիւը Հասաւ 2500ի, որոնցից միայն 400 հոգին գինեւած էին զանազան տեսակ Հրացաններիով»:

Այնուհետև հեղինակը տալիս է կուիների նկարագրութիւնը, որ յապաւում ենք, որովհետև «Երօշակ»ի մէջ այդ մասին արդէն մանրամասօրէն գրւած է: Ամփոփելով յիշեցնենք միայն, որ, նախնական խորհրդարանութիւններից յետոյ, լեռներն ապառախանմաները մարտի կէսերից անցնում են յարձակման և 6 օրւայ տաք կուիներից յետոյ, գրաւում են 113 գիւղեր, որից 68-ը Հայկական և 45-ը՝ Թուրքական: Հեղինակը վերում է. «Մի շտեմանով խաղաղառութեամբ էր ընդունում գրաւուած գիւղերի ազգաբնակչութիւնը. շատերը յուզմունքից արտասոււմ էին և փարում իւրաքանչիւր գինւորին ու ջերմ Համբըրներով գրկախառնում»...

ձիշտ փետրար 18-ի սրտաշարժ օրերը: Տիւրքիկները ապստամբութիւնը կանխելու և տարածման առաջն աննելու Համար նախ յետ կանգնեցին կոլտնտեսութեան Համար կատարած բռութիւններից, յայտարարեցին, որ իրենց կոմունիստները, պաշտօնանները չեն հասկացել և սխալներ են գործել: Կատժելու Համար, իբր թէ, պաշտօններից զրկեցին, բայց, իրօք, խաբելով տեղափոխութիւններ կատարեցին: Վերադարձրին գրաւուած ու ցուցակագրուած գոյքը, վերադարձրին քարտուածներին, բանտարկւածներին. ձայնագրուեցին անգամ Հող տւին: Կօսպէրատի խառնութիւնը անընթաց մթերեցներով լեցրին և ձայնագրուեցին էլ թոյլատրեցին օգուել:

Բացի այս «չնորհած» արտօնութիւններից սկսեցին պրոլոկացիաներ տարածել, որ, իբր թէ, Հայ ու Թուրք գիւղացիներն են միմիանց դէմ կուում, որ կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում ազգամիջեան կուիներին վերջ տալու Համար: Այսպիսի լուրեր տարածում էին, որ ուրիշ Հայ ու Թուրք գիւղեր չմիանան միմիանց Հետ... Տարածում էին, որ Արարատից ջերդերը յարձակւել են այս կամ այն Հայ ու Թուրք գիւղերի վրա և թալանի մատնել նախկիններն ու ոչխարի հօտերը: Բայց ազգաբնակչութիւնը հասկանում էր, թէ ինչ նպատակով են տարածուած նման լուրերը. նա ոչ մի կարեւորութիւն չէր տալիս բոլշևիկեան ստերին, գրկաբաց ընդունում էր ապստամբներին և խտացնում էր նրանց շարքերը»:

Ամբողջ Վայց Զօրը, բացի չորս գիւղից, ապւստամբ վիճակում էր: Ապստամբները պատրաստուած էին շարժւել դէպի Շարուր ու Նախիջևան, որպէսզի այդ շրջաններն էլ մաքրեն բոլշևիկներից, բայց կառավարութիւնը գինւորական մեծ ոյժ է հանում նրանց դէմ: Ապստամբների դէմ հանուած մի քանի գունդ զօրքերից երկուսու Հայկական էին. նրանց Համոզում են, թէ գնում են ջրդերի դէմ, որոնք եկել են Արարատից և թալանի մատնել Հայ գիւղերը: Բայց երբ Հայ դինտրները հասկանում են, որ իրենց խաբել են և որ իրենց դէմ կուտղները Հայ գիւղացիներ են, գէնքերը վար են գնում, Հրամարում են կուել և թողնում հեռանում են. մնում են միայն ոռոսական զնդերը, որոնք գրաւեցին Վայց Զօրի և մինչև այժմս էլ մնում են այնտեղ:

Վորիների ընթացքում բոլշևիկներից ընկան 650 գինւոր, 2 կոմիսար, իսկ ապստամբներից 65 հոգի, որից 43-ր Թուրք և 22 Հայ: Սարերը բարձրացածներին ներում խոստացան. շատերը Հաւատալով վերադարձան, բայց սերկաններ իրենց խոստումը դրժելով՝ շատերին զնդակահարեցին, շատերին քարոքեցին և ցիր ու ցան արին: Ամէն միջոց գործ են դնում գեկավարներին ձեռք ձգելու կամ կաշառներ խոստանալով՝ դաւադրութեամբ օպանելու, բայց չի յաջողում:

«Նոյնպիսի ապստամբութիւններ ծագել էին Կովկասի ամէն կողմերում, Հայաստանի զանազան մասերում, մասնաւոր Նոր-Բայազէտի գաւառում, ուր մինչև այժմ, Հայեր ու Թուրքեր միացած, Հերասութեամբ կուում են, և բոլշևիկներին ամիսների ընթացքում չի յաջողում ճնշել:

«Այսօր հայ Ժողովուրդը բուռն կերպով իշխանութեան տակ արհեստագործ է զբաղում. չկայ կեանքի ու գոյքի սպառնալիքներ, չկայ մէկ հոսանք, մէկ դասակարգ, որ գոհ լինի: Աշակերտութիւնը, որին այնքան փայտախեցին ու կրես տւին, հայհոյանքի խօսքը բերանին՝ հրաժարում է դպրոց դնալ: Մինչև 1927 թիւը նրա մէջ մեղրքին ամէն ինչ՝ և՛ ազգային գաղափար և բարոյական սկզբունք, բայց այժմ անմեղ հողիներէ մէջ դարձնել է սէրը դէպի ծնողները, դէպի հարազատները, հայրենիքն ու ազգը:

«Նորը հրասթափութիւն է առաջ եկել նաև իրենց՝ կոմունիստներէ շարքերում: Շատ շատերը կամովին հեռացան կուսակցութեան շարքերից, շատերին իրենք հեռացրին, որպէս «ազգայնական»...

«Ձեռն յիշում մէկ շրջան, ուր հայ ու թուրք պիտի զայտնային փոխադարձ յարաբերութիւնը այնքան լաւ, այնքան բարեկամական լինի, որքան այժմ: Սու-

կալի բունութիւնները մոռացնել են աւել տարիներէ ընթացքում կուսակաւած ներհակութիւնը, և այսօր հայ ու թուրք պիտի զայտնային միացած կուսում են ընդհանուր թշնամու դէմ: Միմիանց գաղտնիքները պահում են և փախածներին թաղցնում ու խնամք են տանում:

Ուր էլ գնաս, որ պիտի տեսնե՞ք. ի՞նչ խաբար կայ. թէ՞ մուրագներս սրտներումս պիտի մեռնենք»:

— Ա՛խ, եարբ էլ պիտի տեսնե՞ք. ի՞նչ խաբար կայ. թէ՞ մուրագներս սրտներումս պիտի մեռնենք»:

«Նոյն յիշողութիւններով, նոյն ախ ու վախերով յիշում են և Դաշակցութիւնը: Շատ անգամ հանդիպել եմ նախկին հակադաշակցականներին, որոնք առել են. «Ա՛խ, մէկ էլ տեսնեմ դաշակցական մի դիւետորի և նրա ճակատը համբուրեմ, նոր Աստուած հողիս առնիք»...

ՔՐԻՄԿԱՆ ՀԱՐՑԵ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼՈՒՄ

(Շարունակութիւն)

Քիմալական թիւրքերոյ սահմաններում ազատ Բիւրդիստան ստեղծելու երազները հազիւ երկու տարւայ կեանք ունեցան: Յոյներին յաղթելուց և Լոզանի դաշնագրով իր իշխանութիւնն ամրապնդելուց յետո՛յ՝ Մուստաֆա Գեմալը ոչ միայն դժօք էր հանդիսաւոր խոստումները զերբերին, այլ և սկսեց ատամներ կրճատացնել նրանց դէմ:

Այս դիմադրածութիւնը հասկանալու համար, պէտք է նկատի ունենալ, որ այդ ժամանակները — ինչպէս և հիմա — զեմալական ամբողջ թիւրքիան բռնած էր շովէնական մի նոպայով, որ, «թիւրքիան թիւրքերի համար» նշանաբանի տակ, վայրագօրէն ծառացել էր բոլոր ազգային փոքրամասնութիւններին դէմ: Թիւրք ազգայնականները կատաղած էին, որ Լոզանի դաշնագրի մէջ մի քանի տարտած յօդուածներ էին սպղռել ի պաշտպանութիւն ազգային փոքրամասնութիւնների: Հայերը, հրեաները և յոյները, կուսակցութիւնները: Այս կատաղութեան հետեւանքները, ոչ միայն լուռ ու մունջ համակերպում էին իրենց դէմ գործուող բռնութիւններին, այլ և հրապարակօրէն «բողոքում», որ իրենց պաշտպանութեան համար խօսք է եղել Լոզանում: Միև ազգային փոքրամասնութիւնները, ինչպէս օրինակ, Փոքր Ասիայի շարքերին ու լազերը, որոնք անդուլութիւն ունեցան իրենց իրաւունքների մասին ձայն հանելու, ենթարկեցին այնպիսի սարսափների ու կտորածների, որ մինչև հիմա չեն կարողանում ուղքի գալ:

Այս վերջինների թւին էին պատկանում և զեր-

դերը, որոնք ոչ միայն չէին հրաժարում ազգային փոքրամասնութեան իրաւունքներից, այլ և, յանձինս իրենց ղեկավարների, յանդգնում էին յայտարարել, թէ իրենք թիւրքերին իրաւահաւասար ազգ են հանդիսանում:

Այս յանդգնութիւնն առիթ հանդիսացաւ, որ Անգորայի կառավարութիւնը Բրդական Հարցն արժատապէս լուծելու գործով զբաղւի: Եւ ինչպէս ուէ ազգային հարցի առջև դրած բոլոր ժամանակների թիւրք կառավարութիւնները, նոյնպէս և Անգորայի կառավարութիւնը այլ միջոց չկարողացաւ խորհել քան հաւածանքը և ցեղային բնաջնջումը:

Բիւրդիստանի ինքնավարութեան պահանջներին Անգորան պատասխանեց ձերբակալելով և աքսորելով զերբ մուսուրականներին և առաջնորդներին: Սա նախերգանքն էր զերբաջինջ քաղաքականութեան: Այդպէս էին սկսած հայկական տարագրութիւններն ու ջարդերը համալսարանային պատերազմի ժամանակ, ինչպէս և նրանցից առաջ տեղի ունեցած ջարդերը բուլղարական, յունական, արաբական և այլ վիլայէթներում, ուր ազգային շարժումներ են նկատուել թիւրքական տիրապետութեան դէմ:

Անցեալի այս բազմաթիւ փորձերից իրաւունք՝ զերբերը շուտով կուսեցին, որ բնաջնջման հերթը հասել է իրենց և որոշեցին գէնքի դիմել կամ աղաւտութեան տիրանալու և կամ պատուով մեռնելու համար:

Կողմանու պատրաստութիւնից յետոյ, նրանք 1925ի փետրուարին ապստամբութեան դրօշ բարձրացրին: Ա-

* Տես Գրքակ № 10, 1930թ.

պըստամբութիւնն սկսելով՝ կէճն դաւառում՝ արագութեամբ տարածեց ամէն ուղղութեամբ և մի քանի շաբաթում բունեց նարբերդի, Դիարբեքի, Էրզրումի և Բիթլիսի նահանգներն ամբողջովին կամ մեծ մասով:

Այս հսկայական տարածութեան վրա, չորս ամիս շարունակ, զերբերի և թիւրք գորգերի միջև տեղի ունեցան կատաղի կռիւներ, որոնք վերջացան առաջինների պարտութեամբ զլիւսարապէս այն պատճառով, որ Փրանսական կառավարութիւնը արտօնեց Մուստաֆա Քեմալ փաշային 25-30 հազար զօրք փոխադրել զիրդական ճակատը Սիւրիայի վրայով:

Այս ապստամբութեան մտերամանութիւնները, ինչպէս և նրանից յետոյ զերբերի դէմ զործւած վայրագութիւնները — տարագրութիւն, կոտորած, կատաղաններ — յայտնի են Ձեզ իմ նախորդ գեկուցումներէից, ինչպէս նաև մեր կուսակցութեան կողմից ձեր առջև դրւած տեղեկագրից: Վերջինից զիտէք դուք նաև զբերդական «Հոյրուն» կազմակերպութեան մասին, ինչպէս և «Հոյրունի» ղեկավարութեամբ տեղի ունեցած կռիւների մասին, որոնք այսօր իրենց գաղթականի նման են ճառի Արարատի շրջակայքում: Ես միայն պէտք է աւելացնեմ, որ այս կռիւների ընթացքին այնքան արիւն է թափուել երկուստեք, որքան չէ թափուել երկարանի ոչ մի անկիւնում, համաշխարհային պատերազմից ի վեր: Բրդերի կորուստներն անկասած աւելի մեծ են, որովհետև թիւրք գորգերը աւանդական ամբողջութեամբ իրենց կատարութիւնը թափում են անպաշտպան զբերդ ժողովրդի վրա — զիւղերում մնացած կանայք, երեխաներ և անկարներ — այն բոլոր վայրերում, ուր նրա ձեռքը չէ հասնում կուղիներին...

Կապիտալիստական պետութիւններն այս սարսափելի արեւնեղութեան հաղնէպ լուռ ու մունջ հանդիսատեսի դեր են կատարում: Նրանք անզիտանում են Սեւրի դաշնագրերը, որի մէջ Քիւրդատանի ինքնավարութեան, և մինչև իսկ պայմանական անկախութեան խոստումներ ու յանձնարարութիւններ կան, մուսուլմաններն և Լոզանի դաշնագրերը, որով մի շարք պարտադրութիւններ են ստանձնել թիւրքերոյ ազգային փոքրամասնութիւնները պաշտպանելու: Արեան ծովի մէջ խեղճուող զբերդի ձայնը չէ հասնում Կապիտալիստական կառավարութիւններին, որովհետև այդ ձայնը չէ ներդաշնակում այն քաղաքական ու տնտեսական ակնկալութիւններին, որ նրանք ունին թիւրքեայից:

Այս ամենը շատ ճշմարտացի, շատ «հասկանալի» է: Անբնական ու անհասկանալի, առաջին հայեացքից դռնէ, այն վերաբերմունքն է, որ ցոյց է տալիս նորհրդային Ռուսաստանը զբերդական շարժումների հանդէպ: Մեր կուսակցութեան տեղեկագրի մէջ այդ վերաբերմունքը բացատրւած է այն հանգամանքով, որ զբերդերը, անտես առնելով խորհրդային իշխանութեան սաղարանները, իրենց շարժումները չուղղեցին Իրաքի, Պարսկաստանի կամ Սիւրիայի դէմ: Պէտք է աւելացնեմ, որ խորհրդային իշխանութեան վերաբերմունքը զբղական հարցում մենայնպէս պայմանաւորւած է և այն փոփոխական յարաբերութիւններով, որոնք գոյութիւն ունին նրբորդ, Միութեան և թիւրքերոյ միջև: Եթէ այդ յարաբերութիւնները լարւած են՝ խոր-

հրդային իշխանութիւնը բարեցակամ վերաբերմունք է ցոյց տալիս դէպի զբերդ: Եւ ընդհակառակը, եթէ թիւրք-խորհրդային յարաբերութիւնները բարեկամական են՝ զբերդական շարժումները նրա աչքում դառնում են աւազակային, յետադիմական և այլն:

Այսպէս, օրինակ, 1928ին, երբ թիւրք-խորհրդային յարաբերութիւնները բաւական ձգւած էին, և յամառ լուրեր էին պտտում, թէ թիւրքեան դէպի արեւմտեան պետութիւնները հակելու և մինչև իսկ Ադրբեյի Դաշնակցութեան մէջ մտնելու մտաբերութիւններ է սնուցանում, իսկ բոլշևիկները կարծում էին, թէ զբղական վտանգի սպառնալէքով կարելի է ճնշում գործ դնել թիւրքեայի վրա, որպէսզի հաստատարի մնայ խորհրդային իշխանութեանը՝ Թիֆլիսի «Ջաբիա Վաստակա» պաշտօնաթիւթը, ապրիլ 25-ի համարում, հետեւեալ գնահատութիւնն էր տալիս զբերդական շարժմանը.

«Համարեա մի տարուց ի վեր Բիրդիքը, Արարատից մինչև Իրաք, և Անատոլիայից մինչև Քիբրանշան, անընդհատ և դիմացկունութեամբ պայքար են մղում յանուն անկախութեան: Ուրեքութեամբ լի այս ամբողջ դարաշրջանի ընթացքին, քոյրերը որքան պարտութիւն կրեցին այնքան էլ յազարմակի փորձեր ունեցան՝ մինչև օրս էլ մնալով ըմբոստ և անհնազանդ: Անցեալ ամառայ կրեցին (1925-ի), ասպտամբութեան ցնջումից աւելի երկու տարի յետոյ — մի ապստամբութիւն, որը որքան էլ Անգլիայի դրդումով եղած լինէր, բայց և այնպէս յստակ ընկերային հիմունքներ ուներ — Միքաէլար Արևելքի պատմութիւնը տալիս էր արձանագրել մի նոր, իր տնտեսական և քաղաքական բովանդակութեամբ շահից դուրս խոր շարժում՝ Բիրդիստանում»:

Նկարագրելով այնուհետև 1927-ի ընթացքին թիւրք-զբղական կռիւները և այդ առթիւ վեր հանելով մի կողմից զբերդ զիւղացիութեան զործու դերը այդ կռիւների մէջ և, միւս կողմից, թիւրք կառավարութեան դադանութիւնները Բիրդիստանում՝ թիւրքը շարունակում է.

«Նկարագրւած դէպքերի վերլուծումը ցոյց է տալիս, որ այդ շարժումները ոչ թէ աւազակային են եղած, ինչպէս որ ոմանք փորձեցին ներկայացնել, այլ շարունակութիւնն են պատմագրական պայքարի: Դրան ապացոյց՝ ապստամբութեան համաժողովրդական բընոյթը և նշանաբանները: Բոլոր դէպքերը ցոյց են տալիս, որ շարժումը քաղաքական ուղիով ընդմիջ է կրում: Եւ քանի որ այդպէս է, ապա ուրեք անխափնախիթորէն պէտք է եզրակացնել, որ «խառնակիչների յաղապատմութեան» շատ քեական է և քիսում է քոյրերի հանդէպ բռնած սխալ քաղաքական ուղիից: Բիրտ ուժի անխառնառ լինելն արդէն բաւականաչափ ապացուցած է թէ՛ սալթան Համիդի և թէ՛ Նիտասարդ թիւրքերի ժամանակ. այդ ուժը ներկայիս էլ անօր է լուծելու քոյրերի ազգային հարցը»:

Այս սողերը գրեթէ՛ բոլշևիկները մոռացել էին, թէ երկու տարի առաջ իրենք է՛ն էր նշանակալի դիրք ունէին զբղական շարժումների հանդէպ: Այժմ էլ նրանք «Ջաբիա Վաստակա»-ի վերլուծութիւններն են մոռացել, որովհետև, թիւրքեայից դուրս, ո՛չ մի եր-

կրում այնքան ճիշտ չեն դործագրում քրդական շարժումը իրրև հակադեպոսիտական, յետադիմական և սուպրապոսիտական արկածախնդրութիւն ներկայացնելու, որքան Պորտրդային Երկրներում :

Այս պատճառաւորական թշնամութիւնը ներկայիս, դժբախտաբար, միայն գոյով ու խօսքով չէ արտայայտուում, այլ նաև ծանրակշիռ քայլերով : Մեր կուսակցութեան տեղեկագրից մեզ ծանօթ են քրդերի հաստատիացումները, թէ խորհրդային իշխանութիւնը ամէն աջակցութիւն ընձեռում է զերդերի դէմ գործող թիւրքական բանակին : Եթէ զերդական հաղորդագրութիւնները ո՛րէ կասկած թողնում են մեր մէջ, ես կարող եմ մեզ ներկայացնել և թիւրքական հաղորդագրութիւններ, որոնք նոյն բանն են վկայում : Այսպէս օրինակ, Յուլիս 17-ին Անգորայից հեռագրում կն Պոլսի թիւրքերին .

«Այն միջոցին, երբ Արարատ լեռան փնջերին, իգդիրի Կոնակար գաւառակի վրայ յարձակուող աշիրէքներին և այդ շրջանի մեր զինուորների միջև ընդհարումները շարունակուում էին, ռուս սահմանապահների հրամանատարը մեր հարիւրացիներն յուր զրկելով յայտնում է, թէ իմէն իր կառավարութիւնից երեսնագուէ ստացել ի հարկին մեզ օգնելու : Թուս հրամանատարը սոս պարագան հազարդիւով պատասխան է ուզում :

Մեր հարիւրացիները պատասխանում է, թէ իր ուժերը բաւական են ամէն ծաւանկ ընդատներին դիմադրելու : Այժ առթիւ նա շնորհակալութիւն է յայտնում ռուսներին այս բարեկամութեան համար» :

Կարծում եմ, ընկերներ, որ նոր մանրամասնութիւնների կարիք չէք զգում այլևս համոզուելու համար, որ բուլղերական իշխանութիւնը՝ ոտքի «ակ տաւով և՛՝ ապրելի ենքորոշման սկզբունքը, և՛՝ այ՛ նշանաբանները, որոնցով նա ազգային-ազատագրական կռիւներ է հրահրում Մարտիկց միւշև Սիւրիա և Սիւրիայից մինչև Հնդկասիա՝՝ ամենատարբի ընթացք է բունը դէպի մի փոքրիկ տողուրը, որ այսօր օրհասական պայքար է մղում թիւրքական վարպագ լծից ազատելու և մարդավայել վիճակի տիրանալու համար :

Մակայն, ո՛չ կայտաւիտական աշխարհի քարանտարներութիւնը և ո՛չ էլ պատճառաւոր բուլղերգի ինտրիգներն ու թշնամութիւնները չեն կարողացել և չպիտի կարողանան կասեցնել զերդերի ազատագրական պայքարը, որ, ինչպէս ասած է մեր կուսակցութեան տեղեկագրի մէջ, մահան և կեանքի յնդիր է դարձել զերդերի համար : Գիւրդերը ճակատագրականօրէն դրած են երկընտրանքի ստաջ. կա՛մ ազատել թիւրքական բռնապետութիւնից և կա՛մ Ֆիզիքապէս ընաճելու : Երբ կուին այս բնութիւն է ստացել, հասկանալի է, որ նա պէտք է շարունակուի, որքան էլ նրա արտաքին պայմանները անպայամ լինեն :

Ահա այս կացութեան մէջ, մեզ վիճակած է, ընկերներ, Ը. Ա. Ինտերնասիոնալի դիրքը ճշտել Գրքական Հարցի Հանդէպ : Սկզբունքօրէն այդ դիրքն արդէն ճշտում է այն բանաձևերով, որ Ինտերնասիոնալը թէ՛՛ր համազումարների և թէ՛՛ Գործադիր Կոմիտէի նիստերի մէջ քանիցս հանել է ի պաշտպանութիւն ազգերի ինքնորոշման իրաւունքի : Մեզ մնում է միայն

ճանաչել, որ քրդական շարժումը ազգային-ազատագրական շարժում է, որի անտեսումը վտանգ է սպառնում Մերձուրդ Արևելքի խաղաղութեանը, և դրան հետ միասին, բողոքի ձայն բարձրացնել թեմայական կառավարութեան քրդաջինջ քաղաքականութեան դէմ :

Այս բողոքը ձևակերպելով մեզ համար դժուար չլիարի լինի ոչ միայն այն պատճառով, որ ամէն բանութիւն և մանաւանդ արիւնահեղ բռնութիւն ո՛րէ տողովըրդի դէմ նողկալի է մեզ համար, այլ և այն պատճառով, որ ներկայ դէպքում մենք զորք ունինք թիւրքիայի հետ :

Նկատի ունեցէք, ընկերներ, որ չկայ մի հատիկ ազգ, որ թիւրքիայի տիրապետութեան տակ բարդաւաճած լինի : Եւ, ընդհակառակը, այն բոլոր ազգերը, որոնք բախտ են ունեցել ազատագրելու թիւրքական տիրապետութիւնից — սերբեր, յոյներ, ռուսացիներ, արաբներ և այլն — բարօրութեան և քաղաքակրթութեան մի-մի օջաղներ են դարձել : Եթէ գուրջ ոչինչ էլ չլինի՝ այս ազգակող պատմական փաստը բաւական է ուղղութիւն տալու մեր մտածողութեանը քրդական խնդրում : (Մաքիւր և հաւանութիւններ, բացագանչութիւններ գտնաւում կողմերից) :

Ընկ. Նայագաիի դիտողութիւնները

ՆԱՍԱԳԱՆ ԴԼ ԲՐԻԻԳԵԻՐ. Ընկերներ, մենք լսեցինք այս հետաքրքրական գեկուցումը և այժմ կարող ենք անցնել նրա զննութեանը : Սակայն, նախ քան ձայն տալը ընկերներին՝ ես կը ցանկայի վեր հանել այն դժարութիւններն ու մտահոգութիւնները, որ ներկայանում են մեզ՝ քրդական խնդրում մեր դիրքը արդէն ճանար :

Առաջին դժարութիւնն այն է, որ քրդական հարցը մեզ համար նորութիւն է, և մենք չենք կարողանում կարգել մեզ համար ո՛չ նրա իսկական բնոյթը և ո՛չ էլ նրա հետ կապած քաղաքական և ընկերային պայմանները : Ճիշտ է, մեր հայ ընկերները Մարտիկց համազումարում և նրանից յետոյ իրենց կարելին արել են մեզ տեղեկ պահելու քրդական իրադարձութիւններին. բայց պէտք է խոստովանենք, որ եւրոպական շրջներին մէջ մարդուած մեր մտածողութիւնը դժարութեամբ է իւրացնում այն խնդիրները, որոնք ոչ-եւրոպական բարձրի արդիւնք լինելով՝ մեզ համար սովորական պայքարներից տարբեր ձևեր և հանգամանքներ են առնում :

Երկրորդ դժարութիւնն այն է, որ մենք երկիւղ ենք կրում, թէ քրդական հարցը կարող է իր գուտ թիւրքական շրջանակից դուրս գալ և ընդգրկել նաև Իրաքի, Պարսկաստանի և Սիւրիայի զերդական գանգաւածները՝ միջազգային բարդութիւնների տեղիք տալով շահագրգռուած պետութիւնների միջև : Ճիշտ է, Հայկական Կուսակցութեան («Բանակցութեան») գեկուցադրի մէջ շեշտուած է, որ քրդական շարժումը այսօր ուղղում է միմիայն թիւրքիայի դէմ, բայց ո՛վ կարող է երաշխաւորել, որ վաղը նա չի տարածուի և՛՛ դէպի վերսիլիսիա երկիրները՝ պատերազմի վտանգ առաջ բերելով Մերձուրդ Արևելքի ընդարձակ տարածութիւնների վրա :

Երրորդ դժարութիւնը մի տեսակ սկզբունքային նշանակութիւն ունի մեզ համար: Ինտերնասիոնալը ազգերի ինքնորոշման իրաւունքի պաշտպան կանգնում՝ միաժամանակ ամէն առթիւ արտայայտել է այն իմաստով, թէ ինքը հակառակ է, որ այդ իրաւունքը հետամուտի գէնքով և արհեստագործութիւններով, ջանի որ սրանք կարող են պատերազմի վտանգ ստեղծել որոշ երկրներում, թերևս և ամբողջ աշխարհի մէջ: Ներկայ դէպքում, մենք կանգնած ենք, սակայն, այն իրականութեան առջև, որ ջրբերը .գէնքի կռիւ են մղում Քիւրքիայի դէմ՝ իրենց անկախութեանը տիրանալու համար: Մենք խախտած չենք լինի արեւօք մեր ըսկզբունքային կեցածքն ազգային ազատագրական հարցում, եթէ իրախուսենք ջրբերի արհեստագործ կռիւները:

Վերջապէս, իրբ մի չորրորդ դժարութիւն է ներկայանում մեզ համար այն հարցը, թէ ի՞նչ ձևով մենք կարող էինք միջամտել յօգուտ ջրբերի: Ամենակատարար միջոցը կը լինէր, անշուշտ՝ Ազգերի Դաշնակցութեան միջոցով ճնշում դրած դնել Քիւրքիայի վրա: Սակայն, ամենքդ պիտէք, թէ այս միջազգային կազմակերպութիւնը որքան թոյլ է նման ճնշումների համար, երբ ինչիւրևէ վերաբերում է Քիւրքիային, որ անգամ չէ Ազգերի Դաշնակցութեանը: Կայ նաև այն պարագան, որ նման հարցեր Ազգերի Դաշ-

նակցութեան առջև հանելու համար, անհրաժեշտ է ունէ պետութեան նախաձեռնութիւնը, իսկ ներկայիս, յօգուտ ջրբերի և ընդդէմ Քիւրքիայի տրամադրւած մի պետութիւն չկայ Հրապարակի վրա, որի օգնութեանը կարելի լինէր դիմել: Դեռ մի կողմ եմ թողնում այն հարցը, թէ այդպիսի մի պետութիւն լինելու դէպքում, մենք ի՞նչ չափով կարող էինք նրան իւրացնել տալ Ինտերնասիոնալի պահանջը ջրբերական հարցում:

Սակայն, եթէ միակ իրական միջոցը — Ազգերի Դաշնակցութիւնը — անպէտք կամ անմատչելի է ներկայ դէպքում՝ ես չեմ կարողանում հասկանալ, թէ գործնական ի՞նչ արժէք կարող է ունենալ մեր միջամտութիւնը ջրբերական հարցում:

Խնդրում եմ, որ արձանագրւած հետորոնքերը նկատի առնեն այս դժարութիւններն ու մտահոգութիւնները:

Ոսքը պատկանում է Բրոքլին (Անգլիա):
 OSSO ԲԱՍՒԻԻ (Աւստրիա). Ըստ կարգի խօսք խնդրելով՝ առաջարկում է, որ նախքան ուրիշները արտայայտուելը, ընկ. գեկուցանողն իր բացատրութիւնները տայ նախագահի դիտողութիւններին:
 Ժողովի հաւանութիւնն՝ առնելով՝ նախագահը խօսքը տալիս է ընկ. Ջամալեանին:
 (Վերջը յարգող համարում)

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Ի Շ Ո Ւ Ր Ջ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ ԹԻՒՐԳԻՈՅ ՄԱՍԻՆ

«Չգալուն» գրիչներ մրցումի ելած են իրարու հետ, պաշտպանելու համար անիրաււած, անձանօթ միացած Քիւրքիոյ դատը:

Ահաւասիկ երկու հատ և. 1.—LE VISAGE NOUVEAU DE LA TURQUIE (310 մեծադիր էջ): Հեղինակ՝ Eugène Pittard. Թանգարանապետ Ժընևի Ազգադրական Թանգարանին: Հրատարակւած այս տարի, Փարիզի մէջ: 2.—AU PAYS DU GHAZI, Հեղինակ՝ Տիկին Nôlia Pavlova. Տպ. 1930. Փարիզ (224 էջ):

Երկուքն ալ, մէկը ջիշուտ գիտական, միւսը՝ լրագրական, չափազանց անճարակութեամբ կը զգացնեն «ապպրւած» ըլլալու իրողութիւնը: Մանաւանդ Նէլիա Փավլովայի դրբին համար ունիւք վկայութիւնը նոյնիսկ Քիւրք թերթի մը:

— «Տիկին Փավլովայի «Կազիին երկրին մէջ» առում գիբքը չժախեցաւ Ֆրանսայի մէջ և այժմ տիկինը կը յաշտատի Քիւրքիոյ մէջ սպառնի գայն: Իմացայ որ այս ծառայութեան փոխարէն 5-10,000 ոսկի առած է: Նոյն ձևով էնկիւրի կը գտնուի նաև Տիկին Մառշան: (Սոն Փոտտա, 1930 Նոյեմբեր):

Միւսը, անշուշտ փրոֆէսոր, որ ուրիշ հեղինակութիւններ ալ ունի, ինչզինքը կը մասնէ յառաջարանէն իսկ — «Չօն»:

— «Թիւրք ժողովուրդին կը ձօնեմ այս համեստ արտայայտութիւնը իբրև յիշատակ մը այն ժամերուն գարս անցիկ իր ֆալ, իր մէջ: Քանի քանի անգամներ, այս ժամերը ինձի համար եղան անդրադարձում՝ Եւրոպացիի և քրիստոնեայի «Ես քեզ մեղայն» արտասանելու:

«Ռրավիետ», մեկ անգթօրէն անիրաւ եղանք, և ե՛րբ տակաւին, իրարու հետ շփոթելով Սուլթանները և ժողովուրդը, պոլիտիկոսները և պարզ մարդիկը: Մեր մոլեռանդութեամբ և անհասկացողութեամբ, անասելի քշուտութիւններ քափել տւիճք այս դժբախտ երկրին վրա»:

Սկսիւք այս հատորէն, ջանի որ «գիտական» է: Առաջին էջէն մինչև վերջինը, պ. Փիթաու առիթ չի փակցներ, երևան հանելու համար Քիւրքի և Քիւրքիային արժանիքն ու առաջինութիւնները: Եւ ամէն տողի մէջ մասնաւոր ճիշդ մը՝ արգարացնելու համար

նոյնիսկ ապացուցած, անվիճելի ճշմարտութիւններ: Որովհետև պատեհութիւն է ունեցեր ճամբորդելու Պոլսէն մինչև Տիարպէզքը, պարտականութիւն կը սեպտեմբերի 1-ին կարգի կէտայ յայպպէս թանձր տղի-տուլեան մը մէջ: Քիչ մը պատմութիւն, զիչ մը աշխարհագրութիւն, գանազան արձանագրութեանց և հուսիսանց վերլուծում, — և յետոյ թիւրքոյ գործադրներուն կողմէ յանձնած թւանշաններ, — այս բոլորը տակաւին բաւական չեն իսկապէս գիտական գործ մը արտադրելու:

Այսպէս, շուպհելով թիւրքերու «անգլիութեան» ինչդերը, կը բացազանէ սրտաուշ միատուլեանք: — Վայ կը նշանակէ միշտ միևնոյն երգ երգել: Իրար հասկնամք, սակայն: Ո՞վ անգլոյ չեղաւ, այն շրջանին երբ թիւրքերն սկսան իրենց աշխարհակալութիւնները: Յիշե՛ճք Բիւզանդիանի և յայպպիներու խաչառակութիւնները: Քիչ մը կային մեր աչքին գերանը, հարևանին աչքին շիւղը մտանուշիկ տալ: Կը բաւէ թղթատի ընդհանուր պատմութեան զիրք մը, հասկնալու համար թէ ի՞նչ էր մեր նախահայրերուն մարդասիրութիւնը:

Բաղդատուութիւնը կը սկսի Փրանսական յեղափոխութենէն, Հասնիու Նամար մինչև 1913ի գերմանական արշաւը՝ Պիթիոյ վրա: Վտորդ է որ շատ մը ուժերնէր գործեցան թիւրք բանակներուն, թիւրք կառավարութիւններուն կողմէ: Բայց միւս կառավարութիւնները արատ չունին որ կը Նամարձակինք յիշեցնել գանուշը:

Իսկ Հայալինը սարսփնե՞րը: — պիտի հարցնէք անշուշտ:

Գիտական է այս հարցումին պատասխանն ալ: — Վեր ժամանակակիցներուն մտքին մէջ կայ վայրագ պատկերը Ապտիլ Նամիրի ջարդերուն, Ելքը Հայերուն: Բայց այս տրիշ վատմութիւն է, ինչպէս կըսեն: Մեր յաջորդները, որոնց կիրքերը մագ բառն պիտի ըլլան քան մեր կիրքերը, անշուշտ պիտի գրեն այդ պատմութիւնը անաչառութեամբ, պիտի բացատրեն անոր ծնունդը իր բոլոր մանրամասնութիւններով» (էջ 21):

Ինչպէս կը տեսնէք, իբրև ջարդ Պ. Փիթաու կը ճանչնայ միայն Նամարեան շրջանի դէպքերը: Իսկ ինչ որ տեսանք 1915-ին և անկէ յետոյ, 1,200,000 ժողովուրդի զիտուն սարքած արհաւիրքով, — պարզ ելք մըն է, Ատուածաշունչի «եկից» զգրին մէկ հատածը: Անոր ալ պատմութիւնը՝ այնքան վիճելի է, որ պէտք է սպասել մեր յարդրներուն, բոլոր մանրամասնութիւններով գրողելու Նամար: Անցած տասնըհինգ տարիներն ալ բան չեն ապացուցաներ: Իբրև թանգարանապետ, Պ. Փիթաու չի կրնար Նամարիլ ո՛րևէ ճշմարտութեան, մինչև որ քանի մը հարիւր տարի անցած չըլլայ ո՛րևէ թուղթի կամ քարի, կմաքի վրա:

Եւ ո՞վ կըսէ թէ թիւրքերը միայն աւերակներ ձգած են իրենց ճամբուն վրա... Վիքթոր Հիլլիդի մէկ անտանադարի շնորհիւ է որ տարածուած է այդ առասպելը: Եւ հակառակն է ճշմարտորդ: Թիւրքերուն շնորհիւ: չէ՞ որ Պալիսը պահեց Բիւզանդիանի քանի մը մնացորդները» (էջ 21):

Բայց թողունք այս հնադրական ցնդաբանութիւնները, և թղթատեք այն էջերը ուր Պ. Փիթաու կը խօսի մեր օրերու մասին:

Իր բոլոր տեղեկութիւնները քաղած ըլլալով թիւրքական աղբիւրներէ, հեղինակը Ասիական Թիւրքոյ բնակչութիւնը կը հաշուէ 12,615,969: Կարողական թիւրքոյ բնակչութիւնը՝ 1,044,306 : Գուժար՝ 13,660,275: Գալով տարածութեան, — Ասիական Թիւրքիան՝ 738,761 քառ. զիլմեթր, Եւրոպական Թիւրքիան՝ 23,975 քառ. զիլմեթր: Գուժար՝ 762,736 քառ. զիլմեթր: Ուրեմն, 18 բնակիչ իւրաքանչիւր քառակուսի զիլմեթրին:

Ինչ որ կը կարգանք այնուհետև, նկարագրութիւնն է «թրքական հրաշքին» (Այս անունով գիրք մըն ալ հրատարակեցաւ քանի մը տարի առաջ, նոյնքան «զգայուն» հեղինակի մը կողմէ): Եւ ընդհանուր խօսքեր չէ որ կը շարէ հեղինակը, ալ թւանշաններու շարքները, նման բուլեղիկեան վիճակագրութեանց: Մինչ թիւրք մամուլը ողբ ու կոծի մէջ է 1924-ի դիմարբուցն յետոյ, և խօսք չի գտներ նկարագրելու համար երկրին տնտեսական քայքայումը, աղին, ժընճի թանգարանին մէջ, Պ. Փիթաու լեռնակրտակ թիւրքով կը ցուցադրէ անընդհատ վերելք, բարգաւաճում, զարգացում և երջանկութիւն... ամէն ճակատի վրա: Քիչ յետոյ կը տեսնէք թէ ո՛ր կը սկսի և ո՛ր կը վերջանայ այդ աճումն ու բարգաւաճումը, նոյնիսկ թիւրքի մը վկայութեամբ:

Շարունակելով իր գովարանական սողերը իբրև հաւատարիմ քարոզիչ զեմալախտութեան, Պ. Փիթաու պատահաբար կը յիշէ նաև Հայերն ու Քիւրտերը, և կուտայ կցկուտը ծանօթութիւններն անոնց ազգաբանական-գանկարանական ներքութեանց և ինամութեանց մասին, Տիւրքանակերու դուլիսին մէջ (էջ 166-176): Արդէն 1913-ին ալ, առանձին հատորով մը ուսումնասիրած է այս խնդիրը:

Հեղինակը արտասովոր բայ մը չի տեսներ Հայերու և Յոյներու հեռացման հետևանքով և ընդհակառակն այն սպաւորութիւնը կը ձգէ թէ՛ ամէն Տիւրքի մէջ ալ, Թիւրքերը յաղորած են լրացնել բոլոր պահանջները: Այսպէս, ճիգմիրի շրջանին մէջ, Հայերու և Յոյներու դաղթէն առաջ կային 8290 արհեստ և 24,250 բանուր և մասնագէտ: Այս թիւին 20,750-ը թիւրքեր էին, 3,700-ը Յոյներ և Հայեր: Տարին կը բանէր միւլին հաշիվ 992,680 քառակուսի կանգուն գորգ: 1926-ին արհեստներու թիւր կը հասնէր 11,305-ի, որոնց վրա կաշխատէին 30,490 թիւրք բանուրներ և մասնագէտներ, իսկ տարեկան արտադրութիւնը կղած է 1,184,924 կանգուն» (էջ 211):

Եւ այսպէս կարգ ու մէրդ թւանշաններ երկրագործութեան, անասնապահութեան, հանրօգուտ շինութեանց, դպրոցներու, հանրային արտադրութեանց և ամէն տեսակ ճարտարաբաններու մասին:

Միայն մէկ տարեկան բանի պատասխանը չգրտանք այս 300 հրապարտում էջերուն մէջ:

Ի՞նչպէս կըլլայ որ, հակառակ այս բոլոր բարիքներուն, զեմալական Թիւրքիան չի կրնար վճարել իր հանրային պարտքին սողուցը, չի կրնար կեբակել ժողովուրդը որուն մէջքը կըսած է սուրբերու բռնան

տակ, ի կրնար փոխ դրամ գտնել, և ընդհակառակն իր դրամին արժէքը կարենալ պահելու համար, կը հարկադրուի թէյն կամ սուրճի տեղ թծրի (ընխամուտ) հրամանել իր օտար հերթերուն...

Շատ աւելի տխուր կացութեան մը մէջ կը գտնուի Տիկին Նէշիա Փափլովա (նախկին պուլիարուհի)։ Լրագրական հասարակ տեսակցութիւն — խօսակցութիւններով, որոնք նախապէս հրատարակեցան «LA REVUE» ի մէջ, տիկինը կը ջանայ տպաւորութիւն գործել և հէջեթներ պատմել։ Եւ ահաւասիկ թիւրք իրմարդիրն է որ, Պոլսոյ մէջ իսկ, իր երեսին կը գարնէ։

— «Միայնայ որ այս ծառայութեան փոխարէն 5-10,000 ոսկի տած է»։

Այս գրքին մէջ ալ, մասնաւոր գլուխներ յատկացած են թիւրքիոյ հանրօգուտ շինութեանց և տնտեսական ձեռնարկներուն, միևնոյն ուռուցիկ թւանշաններով։ Կը նշանակի թէ՛ իրարու յաջորդող այս հրատարակութիւնները յատկապէս կոչուած են ազդելու Եւրոպայի հանրային կարծիքին վրա, ի խնդիր հանրային պարտքերու կրճատման կամ նոր փոխառութեանց։

Այս գրքին մէջ ալ, էնկիւրիի գործակալներն են որ կը խօսին Տիկին Փափլովայի բերնով, ներկայացնելով յարածուև բարգաւաճման պատկեր մը։ Կը թւի թէ տիկինը ականջը հեռախօսին տաւած, գրի առեր է ինչ որ լսեր է։ Մինչ իրական կեանքը բողոքովին ուրիշ բան կըսէ։ Օրինակ, Ազգային Տեսուարութեան գործադարը կը պատմէ թէ 1927-ին 18 միլիոն ոսկիի արտածում, 25 միլիոն ոսկիի ներածում ունեցած են։ «Սովետայութիւնը 34 միլիոն ընկեր ունէր և 40 միլիոն ոսկիի ներածում»։ Իսկ հանրապետեան թիւրքեան 11 միլիոն ընկերով ներածումը իջեցուցած է 25 միլիոն ոսկիի»։

Այնինչ ղեռ անցիւ ալ տարի, աչքի առջև ունենալով 1928-29-ի մաքսային վիճակագրութիւնները, թիւրք մամուլը կողքոր թէ՛ մէկ տարւան մէջ հարկեր միլիոն ոսկիի բաց մը կը ներկայացնէ թիւրքիոյ առևտրական կշիռը։ Եւ այդ էր մէկ պատճառը, որ արդիւնեցաւ թրջական դրամի արտածումը, ազգային խնայողութեան օրէնքներ սահմանեցան, հրաման արձակեցաւ տեղական արտադրութիւններով գոհանալու են։

Վկայութեան կանչները նաև Տէթիկ պէյը։

— «Երևակայեցէք մարդ մը որ դրամ չուզի, բայց պարտով ինքնաշարժ կառնէ։ Ոչ ինքնաշարժը պիտի քանի, ոչ ալ պարտքը պիտի վճարի։ Դրամ չուզնալուն համար անօրապետեան դատապարտած է։ Ըսմէք փաշայի երկաթուղիի քաղաքականութիւնը անա այս մարդուն կցադրեան մատնած է մեզ։ Արտասահմանի մէջ վարկ չուզնիք այլ ևս։ Միք պիտու՞ն շատ գէշ խաղաղութեան է և նյութական տեսակէտով պարտած վիճակի մէջ եմք։ Ըսմէք փաշան և ընկերները չեն կրնար բարձր կացութեան ահաբարձութիւնը» (1930 Օգոստոս)։

* * *

Բայց ահաւասիկ երրորդ հրատարակութիւն մը, բողոքովին հակառակ մեղադրութեամբ։ Այն ալ թիւրքի մը բերնով։

Դեռ վերջերս Փարիզի մէջ լոյս տեսաւ 85 էջոց հատոր մը, LES SYMPTOMES DE LA CRISE TURQUE «ՅՈՆ REMEDE: Հեղինակը՝ Հաշիմ Նահիտ, որ եղած է խմբագիր Պոլսոյ «Ռիզուտ»-ին և էնկիւրիի պաշտօնաթերթին՝ «Հաքիմէյթը Միլլիյէ»-ի։

Յառաջարանէն իսկ, պարզ է հեղինակին մտադրութիւնը։

— «Երկար ատենէ ի վեր, թիւրք ազգը ենթարկուած էր խիստ ծանր տագնապի մը և կը տառապէր աներևակայելի չարիքներէ։ Քայց վարպետութիւն հիւսւած ստուքեան քանար օդ մը կը ծածկէր Յիւարտութիւնը։ Գեղեցիկ առտու մը թիւրք ժողովուրդը, տոգորւած՝ ընդդիմութեամբ ընդդէմ կամապարտեան, պատոնց այդ օդը և իրակամութեան եղբրական տեսքը տպաւորիչ եղանակով փուխցաւ ամբողջ աշխարհի աչքին առջև»։

Կը թւի թէ Հաշիմ Նահիտ կը խօսի Տէթիկ պէյի բերնով և մէջտեղ կը գնէ փաստեր որոնք ամէն պարագայի մէջ աւելի վաւերական են, ծանօթ ըլլալով ազբերները։ Գրքին գլխաւոր նպատակն է պարզել թիւրքիոյ ներքին վէճերը և գտնել դարձանք։

Հետեինք մասնաւորապէս վէճերուն, դարձանք ձեռքը կըլով իրենց, (հեղինակը իսնջ համառօտ ծրագիր մը կը ներկայացնէ, սոփոյն և սահմանափակ յատակագծի մը վրա)։

Որո՞նք են թիւրք ազգին պժշոհութեան պատճառները։

1. Նօրինակ Ազգային Ժողովի նիստին մէջ, մարդիկ ազատ չեն քննադատելու կառավարութիւնը, ոչ ալ վիճելու հանրային գործերու վրա։
2. Կառավարութիւնը չնշած է մամուլի ազատութիւնը և անհատական ազատութիւնը։
3. Կառավարութիւնը, հակառակ երկրի սահմանագրութեան արամագրութեանց, բռնաբարձ է ժողովուրդին ընտրական իրաւունքը։
4. Բռնաբարձ է նաև արդարադատութիւնը, պղծեցութիւն բանեցնելով դատարաններուն և դատաւորներուն վրա։
5. Իր ելմտացոյցին ծախքերը զոցելու միակ նպատակով — ծախքեր որոնք չափազանց վեր են երկրին տնտեսական կարողութենէն։

ա. Ստեղծած է մեհաշնորհներ։ — բ. Երկաթուղիներու շինութեան համար ծախսած է և կը ծախսէ տակաւին մեծ գումարներ, օտար ընկերութեանց միջոցա որոնք խոշոր շահեր կընեն այդ գործէն և ըստանձնած է յանձնարարութիւններ որոնք վեր են իր վճարելու կարողութենէն։ — գ. Ժողովուրդին վրա դրած է սուրբերու բաւ մը գոր անկարելի է տանել։ — դ. Մանաւանդ չհաստատեց օրէնքով պատճառ եղած է բազմաթիւ վաճառականներու սնանկութեան։

6. Վերջապէս, իր աղետալի թրջաբանութեամբ, ինքն է ստեղծած ներկայ տնտեսական տագնապը, որ այժմ կը ճնշէ մարդը ազգին վրա։

Պոլսոյ «Յարըն» լրագիրը, որուն խմբագիրը Իզմիրը կըլով բանտարկութեան դատապարտեցաւ, կը գրէր 1930 Սեպտեմբեր 11-ին.

— «Կառավարութեան և անոր կուսակցութեան ուժին կըթնելով, մեծ գումարներ և հարստաբիւններ

շահեցան: Մարդիկ որոնք առջ մէկ ստակ չունէին, այսօր տէր դարձած են փարքաւ կալածմանը և պալատներու:

Աւելի լաւ է խօսիլ Թւանշաններով, միշտ հետեւողութեամբ հեղինակին:—

Համաձայն 1921—22էն 1929—30 եղած պիտուէններուն, ծախքերու գումարը 52 միլիոն ոսկիէն բարձրացած է 220 միլիոն ոսկիէ, իսկ 1930—31-ին 226 միլիոնի, հակառակ տնտեսական ընդհանուր տագնապին: (Վերջին ամիսներու ընթացքին միլիոններ կը խորհին 30—45 միլիոն գեղջերու):

Բաղդատական հաշիւ մը ցոյց կուտայ թէ 1921—22-էն 1929—30 տարիներուն մէջ Ազգային Պաշտպանութեան գործադարութեան նազազոյն բաժինը եղած է 45-75%, իսկ ստանալագոյնը՝ 50-76%: Վերջին երկու տարիներու ընթացքին այդ համեմատութիւնը բարձրացած է 65%ի, քանի որ հանրային պարտքին յատկացած գումարները (14%) ծախուած են դիւտորական գործերու, ինչպէս կը հաստատէ Տօթթ. Միւլէրի տեղեկագիրը:

Կառավարութիւնը իր գինապաշտ քաղաքականութեամբ, պատասխանատու է հետեւեալ շարքերուն.

1. Ամէն տարի մեծ թիւով աշխատուողներ գէնքի սակ կանչելով, շարունակաբար պակսեցուցած է արտադրիչներու թիւը, հետևաբար և արտադրական ուժը:

2. Պարտաւորած ըլլալով կերակրել մեծ թիւով սպառիչներ, որոնք նախապէս արտադրողներ էին, ամէն տարի այդ գործին համար ծախսած է մեծ մասը իր գրածին որ կրնար սահմանափակ երկրին տնտեսական զարգացման:

3. Գոցելու համար այսօրև անձ իր ծախքերը, երբորդ մահացու հարւած մը տուած է երկրին տնտեսական կեանքին. ամէն տարի ընդարձակ աստիճանի մը վրայ, աւելցուցած է արտադրիչին տուրքերու բեռը, այնքան ծանրորէն որ կարելի չէ տանիլ:

4. Օտար հրապարակի վրա գնելով մեծ քանակութեամբ երկաթուղիի շինածանիթ և շատ մը գործած առարկաներ բանակին համար, իր իսկ ձեռքով երկրէն դուրս առնած է մեծաքանակ ազգային դրամ, և ստով իսկ ազատացուցած է և՛ իր դանձր և՛ ազգը:

Հաշիմ Նահիտ չի ծածկեր որ քեմալայեցիութեան երկաթուղիներու քաղաքականութիւնն իսկ հետեւանք է իր ռազմապաշտ քաղաքականութեան: Միւս կողմէ, 1. Կառավարութիւնը չի կրնար իր սեփական միլիոններով վճարել երկաթուղիներու շինութեան ծախքը. 2. Այդ երկաթուղիները չեն կրնար ելմտական հիմ կազմել փոխառութեան մը համար, քանի որ չունին տրնտեսական արժէք:— 3. Էնկիւրի-Սըվազ գիծին շահագործման, նորագութեանց և նրկներու նորոգման ծախքեր, ծախսած դրամագրութիւն տոկոսը կը ներկայացնեն 430%, բաղդատելով հասոյթներուն հետ. իսկ Սըվազ-Սամսոն դիւն համար այս համեմատութիւնը կը բարձրանայ 680%ի:— 4. Երկաթուղիներու նրկները արտասահմանի մէջ գնւած ըլլալով, ծախքին 3/4ը երկրէն դուրս կըլլայ: (Այս բոլոր հաշիւները քաղած են Տօթթ. Միւլէրի տեղեկագրէն):

Այս ելմտական հաշիւներէն մինչև... Արարատ, ճամբան շատ հեռու է: Բայց թիւրք հեղինակը քանի մը խելօք, թէ և սահմանափակ, խօսքեր կը ծամծմէ այս առթիւ ալ:

— Վարարտի ապստամբութեան և նմանօրինակ ամէն դէպքի առաջին պատճառն է բռնութեան քաղաքականութիւնը: Թիրքիայ մէջ, այն բոլոր անասար պատճառները որոնք անհատները զանազան յանցանքներու և բազմաթիւները կառավարութեան դէմ ապստամբութեան կը մղեն, կրնան մէկ բառով բացատրուիլ:— անօթաբիւն: Կառավարութիւնը, փոխանակ բարիչաւիտ անոց կեանքին տնտեսական պայմանները, մէկ կողմէ կը ծանրաբեռնէ անտանկի տուրքերով, միւս կողմէ, առանց նկատի առնելու անոց կեանքի պայմանները, բռնութեամբ կը պարտադրէ իր կամքը, և հետևաբար, իմեն իսկ բնակչութեան ծոցին մէջ կը ստեղծէ զգազգուսթիւմ մը որ ամէն բանի ընդունակ կը դարձնէ զայն:

Քանի մը տող ալ՝ ներդաղթի քաղաքականութեան գլուխէն, և փակենք այս գլբբը, որ պատահական մէկ ճիշն է՝ արտասահման ապստամբած հակաքեմալականներու:

— Վերջին բնակիչներու սահմանափակ խտութեան և քրքական հողի ահագին տարածութեան անհամեմատութիւնը, խապան հողերը մշակելու անբաժեշտութիւնը և վերջապէս բնակիչներու թիւը արեւմտից տարրերով աւելցնելու պէտքը կառավարութիւնը պիտի մղէր ուժ ստալու Պալքանեան երկիրներու թիրքութեան դէպի Թիւրքիա ներգաղթին. բայց կառավարութիւնը չգիտցաւ գնահատել այս կենսական հարցին կարեւորութիւնը:

Քիչալով այն թիրքութեան որոնք թիրքիա կուգան, գաղթականներու տեղաւորման տեսչութեան սահմանած վայրերը դրկելու համար, անոնք ալ ամիսներ և ամիսներ կը սպասեն ցաւալի պայմաններու մէջ, այդ նոյն տեսչութեան հրաման մը ստանալու համար: Պետք է աւելցնել որ անեցմէ շատերը կը ծախսեն ինչ որ ունին իրրկ ապրուստի միջոց, իսկ գնտեղման սահմանած վայրերը յաճախ գէշ ընտրած են:

Ինչպէս կը տեսնէք, առաջին երկու գլբբերը սահմանած են Մ. Քեմալի փառքը երգելու, օտարները շլացնելու և փոխ դրամ ճարելու: Իսկ վերջինը, թիւրք մտաւորականի մը զրջով կը ձգուի նոյն օտարները համոզել թէ Քեմալին տեղ եթէ ձէժալ մը դահակալ, աւելի ապահով կը գործածուի տրեւիք փոխ գումարը...

Եւ տարբեր մեկնակէտներէ ճամբայ կլած երեք հեղինակները իրար կը դիմաւորեն մէկ հիմնական կէտի վրայ, — բարձրացնել, փրկել Թիրքեան, ուրանալով ուրիշ ո՛րեւէ իրաւունք: Ժխտել ուրիշ ո՛րեւէ ժողովուրդը՝ բացի Թիրքէն, ուրիշ ո՛րեւէ դատ, բացի թրքականէն:

Եւ տակաւին կան հաւատազոյնը թէ կարելի է լեզու գտնել թրքական այս կամ այն հոսանքին հետ, գէնքերը վար գնելով:

ՌԻԿՈՎԻՑ ՅԵՏՈՅ

Անցեալ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Մոսկուայում տեղի ունեցած ղէպգերը արժանի են յատուկ ուշադրութեան: Ճիշտ է, սահմանի այս կողմից բաւական դժուար է հանգամանօրէն ծանօթացնել կատարւած անցքերին ու լրիւ դադափար կազմել նրանց մասին, բայց այն քիչն էլ, որ խորհրդային պարիսպներից անցել ու հասել է մեզ, բաւական է տեսնելու համար, որ Մոսկուայում ուժերի նոր դասաւորում է տեղի ունեցել և որ այդ դասաւորումը, վերջին հաշուով, յօգուտ Ստալինի չէ:

Անցեալ դեկտ. 17-ին Կոմկուսի Կենտրոնական Կոմիտէի ու Կենտրոնական Վերստուգիչ Յանձնաժողովի խառն նիստում որոշուած է հեռացնել Ռիկովին ժողովուրդի նախագահի պաշտօնից և նրա տեղը նշանակել Մորոտովին:

Յայտնի է, որ Ռիկովը վաղուց արդէն չնգրքացւած էր, և նրա ազդեցութիւնը, չնայած իր բարձր պաշտօնին, հաւասարեցւած էր գերօրի, այնպէս որ նրա անկումը անսպասելի չէր: Բայց որ նրա տեղը դրւելու էր Մորոտովը — այդ արդէն բոլորովին անսպասելի էր: Ռիկովի անկման պատճառը իր աջ «թեւումներն» էին. նա համաձայն չէր Ստալինի վարած քաղաքականութեան, որի պատճառով էլ գրիւել էր դիկտատորի վստահութիւնից: Եթէ Ռիկովը որեւէ «թեքում» չունենար, այսինքն ենթարկէր Ստալինին, ի հարկէ, պաշտօնից չէր արձակւի: Հասկանալի է, ուրեմն, որ Ռիկովի տեղը պիտի զբաւէր մէկը, որը իր քայլերը ըստ ամենայնի համաձայնեցնէր կուսակցութեան «լիսաւոր դժին», որ ստել է՝ լինէր Ստալինի հրու կամակատարը:

Մորոտովը այդպիսի մէկը չէ. նա յայտնի է որպէս ինքուրոյն, կամավորութեան աստիճան յամառ ու ճակատով մարդ: Բացի այդ, Մորոտովը կոմունիստական կուսակցութեան մէջ ունի շատ ուժեղ կապեր, իսկ բանւորական շրջաններում՝ մեծ համարում: Եթէ այդ ամենի վրա աւելացնենք և այն, որ վերջերս Ստալինի և Մորոտովի միջև «սե կատու» է անցել, ապա հասկանալի կը լինի, որ ժողովուրդի նոր նախագահը այդ պաշտօնին տիրացել է, եթէ ոչ հակառակ Ստալինի ցանկութեան, զէթ որոշ զիջումներով սրա կողմից: Իսկ ով փոքր ի շատէ դադափար ունի Կրեմլի դիկտատորի մասին, պիտի ընդհանր, որ արտակարգ ու ճակատագրական նշանակութիւն ունեցող հանգամանքները միայն կարող են ստիպել նրան անել զիջումներ:

Լենինի մահից յետոյ Ստալինը ամենայն յամառութեամբ հետապնդեց մի նպատակ — տիրանալ իշխանութեան: Կանգ չառաւ ոչ մի միջոցի առաջ. նենդութեամբ տապալեց իր երկնայ ընկերներին, աքսորեց, բանտարկեց ու ասպարէզը մտքերը բոլոր ընդունակ, բայց իր նպատակի համար վտանգաւոր ուժերից: Այդ պայթարի մասին դադափար կազմելու համար բաւական է իշխատակի լով անունները կուս-

նիստական այն կուռքերի, որոնք ընկել են Ստալինի հարւածների տակ — Տրոցկիի, Բուխարին, Բազէկի, Կամենև, Ջիլովի, Տոմսկի, Ռիկով: Եւ, վերջ ի վերջոյ, տարիների սաղաթնքներով լի պայթարից յետոյ, Ստալինը հասաւ իր նպատակին՝ դարձաւ ինքնիշխան դիկտատոր: Ի՞նչ պատահեց, որ այդ ամենից յետոյ նա համաձայնում է վարչապետի պաշտօնը յանձնել մի մարդու, որը ժողովուրդայէս իր նկարագրին ունի: Այդ վարմունքը հասկանալի կը լինէր այն ժամանակ, երբ Մորոտովը նրա աջ բարոնէն էր, սակայն, այժմ, երբ ընդամենը մի քանի ամիս առաջ արշաւանք էր սկսել Մորոտովի դէմ և պատրաստութիւններ էին տեսնուած նրան ևս տապալելու, այժմ նրան այդքան պատասխանատու պաշտօնի կրօնքը շատ մեծ անակնկալ է:

Ի՞նչ է պատահել:

Այդ հարցին պատասխանելու համար յամառօտակի վերջիչնքը անցեալ նոյեմբերին Մոսկուայում տեղի ունեցած ղէպգերը: Սկզբնքը հեռուոր լուրերը հասան մեզ, որ բուլչեիկեան մայրաքաղաքում ինչ որ անկարգութիւններ են տեղի ունեցել. մի քանի օր անցած այդ լուրերը աւելի որոշ կերպարանք ու ձև առին — իբր թէ Մոսկուայի քաղաքային գործաւոր ըմբոստացել է իշխանութեան դէմ, տեղի են ունեցել դանդաղացիկ ձերբակալութիւններ և, վերջապէս, լուր ստացեց Ստալինի սպանութեան մասին: Լուրերը, այնուամենայնիւ, անորոշ էին ու հակասական, և խորհրդային իշխանութիւնը օգտագործեց այդ հանգամանքը. Ստալինը Վորոշիլովի հետ միասին երևաց օտար թերթերի աշխատակիցներին և այդպիսով ցոյց տեց, թէ որքան անհեթեթ են տարածւած լուրերը: Խորհրդային թերթերը ազմկեցին հրատարակել՝ բուրժուական աշխարհը մի անգամ ևս իսպառականութեան սիւնին գամելով: Բայց կարճ ժամանակից յետոյ պարզեց, որ լինեալ լուրերը այնքան էլ անհիմն չէին և խորհրդային թերթերը, ըստ սովորականի, յետին թելով ու եզովպոսեան լեզուով խոստովանեցին, որ դաւաբորութիւն է տեղի ունեցել և որ այդ առթիւ բանտարկուել են մի շարք աջիկ ընկնող կուսակցական գործիչներ: Վերջ ի վերջոյ, իմացեց, որ դաւաբորութիւնն այս անգամ ունեցել է արտակարգ ճանաւորութիւն՝ իր մէջ առնելով Ստալինի մօտ մարդկանց, ու բացել և միայն վերջին ժամին:

Կարմուէլ է միութիւն աջ ու ձախ հոսանքներից, որի գլուխ կանգնած է եղել Ստալինի մօտ բարեկամ Սիրցովը: Միութիւնը նպատակ է ունեցել վերջ տալ գերդի թալանին, մեղմացնել կուսակցութեան դիկտատորան, ընդլայնել խորհուրդների իրաւունքները, ինչպէս նաև բարեփոխել գիւղի ընտրական օրէնքը յօդուր գիւղացիութեան: Շարժման մասնակցիկն են եղել անազին թելով շարքային կուսակցական գործիչներ: Դաւաբորութեան մտքը են գործել Մոսկուայի պահակաւոր

գործի մէջ և բուն են դրել այնտեղ: Մեծ քանակութեամբ Թուրքիկներ են բայ թողել: Շարժման ոգին եղել է Սիբցովը — Կոմունիստական Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ և Պորճրալայի Ռուսաստանի Ժողովուրդի նախագահը: Բայց զեռ այդ ամենը չէ: Պետելով այդ դաւադրութեան մասին Ս. Դիմիտրիևսկին*) պնդում է, որ Ստալինն ինքն է սարքել այդ դաւադրութիւնը: Ամենակարևորն այն է, որ Սիբցովի դաւադրութիւնը միաժամանակ և Ստալինի դաւադրութիւնն է:

Որքան և ընտելացած լինենք Ստալինի և, առհասարակ, Կոմունիստական Կուսակցութեան ղեկավար շրջանների այլանդակ վարմունքներին, այնուամենայնիւ առանց դարմանքի չէ, և կորզում ենք երէկայ կոմունիստի այս հաւատարմութիւնը: Որպիսի՞ խայտառակ կացութիւն պիտի ստեղծած լինէ իրեն համար երկրի դիկտատորը որ միջնջ դուրս դալու համար հարկադրած լինէ հէնց իր դէմ դաւադրութիւն կազմակերպել, հարկաւ, այն հաշուով, որ այդ դաւադրութիւնից միայն ինքն է օգտուելու՝ ի գին ուրիշների կեանքի ու հալածանքների: Կոմունիստական վարդապետութեան առանցքը այժմ կազմում է իշխանութեան աթոռը. բոլոր՝ իմիջնեղը ներքիլի ու թոյլատրելին են այդ աթոռը պահելու համար:

Այլ թեքման պարագլուխների հետ իր հաշիւը մաքրելուց յետոյ, երկիրը անտեսական փակուղուց հանելու և այդպիսով իր գիրքը ամբացնելու նպատակով՝ Ստալինը որոշում է իր իսկ ձեռքով իրազործել աջերի առակարկած ծրագիրը — մեղմել ճարտարաբանասացման թափը և համաձայնութեան գալ դիւղացութեան հետ: Բայց ինչպէ՞ս արդարացնել սեփական այդ «թեքումը» Կենտրոնական Կոմիտէի առաջ և ըստանալ նրա համաձայնութիւնը: Կենտրոնական Կոմիտէն, որի ավակցութեամբ Ստալինը հրապարակեց զէջն այլ «թեքում» ունեցողներին և որի մէջ Մոլոտովը, իբր ձախ մտածող, ունի շատ կողմնակիցներ, հազիւ թէ իւրացնէր երէկայ իր դատապարտած ծրագիրը: Հարկաւոր էր որևէ ցնցող ու ահաբեկող միջոց՝ Կենտրոնական Կոմիտէն համաձայնութեան բերելու համար: Այդ տեսակէտից «քանգաւանների ըմբոստութիւնը» ներշնչող զեր կարող էր կատարել: Ստալինը լաւ է ճանաչում իր կուսակցական ընկերներին և գիտէ թէ երկրի սպոստամբութեան ուրախանող որպիսի՞ սարսափ է ազդում նրանց: Եւ հա՛ս դիկտատորը «մասսաները» ոտքի հանելու հոգան է տեսնում: Գործի կազմակերպումը յանձնում է Սիբցովին: Սա Ստալինի գիտութեամբ ու համաձայնութեամբ մի գիրք է գրում, որով հող է պատրաստում նոր փոխիտութեան համար: Այդ գիրքը հարկեր հազար օրինակներով տպւում է պետութեան հաշիւով: Նրա մասին յայտարարութիւններ ու թուուցիկներ են տպւում ԳՊՈՒԻ տպարանում, որոնք ցրւում են դործարաններում և այլուր: Նոյն ԳՊՈՒԻ

դործակաշների ձեռքով: Սիբցովը հրահանգ է ստանում կապ հաստատել աջերի հետ ու համաձայնութեան գալ նաև ձախերից ոմանց հետ, կապել բանակի հրամանատարութեան հետ և այլն:

Գործի անցնելով՝ Սիբցովը աշխատում է մեծ եռանդով, որի հետեանեղով ստեղծում է դաւադիր բլիշներին մի ամբողջ ցանց՝ տարածւած լայնածաւալ երկրի մի ծայրից միւսը՝ իր մէջ առնելով ազգաբնակչութեան բոլոր խւերի և դասերի ներկայացուցիչներին: Որչա՛ած ժամին այդ բազմութիւնը պիտի շարժուէր՝ ներկայացնելով Ստալինի կողմից Սիբցովի միջոցով իր բերանը դրած պահանջները: Չանգաւանային այդ շարժումը Ստալինը պիտի օգտագործէր իր նոր նպատակների համար: Կայր... «Ստալինը է նկատի չի առնում միայն մի բան — որ Սիբցովը պատկանում է երիտասարդ սերնդին, դատախարակած է յեղափոխութեամբ, պատրաստ ամէն բանի և կարող է այլևս չկամենալ դործից լինել ուրիշի ձեռքին», գրում է Դիմիտրիևսկին:

Հէնց այդպէս էլ պատահում է: Սիբցովը ընդունում է Ստալինի ծրագիրը ամբողջովին, միայն ծրագրից դուրս է ձգում իրեն՝ Ստալինին. ալ թեքումը պիտի կատարէր առանց դիկտատորի: Այդ մտքով էլ Սիբցովը համաձայնութեան է գալիս դաւադրութեան ղեկավարների հետ: Ստալինը այդ մասին իմանում է միայն վերջին ժամին, երբ այլևս ժամանակ չէ ունենում Սիբցովին և ընկերներին՝ դիւանագիտական ճանապարհով, առանց աղմուկի մէջուղից վերացնելու, և թմբակահարում է դաւադրութեան մասին: Սիբցովը և աջեր ընկնող դաւադիրները ջլւում են գործից, շատերը բանտարկւում են, Մոսկուայի կայսրգորի մի մասը քաղաքից հեռացում է, Կրեմլի պահակը ուժեղացւում է:

Այսպիսով, Սիբցովի դաւադրութիւնը հաշիւարդարի է ենթարկւում, բայց դրանով շատ բան է կորցնում ինքը Ստալինը. նա զրկւում է այն ուժերից, որոնց վրա յենում էր կուսակցական մարմիններում և անցկացնում իր տեսակէտները:

Ստեղծած պայմաններում գումարելիք Կենտրոնական Կոմիտէի լիազուժար նիստում Մոլոտովը կատարեալ յաղթող կարող էր դուրս գալ. պէտք էր յետաձգել այդ նիստը և բանակցութեան մէջ մտնել Մոլոտովի հետ: Այդ բանակցութիւնների արդիւնքը արդէն յայտնի է. Մոլոտովը դրաւել է Լենինի աթոռը:

Պորճրալային աշխարհը ցնծութեամբ ընդունեց Մոլոտովի յաղթանակը: Այդ ցնծութիւնը անուղղակի կերպով ուղղւած էր Ստալինի դէմ: Արտասանւում են հտներ, որոնք առջ անհնարին էր իտեսել: Պորճրալ. Ռուսաստանի Ժողովուրդի նախագահ՝ Սուլիմովը Համախիութեանական Կենտր. Գործադիր Կոմիտէի նիստում խօսած իր ճառում բաւական թափանցիկ արտաստութիւններով հասկացնում է, որ որքան էլ մեծ են Ստալինի արժանիքները, այնուամենայնիւ ամէն բան նա չի արել: Ինքը Մոլոտովը և, նրան արձագանգելով, խորհրդային թիւրքերը դժգոհութեամբ մատնանշում են, որ խորհուրդները շատ տեղերում ենթակայ են կուսակցական մարմիններին, որ նրանք դարձել են մի տեսակ տեսիլբաղան կերպեր՝ օրի-

*) Խորհրդային մայիսին դիւանագետ և արտաքին գործալարութեան քաղաքական քաժմի երկարամեայ վարիչ, որ քայքայածօք է Մոսկուայի անդուգարձին ու տիտղոսաւոր կոմունիստների քարտ և վարժին: Վերջերս միայն հեռացաւ Կոմկուսի շարժարից:

նականացնելու համար կուսակցական մարմինների որոշումները, և որ այդ ամենին վերջ պէտք է տալ:

Սրանք որոշ ապացոյցներ են, որ Մոլոտովը այնքան էլ արամադիր չէ իր վարչակազմի իրաւունքները զիջել Ստալինին և, կարծես, ցանկանում է վերականգնել այն դրութիւնը, որ կար Լենինի օրոք: Բայց այս կտորը դեռ շատ ջուր կը վերցնէ. մենք գիտենք, թէ ինչ պտուղ է Ստալինը: Միբոլորը նրան անակնկալի բերեց, ուր երէկայն միահեծան դիկտատորը ստիպւած

կգա տեղի տալ Մոլոտովի առաջ: Սակայն, անկասկած է, որ նա նորից ամբացնելու է իր դերքերը՝ հարաւածելու համար Մոլոտովին:

Մոլոտովն իր տեղը պահելու առաւելութիւններ չառ ունի, բայց Ստալինը յայտնի է իրը ճարպիկ բանասարկու ու նենգ զաւարդող, և դժուար է գուշակել թէ զեռ ի՞նչ յաղթանակներ պիտի տանին բախուող կուսմերը: Ամէն պարագայի տակ կոմկուբը յոյ է նոր անակնկալներով:
Ա. ԱՍՏԻԱՄԱՏՐԵԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

ԴՊՐՈՑ, ԸՆՏԱՆԻՔ, ԵԿԵՂԵՑԻ

Հայաստանից դեկտեմբեր ամսին ստացւած ընդարձակ գեկուցումից քաղաւ քնք հետեւեալ մասերը դըպրոցի. ընտանիքի և եկեղեցու մասին:

Վերկիւրը բոլշևիկների ձեռքն ընկնելուն պէս, ինչպէս ամէն բան, դպրոցական գործն էլ հիմնովին քանդուց նորը կառուցանելու համար: Դիւղերում բացւեցին միգասեան և երկդասեան կամ, ինչպէս իրենք են կոչում, առաջին և երկրորդ աստիճանի դպրոցներ և ուսումը յայտարարեց ձրի ու պարտադիր: Դպրոցական Ֆոնդը հիմնելու պատրակով զիւղի հողերից առին հինգ դեսեստին առաջին տեսակի հող: Ցուցակագրեցին զիւղացիութիւնը և ստրեկան հինգ ըրուրի տուրք դրին յօգուտ դպրոցական Ֆոնդի: Պետականացրին առաջնակարգ տները և դարձրին դպրոցներ: Վաստակել կոմսոմոլներից դպրոցներում կազմակերպեցին դասարանական ու դպրոցական կոմիտէներ, որոնք դպրոցի վարչական մասի տէրն ու տնօրէնն էին: Պահանջւած չափով պատրաստւած ուսուցիչներ չկային, ուստի դպրոցները լցրին կիսաքաբազտ ուսուցիչ-ուսուցչուհիներով: շատերը իրենց անուանագրանունը ճիւղ գրել չգիտէին: Առարկաներից թողին հայոց լեզու, ուսաց լեզու և Թւարամութիւն: Օրինաւոր դասադրքեր չկային: Մեծ մասամբ յօղաւածները գրւած էին Լենինի, Կամենեւի, Ռիկովի, Ջինովիեի, Տրոցկու և այլ կոմիտարների կեանքից ու գործունէութիւնից, երբեմաների հոգուն անմատչելի ու անհարազատ թխովի նիւթեր: Այսպէս տեղց գրութիւնը մինչև 1925 թւականը:

1925-ից սկսուած է մի նոր շրջան, երբ Հայաստանի դպրոցները վերածուցնին իսկական Արշակաւանի: Աշակերտութեան մէջ կատարեցին գտում. ունեւորների և ծայնագործների երեխաների մուտքը դպրոց արգելուց, որով խախտեց ընդհանուր և պարտադիր ուսման սկզբունքը: Աշակերտների վրա դրին թոշակ և դրենական պիտոյքների ծախսը, որով ոտքի տակ

արեց և ձրի կրթութեան զաղափարը: Ուսուցիչների ոտճիկների և ճանապարհածախսերի վրա վատուցեցին դպրոցական Ֆոնդի կոմսոմոլները, որոնցով պէտք է զպրոցական չէնքեր կառուցէին:

Ձտման ենթարկեցին և դասարանական ու դպրոցական կոմիտէները, որոնք դերն է հսկել աշակերտների բարք ու վարքի վրա: Իրօք, այդ կոմիտէները Ձեկայի գործակալութիւններն են: Նրանք ականջ են դնում աշակերտների խօսակցութիւններին, և եթէ մէկը ու մէկը հակախորհրդային արտայայտութիւն է ունենում, ո՛չ միայն նրան վտարում են դպրոցից, այլ և վտանգի են ենթարկում նրա ամբողջ տունը: Կոմիտէները երեխաների միջոցով նաև տեղեկանում են տներում եղած անց ու դարձերին և խօսակցութիւններին և յայտնում են ուր հարկն է: Հսկում են լրտեսում են նաև ուսուցիչներին: Թերուս ուսուցիչների մէջ էլ թիչ չեն մարդիկ, որոնք իրենց տէրերին հաճոյանալու նպատակով, հէնց առաջին բաժանմունքից ըսկած, երեխաների գլուխը լեցնում են բոլշևիկեան ցնդաբանութիւններով, կոմունիզմի մասին դասախօսութիւններ են կարդում երեմն շատ պարճալի ձևերով, խօսում են զաղաքական հարցերի մասին, աշխատում են աշակերտներից թլիչներ կազմել:

Ցաւով պէտք է արձանագրել և այն, որ ուսուցիչներից շատերը նոյնպէս Ձեկայի գործակալներ են՝ ոմանք հարկադրանքի տակ, ուրիշներ տնտեսական ծանր դրութեան հետեանքով. նրանց ստացած ոտճիկը ամսական 50 ըրուրի չի բաւարարում, և խեղճերը դիմում են զգուշի միջոցների մի կտոր հաց ապահովելու համար:

Հասկանալի է, որ այսպիսի մթնոլորտում սովորող երեխաները դառնում են անձնազնիւ, լկտի ու տգէտ: Եւ իսկապէս, զիւղական նոր սերնդի մտաւոր դարգացման մակարդակը շատ ցածր է: Վերջերս, բարբախտաբար, սկսուած է նկատուել որոշ սթիփում:

Աւակերտութիւնը ազատ և բացարձակ պահանջում է, որ իրենց բան սովորեցնեն:

Աւելի սարսափելի է ընտանիքի դրութիւնը: Ո՛չ մի բան բոլշևիկները այնքան արագօրէն չբացայայեցին, որքան ընտանիքն ու ընտանեկան սրբութիւնները: Ամենահասարակ խրճիթից սկսած՝ ամէն տուն առնւած է լրտեսական ցանցի մէջ: Գործիք դարձրին նոյնիսկ Լուիսանայի, որոնց միջոցով իմանում են, թէ ի՞նչ են անում կամ ի՞նչ են մտածում ծնողից: Մուսկոյի չարական, մարտական, եղբայրական զգացմունքները: Քանի՞-քանի ընտանիքներ դժբախտացան, քանի հարաւոր մարդիկ աջորւեցան, գնդակահարւեցան իրենց սիրասուն գաւակների՝ փողբիկ լրտեսների մատնութեան հետեանքով: Այժմ այդ թշուառներ կամացկամաց դիտակցութեան են դախիս:

Մինչև 1925թ. ամուսնական և ընտանեկան կեանքը ընթանում էր ըստ սովորականի, բայց այդ թուականից սկսած ամէն բան փոխւեց: Վերացւեց ընտանեկան սրբութեան զաղափարը, խախտւեց ամուսնական կեանքը և սկսեց Ջագս* կոչւած հիմնարկութեան անբիշ գործունէութիւնը: Օրական հարիւրաւորներ մտնում են այնտեղ ամուսնանալու նպատակով, նոյնքան էլ ամուսնալուծութիւն պահանջելու համար: Բարդ ձեւականութիւններ չկան այնտեղ. պէտք է միայն մտնել, որը հարցարան լեցնել, տուրքի զուժարը վճարել և պրծնալ: Կարելի է ի բացաղկայութեան ամուսնալուծութիւն ստանալ. բաւական է միայն յայտարարութիւն տալ: 10 վայրկեանի մէջ կարելի է ամուսնանալ կամ ամուսնալուծուել: Եւ մինչև 1929 թականը կենթը դարձաւ այնպէս, որ ոչ ոք վստահ չէր, թէ մի ժամից յետոյ իր կինը կամ ամուսինը չի՞ գտնի մէկին ու Ջագս չի՞ վազի: Դատարանները օրն ի օրն զբաղւած էին ամուսնական պահանջներ քննութեամբ: Բանը հասաւ այնտեղ, որ բոլշևիկներն իրենք էլ զգացին դրութեան անհեթեթութիւնը և սկսեցին աւելի լուրջ ուշադրութիւն դարձնել ամուսնալուծման խնդրին, զիջաւորապէս անտեսական կողմին: Այժմ կիրաւուում են հետեւեալ պայմանները.

Ամուսնալուծման դէպքում երեխաների իրաւունքը հօրն է պատկանում: Եթէ երեխան փոքր է, մնում է մօր խնամքին, մինչև 3 տարեկան հասակը, որից յետոյ հայրը պարտաւոր է առնել: Քանի կինը մի ուրիշի հետ չի ամուսնացել, թէկուց և ուրիշ տեղ պաշտօն ունենայ, ամուսինը պարտաւոր է իր ռոճիկի կամ տա-

րեկան եկամուտի կէսը տալ կնոջ: Բաժանման ժամանակ տան իրերի և, առհասարակ, շարժական կալքի կէսը պատկանում է կնոջ: Եթէ ամուսնալուծման հարց յարուսցնողները կոմունիստներ են, նրանց հանդէպ ևս կիրաւուում է վերոյիշեալ կանոնը, իսկ եթէ մէկ կողմն է միայն կոմունիստ, հարցը վճուում է յօգուտ կոմունիստի՝ անկախ նրանից թէ որ կողմն է արդար: Եկեղեցական ծէսով պատկելու կամ թաղում կատարուել համար քահանան անպայման պէտք է ունենայ Ջագսի արտօնադիրը: Եկեղեցական պսակն ու թաղումը, ի հարկէ, քաղաքացիական ո՛չ մի արժէք չեն ներկայացնում:

Եւ, առհասարակ, եկեղեցին Հայաստանում, ինչպէս ողջ Ռորհը. Միութեան սահմաններում, ամենարհամարհւած և ծաղր ու ծանակի առարկայ դարձած հաստատութիւն է: Բոլշևիկներն ամէն կերպ աշխատում են վերջ տալ նրա գոյութեան: Պայքարը կրօնի ու եկեղեցու դէմ կառավարական զործ է: «Անաստաւածների Միութիւնը» զործում է կառավարութեան աջակցութեամբ. «անաստաւածների» մամուլն ու զբաղմունքիւնը հրատարակում է կառավարական դրամներով: Հոգևորականութիւնը Հայաստանում ամենից աւելի արհամարհւած տարրն է. և դեռ զարմանալ պէտք է, որ գտնուում են հոգևորական դառնալու ցանկութիւն ունեցող մարդիկ: Եկեղեցիները փակուում են, իբր թէ, ժողովրդի ազատ կամքով, մինչդեռ իրապէս բռնութեամբ է կատարւում փակումը:

Ահա, սովորաբար, ինչպէս է կատարուում եկեղեցիների փակումը: Կենտրոնից եկած հրամանի վրա գիւղի մի քանի կոմսոմոլներ, դժուր ու գուռնան յետմարդկանց ու մտնում եկեղեցի: Մէկը վեր է կենում և ճառ խօսում եկեղեցու, կրօնի, Աստծու դէմ և կանչում է՝ «Կորչի՛ կրօնը, կեցցէ՛ անաստաւածութիւնը»: Ապա առաջարկում է. «Ովքեր համաձայն են փակել այս մեզ կուրացնող հաստատութիւնը, թո՛ղ մատ բարձրացնեն»: Թէ ջալ ես՝ մի՛ բարձրացրու: Ի հարկէ, ամենքն էլ բարձրացնում են: Եւ եկեղեցին փակուում է: Եւ անմիջապէս հեռագիրը հաղորդում է կենտրոն, թէ է այս ինչ գիւղի հաւատացեալները միաձայնութեամբ որոշեցին փակել իրենց եկեղեցին և այս որոշումը սուսնց դժուր-գուռնայով: Յետոյ՝ «Վերջ մտնում հրաւէր» է ուղղում հարեան գիւղերին ևս փակել իրենց եկեղեցին: Հարեաններն էլ ստիպւած են նոյն ձևով վարել, թէ չէ...

Եւ հետևանք լինում է այն, որ եկեղեցիները փակուում են, հոգևորականներ ենթարկուում են հայածանքի, իս կիրճամալութիւնը աւելի և աւելի սաստկանում է, նախապաշարումներն ու սնտոխապաշարութիւնը աւելի են տարածուում ու խորանում հայ գիւղերում: Որվհետև հալածել նշանակում է տարակուսել:

*) Ջագս անւերիմ Запись актов гражданского состояния բառերի սկզբնատարից կազմւած բառ է, որ նշանակում է քաղաքացիական վիճակի վաւերագրերի արձանագրութեան վարչութիւն:

Յ. Յ. ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԷՆ

ՍԵՒ-ՔԱՐԵՑԻ ՍԱԲՕԻ ԻՆՔՆԱԿԵՆ ՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

IV

«Դրօշակ»-ի անցեալ տարւոյ մարտի իւով հրատարակեցինք Սաբօի ինքնակենսագրութեան երրորդ մտար: Մեզանց անկախ պատմաագնորդ չկարողացանք տալ շարունակութիւնը: Այժմ ի վիճակի ենք ներկայացնելու ինքնակենսագրութեան յաջորդ գլուխները ամբողջապէս: Ընթերցանութեան կապը վերականգնելու համար յիշեցնենք, որ նախորդ գլխում Սաբօն պատմում է համասարի արշաւանքի մասին, ապա իր վերադարձը Կովկաս, Հ. Յ. Գ. երկրորդ Ընդհանուր ժողովը 1898թ. Թիֆլիսում, իր ճամբարութիւնը Կարին և Կարմից մեկնումը դէպի Մուշ: Ճանապարհին սիրանում է կարաւանին և կայարաններից մեկում, գիշերը, լսում է թիւրք հայկապետի պատմութիւնը վանեցի հայ երիտասարդ ջան-ֆիդայի մասին:

ԽՄԲ.

Առաւօտեան նստեցինք ձիերը և շարունակեցինք մեր ճանապարհը: Հրաշալի էր Բիրակինեան սարերի ստորոտը: Անցնում էինք Շուշարաց գաւառով: Երբեմն հանդիպելով հայ զիւղերի՝ հասանք տաք ջուրը, Ս. Կարապետի ճանապարհի վրա: Այդտեղ մէկ մարդու հասակ խորութեամբ, 10 ոտնաչափ լայնութեամբ և 15 ոտնաչափ խորութեամբ աւազան կար շինած: Ս. Կարապետի վանքը իր ծախսով շինել էր այդ աւազանը Ռուսաստանից եկող ուխտաւորների համար: Այդտեղ ինչանցեցինք, 15 րոպէսում տաք ջրի մէջ ձու խաչեցինք ու կերանք:

Միւս առաւօտ շարունակելով մեր ճանապարհը՝ երեկոյեան հասանք Կալա հայաբնակ գիւղը: Գիւղից ոչ հեռու, դէպի արևելահարթ, դաշտի մէջ, գտնուում է մի սար, որ տեղացիք անւանում են Սոսիի սար: Այդտեղ էլ ինչանցեցինք: Կարաւանը կանգնելուն պէս, իսկոյն, մենք մեզ համար թէյ պատրաստեցինք ու սկսեցինք խմել: Այդ ժամանակ մեզ ձու եկան մի քանի զիւղացիներ, որոնք հետաքրքրութեամբ սկսեցին հարցնել, թէ ի՞նչ մարդիկ ենք և ո՞րտեղից ենք գալիս: Ընկերս՝ Տիգրանը՝ պատասխանեց, թէ մշեցիներ ենք և պանդխտութիւնից ենք վերադառնում: Գիւղացիներց մէկը աւելի ևս մտանալով մեզ՝ ասաց. «Ախրէ՛ր, մենք մեռանք. դուք լսած կը լինէք՝ ի՞նչ կայ, ի՞նչ չկայ»: Տիգրանը պատասխանեց. «Ախրէ՛ր, մեզմէն ի՞նչ կուղէք. մենք սիլաչի (բանոր) մարդիկ ենք»: Գիւղացին աւելի ևս հետաքրքրուեց մեզնով և ասաց. «Ախրէ՛ր, զիտնեք, որ սիլաչի էք, բայց նորութիւններն էլ հէնց ձեզ պէս մարդկանցից կարելի է իմանալ: Կասի՞՛ր ոտեր կը դալ: Կասի՞՛ր՝ Ընկերութիւնը կը դալ: Ասածուն սիրուն, մեռանք, է՛»...

Գիւղացու այս պարզ խօսքերը յուզեցին ինձ, բայց ի՞նչ կարող էի անել: Չէի խօսում, որովհետև վախեռում էի, որ լեզուս կիմանան օտարական լինելս:

Թէյից յետոյ, զիւղացիներն սասցին, որ իրենց զիւղում մի հիւանդ վարժապետ կայ, և առջարկեցին դնալ տեանել: Ես շատ ուրախացայ, որ այդպիսի մի յետ ընկած տեղում հայ զիւղացին դպրոց ու վարժապետ ունի: Ես հետս ունէի ճանապարհորդական քոչկարան: Հարց ու փորձ արի, իմացայ ինչից հիւանդացած լինելը և Տիգրանի ու Մխիթարի հետ մի քանի պարզ դեղեր ուղարկեցի: Մի քանի ժամից վերադարձան և լուր բերին, թէ Աղբիւրը իր խմբով եկել է ինձ դիմաւորելու Ս. Կարապետի վանքում և վարժապետին պատերիչ է, որ մեզ յարմարութիւններ տայ Ս. Կարապետ դնալու համար: Ես, ի հարկէ, չէի կարող կարաւանից հեռանալ, որովհետև ձին վարձել էի մինչև Ս. Կարապետ: Եւ բացի դրանից, կարող էի կասկածի տակ ընկնել: Այդ պատճառով կարաւանից չհեռացայ:

Այդտեղից բաժանուած էր Տիգրանակերտի ճանապարհը: Կարաւանը բաժանեց երկու մասի. Հարիւրապետը դնաց Տիգրանակերտի գծով: Միւս օր մենք Օվալի կողմ գիւղի վրայով անցանք դէպի Ս. Կարապետի լեռները: Ճանապարհին հանդիպում էինք բազմաթիւ ջիւղը վրանների: Մեզ հետ կար մի վաճառական՝ Հաճի Կարապետ, որին կոչում էին Մահտեհի Կրպօ: Թէչիկ (իլիկ) էր ծախում: «Թէչիկ պիտի» պորտալով անցնում էր վրանների միջով: Քրդուհիները ամէն կողմից վազելով՝ ուրախ-գարթ հաւաքում էին շուրջը, և հաճին իր թէչիկները փոխում էր իւղի ու պանրի հետ:

Վերջացնելով իր առևտուրը՝ Հաճի Կրպօն դարձաւ ինձ և ասաց. «Ո՞ր կուղէ, թէ ջիւղը վատ է. տեսա՞ր՝ խաբեցի և ինչքան իւր ու պանրի հաւաքեցի: Եթէ հայ լինէին, այսքան բան կը հաւաքէ՞ի»:

Մի քանի ժամից յետոյ, հասանք Հաւատացելոց սարի գագաթը, որտեղից մեր առջև բացեց ամբողջ Մշոյ դաշտը իր բազմաթիւ զիւղերով: Ես կարողացել էի հանգուցեալ Գարեգին եպ. Սրանձտեանի գրածները և աչքերս չորս արած՝ հեռատեսակով նայում էի այդ զիւղերին: Տիգրանը կողջիւ՛մ մի առ մի բացատրում էր: Այժմ չկար այն ոգևորութիւնը, որ նկարագրել էր Սրանձտեանը: Սոխակի տեղ բուերի երամները և աչքերս չորս արած՝ հեռադիտակով նայում էի աւերած էին: Մի զիւղում հարկ թէ 3-4 երդիկից ծուխ էր բարձրանում: Ինչո՞ւ էր այսպէս: Տիգրանը ասաց, որ կոտորածից յետոյ ժողովրդի մեծ մասը անցել է Տիգրանակերտի կողմերը ևս Ռուսաստան: Իսկ մնացողները 3-4 ընտանիք պարում էին մի տան մէջ՝ աղքատութիւնից ու ջրղերի վախից:

Հաւատացելոց սարից երեւում են Սուրբ Կարա-

*) Տես «Դրօշակ», 1930թ. մարտ:

պետ, Սուրբ Յովհաննէս ու Առաքելոց վանքերը, Սասնոյ Անտը լեռը, Սիփանը, Նեմրուժը, Եփրատն ու Մեղրագեղը, որոնք միանում են Արշակ գիւղի մօտ և Ոլոր մուրը հոսում Մշոյ դաշտով: Ար, տխուր է, շատ տխուր է Մշոյ դաշտի տեսարանը:

Ս. Կարապետի հօտերը փուլած էին սարի ստորոտում: Հովիւը մեզ տեսնելով՝ մի պիտակ դառ ընտրեց և մեզ մօտենալով՝ հարցրեց. «Ախրա՛ր, որտեղ է՞ն կուգաք»: Մխիթարը պատասխանեց. «Ղարիբութենէ»: Հովիւը տալորիկից էր: Ես որ լսեցի երիտասարդ հովիւի տալորիկիցի լինելը, շատ ուրախացայ և հարցրի. «Ի՞նչ կայ ձեր կողմերը. ինչո՞ւ ես այտուղ եկեմ»: Հովիւը առանց քաշմելու պատասխանեց, թէ՛ «Ախրաբս եկած էր վանքը Ռուսիայէն մէկը սպասելու համար: Եկողը ուշացաւ, և կառավարութիւնը հոտն առաւ: Ախրաբս ալ ելաւ Տալորիկ գնաց»:

Ես ուրախութիւնիցս չէի կարողանում դուկել ժըպիտս: Մարդ դեռ թիւրքաց աւճանիւր շանցած արդէն դողում է յուրից կամ բռնելու վախից, իսկ ես շատ ուրախ էի և ինքս ինձ հարց էի տալիս. «Մի՞թէ այսքան հեշտ է թիւրքիս մտնելն ու տալորիկից երիտասարդի հետ խօսելը»: Տալորիկը մեզ համար ներհական անուն էր...

Երբիտասարդ հովիւից բաժանւելով՝ կամաց-կամաց իջանք սարից և մօտեցանք վանքին: Վանքի առաջին պարիսպի առջև, աթոռատան աղբերի մօտ նստանք հանգստանալու: Տէրաբը գնաց մեր ընկեր Սարկաւազին ու Մովսէսին կանչելու: Քիչ յետոյ եկաւ և սարկաւազը, որ Սեւս կեդոնանում էր յայտնի: Սեւոն բարձրահասակ, սեւ մօրուքով ու բեխերով մի երիտասարդ էր: Սիրաբը բարեւելոց յետոյ, յայտնեց, որ այտուղ չի կարելի մնալ, որովհետև ոստիկանութիւնն արդէն մեր հօտը առել է և երկու զափթիս է ուղարկել հակելու համար: Ես պատասխանեցի, թէ, եթէ կարելի է, ես այտուղ մնամ, մինչև որ Տէրբանը ու Մխիթարը գնան Ուրախակի մօտ մի առաջնորդ բերելու համար, որը ինձ անցկացնի Եփրատը, կամ եթէ Սարկաւազը ինքը ճանաչում է մի աղբիւսի մարդ, որ ծանօթ լինի Եփրատի ծանծաղուտներին, թո՛ղ մեզ առաջնորդէ Տալորիկ:

Այսպէս խօսելով՝ հեռացանք վանքից և խիտ անտառի միջով հասանք Ճգնաւորի այրը, որ մի անառիկ տեղում է գտնուում: Հայր Սեւոն յայտնեց, որ Աղբիւսի իր խմբով այտուղ էր: Այտուղ էին և Մուրատն ու Տամատանը: Ես անչափ ուրախացայ, երբ տեսայ այս անառիկ վայրը, և դառնալով Սարկաւազին՝ ասացի. «Ես կը մնամ այտուղ, որովհետև սատանան էլ չի կարող ինձ գտնել, իսկ սղերըք թող գնան դեռն ու մի խաբար բերեն»: Հայր Սեւոն պատասխանեց. «Տեսնենք, ես գնամ վանքը՝ մտածեմ»:

Սարկաւազի գնալուց յետոյ, յայտնեցի տղաներին, թէ այս մարդը իմ վրա լաւ տպաւորութիւն չթողեց: Տէրբանը պատասխանեց, թէ առաջնորդարանում իրենց հետ շատ լաւ էր խօսել, իսկ այժմ առօրինակ է, որ այսպէս է վարում: Հագիւ անցել էր կէս ժամ, որ հայր Սեւոն, ձեռքին բռնած երկու հաց, շտապով մօտեցաւ մեզ և ասաց. «Ամա՛ն, պարո՛ն, բանը վատ է: Վարժապետը աշակերտները հաւաքած՝ այս կողմերը կուգայ փակել»: Ես չափազանց վրդովեցի ու

բարկացայ՝ տեսնելով այս ամբողջ վարժուէրը: Ես պատասխանեցի Սեւոն, թէ կը մնամ այտուղ, մինչև որ ընկերներս գնան ու մի յարժար տեղ գտնեն: Սեւոն պնդեց, թէ անկարելի է մնալ, եթէ ոչ՝ ամենքս էլ կորած ենք:

Տեսնելով, որ, իսկպպէս, աշակերտները գալիս են, ես ասացի ընկերներին. «Տղերք, գնանք, այս մարդուց օգուտ չկայ»: Սկսեցինք ինչևէ և մինչև երեկոյ մնացինք Վարժապետի աղբերի մօտ:

Երեկոյան մթնեց: Բոլորովին շարած էինք: Չըզիտէինք՝ ուր գնալ: Բայց մնալ էլ չէր լինում: Շարժւեցինք: Իջանք Չիրաթի դիւղի մօտով դէպի Եփրատի ափը: Գիշերայ մութին յորակ գետը ծով էր նմանում: Ի՞նչ անել: Եթէ այտուղ մնանք, առաւօտան մեզ կը բռնեն: Հագար ու մի տեսակ մտքեր անցնում էին զլինիցս: Տէ՛ր Աստուծ, այս ի՞նչ բան է: Պարսկաստան անցնելու համար Արաքսն է արգելք հանդիսանում, Սասուն անցնելու համար՝ Եփրատը: Երկուսն էլ մեր սիրած, հարազատ գետերը, որոնք բխում են Հայաստանի սրտից: Հայ բանաստեղծն ու վիպասանը գովել են այս գետերը, հայ ժողովուրդը պաշտում է, բայց հաւ մեզ չեն թողնում անցնել դէպի մեր նպատակավայրը: Կանգնած ենք Եփրատի ափին, իբրև մի թշնամու առջև, ու չենք իմանում՝ ի՞նչ անել, ո՞ւր գնալ...

Երկար մտածեցինք ու որոշեցինք գիշերն անցկացնել այտուղ, սպասել վաղան: Քաշեցինք ու պարկեցինք մացանների յետը: Բայց ո՞վ կարող էր քնել: Համոզւած էինք, որ միւս օրը մի փորձանք է գալու մեր գլխին: Եփրատի աղբերը խոնավ էին ափերին, և ինձ թւում էր, թէ տասնակն ձիաւորներ անցնում են մեր մօտից, թէ հաւ կը նկատեն ու կը յարձակւեն և կը սկսեն թալանել հայ գիւղերը: Չքեցինք ու ամբողջ գիշեր մնացինք անհանգիստ:

Վերջապէս սկսեց լուսանալ: Եկաւ նաւավարը, որ գետից ճամբորդներ էր փոխադրում: Մեզ որ տեսաւ, երեսը խաչ հանեց, բարեկեց և ուրախութիւնից ձեռքերը շփելով՝ ասաց, որ հաւ մի շաքաթ է գետից մարդ չի անցկացրել ու փարայի երես չի տեսել: Տէրբանը խօսքը կտրիւրու համար ձեռքը մի քանի դրուշ դրեց ու խնդրեց, որ շուտ անցկացնէ գետի միւս կողմը: Նաւավարը որ սպիտակ դրուշները տեսաւ, ուրախ ուրախ նաւակը ափին մօտեցրեց, և մի քանի ըսպէից մենք արդէն գետի միւս ափում էինք և Շիրան գետի մօտով անցանք վեր:

Ուրախ էինք վրանգից ազատւելու համար: Մի փոքրիկ ձորակով բարձրացանք դէպի Դղըր-Աղաճ գիւղը, ուր ապրում էր Ուրախանը: Ապրանով հասանք գիւղի ծայրը և նստանք արտերի մէջ: Շուրջը աշխատում էին գիւղացի կանայք և աղջիկներ ծամոն էին հանում: Ես ու Մխիթարը մնացինք, իսկ Տէրբանը գնաց գիւղ Ուրախանի մեր գալու լուրը հարողելու համար: Սպասեցինք 3-4 ժամ: Ուրախ արժամագրութեան մէջ էինք: Կէսօրին մօտ էր: Տեսանք, որ մի կարճահասակ, չէկ մազերով ու կապոյտ աչքերով երիտասարդ եկաւ մեզ մօտ և բերեց Տէրբանից մի նամակ, որի մէջ ասւած էր, թէ տունը պատրաստ է, հետևեցէ՛ք այս մարդուն: Ես հարցրի, թէ արդեօք Ուրախանը գիւղո՞ւմն է: Երիտասարդը պատասխանեց, թէ

երկու օր առաջ Աղբիւրի և Գուրգէնի մօտ է գնացել, բայց նկատուելու վտանգ չկար. պէտք է ուղիղ գնածեղ համար: Իսկ միւթէսարի՞քի յանձնարարութեամբ Ուրուականը գնացել էր Տաւրբիկ, որպէսզի Աղբիւրին ու Գուրգէնին համոզէ Հեռանալ Տաւրբիկից: Միւթէսարի՞քը իր յանձնարարութիւնը արել էր առաջնորդի միջոցով:

Միտասարդը մատով ցոյց տւեց այն տունը, ուր պիտի իջևանէինք մենք: Բիւրդ աղան զիւրում էր,

յինք մեզ ցոյց տրւած տունը:

Իր պատէկը վերջացնելուց յետոյ, երիտասարդը հեռացաւ մեզանից: Ես ու Մխիթարը ճանապարհ ընկանք դէպի մատանաւած տունը: Դեռ տեղ չէինք հասել, մէկ էլ, հակառակ կողմից, մեզ պէմ-հանդիման դուրս եկաւ Զաղախի արան իր ծառաներով...

(Շարունակելի)

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ

Ա. ԸՆԿԵՐՎԱՊԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ

(Յիւրիսի, Փետր. 21—22)

Ա. Ը-ի Գործադիր Կոմիտէի այս տարւելջանի երկրորդ նիստը բացեց անցեալ փետր. 21-ի առաւօտեան:

Այս առթիւ Ինտերնասիոնալի նախագահը՝ Վանդիլվիլը՝ վեր հանեց մի քանի ամիս առաջ վարձանաւած Գործադիր Կոմիտէի անդամ Պիտանի արխիւանքը միջազգային բանուորութեան զիւրաւարտութիւնների մէջ: Մինչև Համաշխարհային Պատերազմը Աւստրո-հունգարական ընկերվարականների շարքերում, իսկ պատերազմից յետոյ իբրև անդամ Թուրքիայի զեռևս այնքան թոյլ ընկերվարական կուսակցութեան՝ Պիտանի անխոնջ պայքար է մղել բոլոր յետադիմական ուժերի դէմ, որոնք ծանրացած էին բանուորութեան ազատագրական զործի ճանապարհին: Առանձնապէս ծանր էր և երախտիքի արժանի նրա արխատանքը Թուրքիայում, ուր նա ճգնում էր ընկերվարական կազմակերպութիւնը պատար դարձնել Փայլատական յետադիմութեան և հակահրէական վայրագութիւնների դէմ:

Դրանից յետոյ նախագահը յայտարարում է, որ, առաջին անգամը լինելով, Գործադիր Կոմիտէի նիստին ներկայ է հրէական «Բու՛նդ» կուսակցութեան ներկայացուցիչը և իր ուրախութիւնն է յայտնում, որ այս կարևոր կուսակցութիւնը, երկար տատանումներից յետոյ, որոշել է մտնել մեր Ինտերնասիոնալի մէջ:

«Բու՛նդի» ներկայացուցիչը՝ Ալտը՝ խօսք տանելով նախ բացատրում է, թէ ի՛նչն էր պատճառը, որ իր կուսակցութիւնը սկզբից և եթ չյարեց Ընկերվարական Ինտերնասիոնալին: «Մեր կուսակցութեան մէջ, ստուծ է նա, իրտտ մծծ հաստ կար, թէ Երրորդ, կամ Կոմունիստական Ինտերնասիոնալը պիտի յաջողի իր շուրջը համախմբել միջազգային բանուորութիւնը: Ժիշտ է, մենք երբեք այն մտածումը չենք ունեցել, թէ կոմունիստական մեթոդներով կարելի է ընկերվարութեան հասնել, սակայն, երկու Ինտերնասիոնալների միջև ընտրութիւն անելու ինքզուր, մեզ տակտիկ կամ մեթոդների տարբերութիւնները չէին կարևոր թուում, այլ միջազգային բանուորութեան համախմբումը: Ժամանակի կարիք այն մտածումը, որ, որպէսզի մեր կուսակցութիւնը փաստերի հիման վրա համոզւէր, որ Երրորդ Ինտերնասիոնալը ոչ միայն դէպի ընկերվարութիւն չէ առաջնորդում արխատար գանգաձանների, այլ և չէ կարողանում այդ գանգաձաններին համախմբել իր շուրջը: Այս համոզումը կայացնելուց յետոյ, այլևս մեր ընտրութիւնը որոշւած էր յօտու Ա. Ը. Ինտերնասիոնալի, որ քաղաքակիրթ երկրների բանուորութեան միակ առաջնորդն է հանդիսանում:

Այս մեր ընտրութիւնը կայացնելիս, զեկավարել ենք այն հաւատով, թէ Ա. Ը. Ինտերնասիոնալը այստեստեալ աւելի՛ վճռական միջոցների պիտի դիմի արխատար գանգաձանների յարթմանակն ապահովելու համար, քան արել է մինչև հիմա»:

Գալով «Բու՛նդի» ներկայ կացութեանը, Ալտըրը յայտնում է, որ նա ներկայումս գործում է միայն Լեհաստանում, ուր մօտ 9000 հրեա բանուորներ համախմբել է իր շուրջը: Բունդը Լեհաստանում պայքար է մղում կրկնակի ճնշումների դէմ. դասակարգային և ազգային: Վերջին ճակատի վրա նա հակամարտութեան մէջ է ոչ միայն լեհական շովէնների հետ, այլ և հրեայ ազգայնականների դէմ, որոնց շարքում նա դատում է և սիոնիստներին: Սիոնիզմը նա համարում է մի անիրականաւալի ցնորք, որ չեղում է հրեայ ժողովուրդը առողջ դործի ուղիներից: Ժնորք է սիոնիզմը, որովհետև հրեաները երբեք չպիտի կարողանան իրենց տիրապետութիւնը հաստատել Պաղեստինում, որ բրւնւած է և պիտի ընւած մնայ արաբներով, որոնց թիւն ու ազդեցութիւնը Պաղեստինում չա՛տ արագ է աճում, քան ներկայացնում են սիոնիստները:

Գործադիր Կոմիտէի նիստին եկել էին 32 պատգամաւորներ, որոնք թուում Դը Բիլլէէր (Բիլիկի), Օտտո Բաուէր (Աւստրիա), Ջիլիս, Կոնպոսի, Բրոֆուէյ (Անգլիա), Ռընդէլ, Լոնգէ (Ֆրանսա), Վիլս (Ֆերմանիա), Նեյիալկովսկի (Լեհաստան), Մաոիցիլամի, Նէմին (Ռուսիա), Վիքսու (Հոլանդիա), Աքրաւովի (Ռուս. Ս.-Ի.) ևն: Հ. Շ. Դասակցութեան կողմից ընկ. Ա. Զաւալախան, Վրաց Սոցիալդեմոկրատիայի ներկայացուցիչ Գլալապալաէն:

Գործադիր Կոմիտէի Բիւրոյի կողմից՝ այս նստաշրջանի համար, ընդհանուր կէտերով առաջարկւած էր հետեւեալ

ՕՐԱԿԱՐԳԸ

1. Քարտուղարութեան գեղարցումը,
 2. Ընդհ. քաղաքական կացութիւնը,
 3. Ինտերնասիոնալի առաջիկայ Համագումարը (Վիեննա),
 4. Քաղաքական տարազինների ասպնջականութիւնը,
 5. Կազմակերպական հարցեր.
 6. Ընթացիկ հարցեր:
- Օրակարգը հաստատում է բացի չորրորդ կէտից, որի ընտրութիւնը յետաձգւում է, մինչև որ ընկերվարական իրաւարանների խրհուրդը իր տեսակէտները ձևակերպի այն իրաւունքների մասին, որ պէտք է վա-

յիւնն զաղաքական տարադիրները հւերընկալ երկրնւրում :

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԵԱՆ ԶԵՎՈՒՑՈՒՄԸ մի կողմից ներկայացնում է Քարտուղարութեան շարքերութիւնները գանազան կուսակցութիւնների կես, իսկ միւս կողմից՝ ուրապնում զաղաքական կացութիւնը այս կամ այն երկրում :

Այս առթիւ տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնից կարեոր ենք համարում յիշատակել հետեւեալը .

Սարքում (Պարզասին) շերտակալութիւն է յայտնում անգլիական ընկերներին, որոնք իրենց կարելին արին՝ պարտադրելու համար կաւաւարութեանը, որ փոխէ իր զաղաքականութիւնը հրէական ներգալիքի ինքրում : Մահադնալի յայտնի նամակը սրտնիտներին պարագլխին, որով զգալիորէն մեծմացում են Սպիտակ Գրքի հակահրէական տրամադրութիւնները, ոչ այնքան հանրային կարծիքի ճնշում, որքան Աշխատարական կուսակցութեան կենտրոնի թիւղաբութեան արդիւնքն է :

Նեղիկավայսի (Լեհաստան) ներկայացնում է ներկայ դիկտատորական կաւաւարութեան հալածանքները ընկերարականների և ուսակալարականների դէմ և ինչպէս, որ Ինտերնասիոնը նախկին տարւայ պէս իր արկաւորութիւնը բնօրէնի Պիլսուդսկիի ոգեկոչած Քաշիցի դէմ պայքարելու համար : Նեղիկավայսիի ասելով՝ ոչ մի արտաքին ճնշում այնքան ազդու չէ Պիլսուդսկիի և իր համապրոցների համար, որքան Ինտերնասիոնի ճնշումը :

Արամավիչ (Ռուս. Սոց. Դեմոկրատ) Գտնում է, որ զեկուցագրի մէջ բաւարար չափով չէ լուսարանւած Ու. Զ. Միլիանի իսկական վիճակը : Այլ անհրաժեշտ էր անել, որովհետև բանտարական շրջաններում հետզհետէ տեղ է բուսում այն կարծիքը, թէ խորհրդային իշխանութիւնը ընկերարութիւն հաստատելու ճանապարհի վրա է կանգնած : Երկու անգամ արդէն միջադրային բանտարութիւնը նման կարծիքներ է ունեցել և հրաժարութիւն կրել : Առաջին անգամ ուարժական կոմունիզմն էր նրան ոգևորում, և երբ մենք ստում էինք, թէ դա ընկերարութիւնն չէ՝ էլին հաւատում մինչև որ ուսմական կոմունիզմը շխորտակեց իրականութեան կտու հարաւանքների տակ : Երկրորդ անգամ միջազգային բանտարութիւնը սկսեց յոյսեր կապել խորհրդային իշխանութեանը Նեպի (նոր տեսեսական զաղաքականութեան) շրջանում : Հաստատով բուլիսիներէ հարաւորոցին, թէ Նեպի տակ խորհրդային տրեստարութեան ընկերարական հատուածը ուժեղանում է :

Նեպի տապալման հետ միասին այս յոյսերն էլ ի դերն ելան : Այժմ հերթը հասել է հռչակաւոր «հնգամեակին» : Բուլիսիները, և նրանց հետևողութեամբ որոշ ընկերարականներ, շատ են թմբակահարում «հնգամեակին» յաջողութիւնների մասին : Բայց գիտէ՞ք թէ ի՞նչ զնով են ձեռք բերւած այդ «յաջողութիւնները» . ուստի ամբողջ գիւղացիութիւնը շահագործում ու կեղծեւում է այնպիսի ձեւերով ու շարքերով, որ նոյնիսկ վաղթար կապիտալիստները կամաչին անել ո՛րէն զաղաքի մէջ : Այս բաւական չէ, վերջնա էլ իսկական ճորտարհիւրութիւն է հաստատւած ամբողջ Ռուսաստանում . ամեն մի զաղաքացի պարտաւոր է այնտեղ դնալ և այն այխտաւորը կատարել, ինչ որ հրամայւում է իրեն : Ունէ չկաւութիւն կամ իտուսափում պատժում է դեպիտանական միջոցներով :

Այս արկաւորական «ընկերարութիւնը» բնորոշելու համար, թոյլ տուց մի փաստ յիշատակել . Ջիւ. Եոթն Թայպըթ թերթի Մոսկուայի թղթակալը Դիւրամտի, որ յայտնի է իբրև Ստալինի երկրպագու, փետրարի 1-ին հեռագրում է իր թերթին, թէ, «հնգամեակի» առաջին երկու տարիների ընթացքին, Ու. Զ. Միլիանի մէջ 2.000.000 մարդ է ձերբակալւած, որոնցից մէկ միլիոն հոգի աքտորւած են Սիբիր, իսկ սրանցից էլ

200.000 հոգի բռնադատւած փայտահատութեան : Գաղափար կազմելու համար այս դատարանական մասին, պէտք է նկատի առնել, որ ցարիզմը, իր ամենավայրազ շրջանում իսկ, տարեկան 190-200.000 մարդուց աւելի չի ձերբակալել : Իսկ եթէ վերցնենք ցարիզմի վերջին 20 տարւայ ընթացքին ձերբակալւած և աքտորւած մարդկանց «բանտերը» դարձնալ չնեք հասնի այն թիւերին, որ արձանագրուած է բուլիսիեան դատարանութիւնների տարեգրութիւնը . . .

Վերջին օրերս էլ լուրեր են ստացւած, թէ Ու. Զ. Միլիանի գանազան վայրերը աքտորւած նախկին սոցիալիստները շատերին բերել ևս Մոսկուա : Նրանց պատժում են միանգամայն փակ դռնաններում, ուր գիշեր-ցերեկ ճրագ է վառւում, այնպէս որ մարդիկ ոչ մի հնարաւորութիւն չունեն ցերեկ ու գիշերը երարից տարբերելու : Մեկ թւում է, թէ մի նոր զգաւական պրոցեսն է պարտաւորւում, որի համար, երկու ամիս ի վեր, ամեն կարգի ստալոյ լուրեր են տարածւում — թէ իբր են 1928 թիւին Մոսկուա եմ գնացել հակայնդալիստութիւն կազմակերպելու, թէ ինչ որ մի տեղ զաղտին նախօրէնեցան էլ գտնւել, որի միջոցով մեր ընկերները հակախորհրդային հաղորդագրութիւններ են տարածւում, թէ սոցիալ-դեմոկրատիան օրն ի րուն իմպերիալիստների դիւստը միջամտութիւն է աղբարւում խորհրդային իշխանութիւնը տապալելու համար ևն ևն» :

Արբամովիչի ճառը խիստ ճնշող տպաւորութիւն է գործում բոլոր ունկերդիրների վրա : Վրոյմուճուճը նրանց մէջ մեծ է մանասանդ այն պատճառով, որ ամենքը տարիներ շարունակ վկայ են, թէ ինչ յամառութեամբ Ռուս. սոցիալդեմոկրատները պայքար են մղողում մեծ միայն արտաքին ինտերմիւնսիոնի կողմնակիցների դէմ, այլ և Ռուս. սոց-յոզափոխականների, վրաց սոցիալիստիկոստիային և ուրիշներ դէմ, որոնք պաշտպանւած էին բուլիսիեան դիկտատուրան բռնի ուժով տապալելու իրաւունքը :

Այս ճառով փակուած է մտքերի փոխանակութիւնը Քարտուղարութեան ղեկուցման մասին, որ, նախազանգի առաջարկով, շորտակալութեամբ առնում է ի դիտութիւն :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ վերաբերելու յորս գեկուցում կար սերտան վրա, որոնց ներքէն էին կազմում Փաշիգմը, գործազրկութիւնը, գիւնափոխութիւնը և Աղբիւր Դաշնակցութեան վերակազմութիւնը : Այս գեկուցումներին, որոնք բուսական ընդարձակ են, և նրանց առթիւ հանւած որոշումներին կանխարդատանքը առանձին տեսութիւններով :

ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ ԱՌԱՅԻԿԱՆ ԸԱՄԱԳՈՒՄԱՐԸ որոշւած է կայացնել այս տարւայ Յուլիսին, Վիէննայում : Գործաւոր Կոմիտէն պետք է որոշէր Համալուծարի օրակարգը և կազմակերպութիւնը : Օրակարգի ճննութեան առթիւ տեղի ունեցան բուսմ վիճարանութիւններ, որ խիստ չաճեկան են ընկերարութեան էւոլյուսիոնը գործնական զաղաքականութեան մէջ ըմբռնելու տեսակէտից . . .

Գործաւոր Կոմիտէի Բիւրօն օրակարգի մէջ դրել էր այն հարցը, թէ, գրամատիական պետութեան մէջ, ընկերարական կուսակցութիւններ ի՞նչ պայմաններով կարող են իշխանութիւն ստանձնել : Այս հարցով ստանձնապէս շահագրգեւած է Փրանսական կուսակցութիւնը, որ, անս ըսնի տարի է իր համադրումներում ձեռնում է «իշխանութեան պարզեմը» . բայց նա չաճեկանութիւն է ներկայացնում և շատ ուրիշ կուսակցութիւնների համար, որոնք այս կամ այն ձեով իշխանութիւն ստանձնելու վիճակին հասած են :

Իշխանութեան պարզեմը որ մէջ պարունակում է հետեւեալ հարցերը . առաջին՝ ընկերարականները կարո՞ղ են կօսիւսեան կազմել բուրժուական կուսակցու-

Թիւններէ հետ, թէ՛ ամէն պարագայի մենակ պէտք է ստանձնեն իշխանութիւնը. երկրորդ՝ ընկերվարականները պէ՛տք է իշխանութիւն ստանձնեն կեր նրաք խորհրդարանում մեծամասնութիւն չլին կարգում թէ՛ ոչ երրորդ՝ Եթէ ընկերվարականները խորհրդարանական մեծամասնութիւն կազմելով իշխանութիւն ստանձնեն՝ ինչ միջոցներով և միջոցներով պէտք է կիրառեն իրենց քաղաքականութիւնը՝ որամասիրական կարգերից ընկերվարական կարգերի անցնելու համար:

Այս շարքերի շուրջը խոր տարբերութիւններ են եղել ընկերվարական տեսարանների մէջ սկզբից ի վեր: Տարբերութիւններ կան և այժմ: Հետաքրքրականն այն է, թէ՛ դերերը ներկայիս ինչպէ՛ս են փոխւել:

Անդրիական Անկախ Աշխատատեղական Կուսակցութեան ներկայացուցիչը՝ Բրոքսելտէ՝ այն միտքն է պայտպանում, թէ՛ ընկերվարականները իշխանութիւն ստանձնելով, պէտք է անչեղ կերպով հետամտնեն ընկերվարութիւնն իրականացնելու: Բայց որովհետեւ նրանք այս բանը չեն կարող անել՝ ո՛րք ռուբլուագրայի հետ կոալիտին կազմելով և ո՛չ էլ խորհրդարանում փոքրամասնութիւն ներկայացնելով՝ ռուսի իշխանութեան չպիտի մտնեն, մինչև՝ ո՛ր խորհրդարանում մեծամասնութիւն չունենան: Միմիայն այս մեծամասնութիւնն ապահովելը յետոյ է, որ ընկերվարականները ի վիճակի կը լինեն միապաշար ընկերվարական կառավարութիւն կազմելու և անվերապահօրէն ընկերվարական քաղաքականութիւն վարելու:

Բրոքսելտէի պատասխանելով՝ զերման սացիալեմոկրատիայի ներկայացուցիչը՝ Վիլսոն՝ բացատրում է, թէ՛ ինչ սոսկալի նետակներ կը ստացան ոչ միայն Գերմանիայի, այլ և ուրիշ երկրների ղեկնկրատիայի համար, Եթէ Բրոքսելտէի տեսակէտները ընդունեն Վիլսոնայի Համագումարում և պարտադիր դառնան բոլոր ընկերվարականների համար, «Գերմանական ղեկնկրատիայի միջնաբերդը — ատում է Վիլսոն, Հանդիսանում է Պրուսիան, ուր մենք թուրքական ղեկնկրատիայի հետ կոալիտին կազմելով, իշխանութեան կարևոր դիրքերը (վարչապետութիւն, ներքին նախարարութիւն ևն) պահում ենք մեր ձեռքին: Կորցնել այս դիրքերը՝ դա նշանակում է թշակոտնի դիրքը նետել Պրուսիան, և մահացու հարւած Հասցնել Հանրապետական ըեժիմին ոչ միայն Գերմանիայում, այլ և Աւստրիայում, Չեխոսլովակիայում և այլուրեք: Արդ, Պրուսիայում մենք կարող ենք մեր իշխող դիրքը պահպանել այն պայմանով միայն, որ Ռախստագում անցուն Հանդիսանանք Բրիւննիցի կառավարութեանը, որից, ինչպէս գիտէք, ընկերվարականները վտարւած են, և որը մեր ցանկացած քաղաքականութեանը չէ հետևում շատ խնդիրներում: Եթէ մենք տապալենք Բրիւննիցի կառավարութիւնը — և այդ կարող ենք անել ամէն վայրկեան միանայով ազգայնականներին ու կոմունիստներին — նրան կորցնակէց թուրքական կուսակցութիւններն անմիջապէս կը լքեն մեզ Պրուսիայում, և մենք, Լանդտագում փոքրամասնութիւն լինելով, ըստիպւած կը լինենք քաշուել կառավարութիւնից: Թոյլ տալով, որ հիտլերեան «բալներն» ու կոմունիստական դաւադիրները իրենց շահատակութիւնների սապարէզ դարձնեն ամբողջ երկիրը: Այսպիսի պայմաններում, եթէ Վլեննայի Համագումարը որդեգրէ ընկ. Բրոքսելտէի տեսակէտները, սա նման կը լինի թիկունքից դաշտին հարւած Հասցնել ղեժման ընկերվարականներին, որոնք զիտաւորեալ կերպով գոհւում են իրենց սկզբունքները՝ փրկելու համար ղեժմարատիան ոչ միայն Գերմանիայում, այլ և ուրիշ երկրներում: Եւ որովհետեւ ոչ մի երաշխիք չկայ, թէ՛ մեր պայմաններին անտեղեակ ընկերվարական կուսակցութիւնները Վլեննայում չեն հրապուրել Բրոքսելտէի փոփոխելի, սկզբունքային կեցածքով՝ ես առաջարկում եմ Համագումարի օրակարգից իսպառ հանել իշխանութեան խնդիրը»:

Կրակոտ և փոքր ինչ էլ յուզւած մի ճառով զուրս

է գալիս Վիլսի դէմ Ռըմոդիլը: Նա յիշեցնում է Ամատերվամի Համագումարի օրերը, երբ ժողովն ու իր հետևորդները, ըստ ու ջրտիք մտած, շանում էին համոզել մարքսիստներին, որ անհանդուրժող վերաբերմունք չունենան դէպի այն ընկերվարական կուսակցութիւնները, որոնք, իրենց երկրի պայմանների աչքի առաջ ունենալով, անհարժեշտ են նկատում թուրքական կուսակցութիւնների հետ կառավարական կոալիտին կազմել՝ ղեժմարատիայի և ընկերվարութեան շահերը շարժելու պայտպանելու համար: «Այն ժամանակ — շարունակում է Ռըմոդիլ, գերմանական սոցիալլեմոկրատիան լսել անգամ չէր ուզում կոալիտին կառավարութեան մասին, և, շտորհի նրա անդիշտութեան, Համագումարը արգելեց ընկերվարականներին ո՛րք դէպքում թուրքական կառավարութիւնների մէջ մտնելու: Իսկ այսօր նոյն կուսակցութիւնը չի ուզում մինչև անգամ Համագումարի քննութեանը չմթարելի կոալիտինի հարցը՝ վախենալով թէ՛ նա կարող է մերժել կոալիտին կառավարութեան հարկաւորները... Ի դուր է Ձեր երկիւղը, ընկեր Վիլսոն, ընկերվարականները ներկայիս շատ են հասունացել Ամատերվամի սխալը շտկելու համար...»

Ռըմոդիլից յետոյ խօսք են առնում Օտտո Բաւերի և ուրիշները, որոնք մի կողմից վանում են փարատելի Վիլսի երկիւղները՝ հաւատարացնելով նրան, թէ՛ անկարելի է, որ Համագումարն անտես առնէ պանագան երկրների ներքին պայմանները, և, միև կողմից, չեղտում են իշխանութեան խնդիրը քննելու և նրա հետ կապւած դժարութիւնները պարզելու անհրաժեշտութիւնը:

Վերջը, խնդիրը կարգադրելու համար, բնտրում է մի յանձնախումբ, որը իշխանութեան հարցին այնպիսի մի ընդհանուր ձևակերպութիւն է տալիս, որ կարելի լինի նրա մասին խօսել տեսակներէն, առանց դործնական որոշում հանելու: (Տես Համագումարի օրակարգի երկրորդ հարցը):

Վիճարանութիւններից յետոյ Գործադիր Կոմիտէն նախագծում է Համագումարի համար հետևեալ օրակարգը.

1. Պայշարը գիմաքափութեան համար և պատնարովի դէմ,
2. Ընկերվարական շարժման բնդիմուր դրութիւնը և քանար դասակարգի պայշարը ղեժմարատիայի համար,
3. Համաշխարհային տնտեսական տագնայը և գործադրութիւնը,
4. Կամանք Միջազգային հարիդրածողովի գեկուցումը,
5. Գործադիր Կոմիտէի և Քարտուղարութեան գեկուցումը իրենց աշխատանքների մասին և Ա. Ը. Ինտերնացիոնալի կազմակերպական հարցերը:

Համագումարի հետ կապւած միև հարցերը մի առանձին հետազոտութիւն չեն ներկայացնում:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՍՏԵՐԻ քննութեան ժամանակ, Գործադիր Կոմիտէն որոշեց մի քանի կուսակցութիւնների ձայների իրենց Գործադիր Կոմիտէի մէջ և Համագումարում աւելացնել՝ նկատի ունենալով նրանց անդամների թւի աճումը: Աւելորդ չենք համարում յիշատակել մի քանի կուսակցութիւնների թւական աճումը վերջին (Բրիւննիլի) Համագումարից ի վեր.

Ֆրանսա	առաջ՝	99-106	հիմա	120-000
Գանձարք	,,	148-492	,,	163-193
Սպանիա	,,	7-964	,,	20-000
Լատվիա	,,	5-000	,,	7-250
Էտառիա	,,	4-500	,,	5-130

Միև կուսակցութիւններէջ այս մասին տեղեկութիւններ դեռ չէին ստացած:

Կարձակերպական որոշումներէ կարգին է պատկանում և մի որոշում, որով Ինտերնասիոնալի տուրքից աստժամապէս ազատուում են անլիզալ պայմաններում գործող կուսակցութիւնները (Իտալիա, Թուրսստան, Հայաստան, Վրաստան են):

ԸՆԹԱՍՑԻՆ ԿԱՐՑՆԵՐԻ ջննութեան ժամանակ բունն Վիեննայի կուսակցութիւններ առաջացաւ հետեւեալ հարցի շուրջը:

Գործադիր Կոմիտէի վերջին նիստի ժամանակ, Հաւաստի գործակալութիւնից հեռագիր ստացեց, որ Մոսկուայում «ցոյցահան» դատ է կարգակերպւած 14 մենչեկիներէ դէմ: Այսպիսով, դեռ Գործ. Կոմիտէն չցրած՝ Հաստատեց Արքանովիչի վերև յիշատակած հարցողագրութիւնն այս մասին:

Առաջարկ եղաւ բողոքելու բոլշեկեան այս նոր վայրենութեան դէմ: Առաջարկողները ներկայացրել էին բողոքի մի բանաձև, որի մէջ ոչ միայն վեր էր հանում ուս մենչեկիներէ լոյսալ, բոլշեկիմի խաղաղ էլօյիստիւնին հաւատացող և այլ պատճառով բոլշեկեան դիկտատուրան բռնի ուժով տապալելու փրձերից պէտքը քաղաքականութիւնը — ինչ որ միանգամայն համապատասխան է իրականութեանը — այլ և որոշ չափով դրաւտում էր այլ քաղաքականութիւնը: Այս դրաւտումը դէմ խառորէն արտայայտեցին Ռեմոնի, Ջամախան, Գվարքայանէ և մի քանի ուրիշ ընկերներ, որոնք պահանջում էին բանաձևէ մէջ միայն ուս մենչեկիներէ կեցածքը չըշտել՝ առանց այլ կեցածքի հանդէպ դիրք ճշտելու. որովհետև Ինտերնասիոնալի մէջ կան կուսակցութիւններ, որոնք այլ վերաբերմունք ունին դէպի բոլշեկեան բռնապետութիւնը: Գործադիր Կոմիտէն Համաժողով գտնուեցաւ այս առաջարկին և բոլշեկիեան այս նոր նենգութեան դէմ այլ խմբագրու-

թեամբ բողոքի մի բանաձև քեհարեց, որ նոյն օրը, վանդեթիվեթի ստորագրութեամբ, հեռագրեց Մոսկուա:

Ընթացիկ գործերի կարգին, Գործադիր Կոմիտէն, Օտտո Բաուերի առաջարկով, ընդունեց հետեւեալ բանաձևը Հնդկաստանի մասին.

«Գործադիր Կոմիտէն յիշեցնում է Ա. Բ. Ինտերնասիոնալի բազմաթիւ կրկնած որոշումները, որոնք անդադար պահուցելու են Հնդկաստանի լիակատար ինքնավարութիւնը:

«Նա յոյս ունի, որ Լանդոնի կողմ Սեղանի խորհրդածոյողին յարողող ներկայ բանակցութիւնները յարողութեամբ կը պահուին:

«Այսուհանդերձ, Գործադիր Կոմիտէն երկիւղ է կրում, թէ Հնդկաստանի նոր ասիանագրութիւնը կապող է պատահել, որ մերժէ ընտրական իրաւունք տալ բանտարկան և գիւղացիական զանգւածներին: Տագրած համերաշխութեան ոգով հանդէպ Հնդկաստանի բանտարկան և գիւղացիութեան՝ Գործադիր Կոմիտէն յայտարարում է, որ ինքնավար Հնդկաստանի նոր ասիանագրութիւնը միայն այն դէպքում յոյս և ոգևորութիւն կը ներշնչի այլ երկրների բանտարկացիութիւն, երբ նա հիմնւած կը լինի հեղկական զանգւածների համաձայնութեան և ակտիւ գործակցութեան վրաս:

Այս բանաձևը հիմնաւորելիս, Բաուերը այն միտքն էր պաշտպանում, որ թէև Ինտերնասիոնալը առհասարակ պէտք է խոյս տայ դժարութիւններ հանելուց Անգլիայի Աշխատարարական կառավարութեան առջև, որ առանց այն էլ խոստ դժարին պայմանների մէջ է գտնուում, բայց և միև կողմից մեր պարտքն է յիշեցնել նրան իր յանձնառութիւնները հնդկական խնդրում:

Գործադիր Կոմիտէի վերջին որոշումն էր, որ ինքը նորից նիստի դումարի առաջիկայ Յուլիսին, Համադումարի բացումից մի քանի օր առաջ:

Մ Ե Ր Զ Ո Հ Ե Ր Ը

Անցած տարին գտնեթով հարուստ տարի եղաւ մեզ համար: Կարցրիմէ քանկագին ընկերներ թէ՛ երկրում, քանկերում ու աւառավայրերում, թէ՛ արտասահմանի տարագրութեան մէջ: Կարցրիմէ հին և վաստակաւոր դէմքեր, կարցրիմէ ներխտաարի և տակաւին աշխատելու ետանդով իցում ուժեր: Կովկաս, ռուսական արգելաբանների մէջ, Նարիմի նախնայաւանդում, Պարսկաստան, Եգիպտոս, Ֆրանսա, Ամերիկա — ամէն կողմ բարձրանում են նորանոր հուգարութիւններ: Եւ շատերի մահում վայրեն և մանրամասնութիւններն իսկ յայտնի չեն: Ո՞ր է գերեզմանը բոլշեկեան անարգ բռնութեան գտն կորին Արտաշէս Միրզայանի: Ո՞ր է քաղւած դիլիջանցի Աղաբեգ Աղաւանդը, որ յուսահատ ինքզինքը գետը նետոց Նարիմի աւառարկայում՝ չեկայակամ հայաժամանկերից ազատելու համար: Ո՞ր քարի տակ գտաւ իր յարիտեմական համգիտը այնագարցի Մուշեղ Զափարեանը, որ սպանեց ապր. 27-ին Բիլաի կուսում Վայոց Ձարի ապստամբ գիւղացիների և բոլշեկիկների միջև: Սառուցեալ ովկիանոսից մինչև Մասիս

բանտեր ու գերեզմաններ են ազատութեան համար մարտնչող հերոսների համար:

Հնարաւոր է բոլորի կենսագրականները տալ «Դորոշակ»-ում: Ո՛չ, տարաբախտաբար: Ո՛չ վաւերագրեր կան մեր ձեռքի տակ, ո՛չ փաստերի ու դէպքերի արձանագրութիւններ ու ստոյգ պատմութիւններ: Շատերի նկարներն իսկ չունենք: Ինչ որ պիտի տանք, պատահական ու կցկտար տեղեկութիւններ են ստել: Աւելիմ՝ քողնում ենք ապագայ պատմութեան:

ՄԱԹԵՆԻԿ ԱՐԴՈՒԹԵԱՆ (ՄԱՂԻԿ)

Երկարատև ու ծանր հիւանդութիւնից յետոյ, Դեկտ. 12-ին, Փարիզում վախճանեց ընկերուհի Սաթենիկ Արղութեանը, հանդուցեալ Յովսէփ Արղութեանի կեանքի ընկեր — ինտական Թականների դաշնակցական Մարիլը: Մէկը ա՛յն բախտաւոր դէմքերից, որոնք մասնակցեցին Հ. Յ. Գաշնակցութեան ստեղծմանը:
A.R.A.R. @

ման փոթորից աշխատանքին և առաջին տարիների հերոսական գործունեութեան:

Ընկ. Սաթենիկը Արեգասարդապոլցի էր, Մատինեան ընտանիքից, զորը Նիկոլ և Նատալիա Մատինեանների, որոնք նոյնպէս Դաշնակցութեան հիմնադիր ուժերից էին: Դուրս գալով Քիֆլիսի գիմնազիայի վեցերորդ դասարանից ընկ. Սաթենիկը իր քրոջ Նատալիայի, Վարդան Գոլոշեանի քրոջ՝ Դարիայի, Թամարա և Ժէնիա Ազաճեանների և մի քանի ուրիշ օրիորդների հետ, ութսունական թւականների վերջերին, երբ զեռ Շ. Յ. Դաշնակցութիւնը գոյութիւն չունէր, բայց նրա զաղափարը սաւառնում էր օգի մէջ, հիմնեց զուտ կանացի մի խումբ, որի նպատակն էր նպաստել ինքնագարգացման և Քիւրքաշայաստանի ազատագրութեան:

Նրանց տունը երիտասարդութեան համար ժամադրավայր էր: Հաւաքում, վիճում, ծրագրում, ոգևորում էին: Երկրից վերադառնալիս Վարդան Գոլոշեանն էլ լինում էր այնտեղ, ուսանող Սիմոն Զաւարեանն էլ, Ներսիսեանաւարտ Յովսէփ Արղութեանն էլ և շատ ուրիշներ: Այստեղ սկիզբ առաւ և մանկամարդ Սաթենիկի սէրը զէպի Յ. Արղութեանը: Այս զաղափարական մթնոլորտում հասունացաւ Սաթենիկի մէջ յեղափոխական մրրիկներին յանձնելու որոշումը:

Գիշ յետոյ, օր. Սաթենիկն արդէն զործի վրա է: Գիմնազիայից դուրս գալուց մէկ-երկու տարի անցած, նա քննութիւն է տալիս և վարժուութեան վկայական ստանալով՝ ուսուցչութիւն է անում Դանձակում, ապա անցնում է Պարսկաստան վարժուհու պաշտօնով և հետզհետէ ամբողջապէս նւիրում կուսակ-



ՏԻԿ. ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ՅՈՎՍԷՓ ԱՐԳՈՒԹԵԱՆ

Քիֆլիսում և հայրենակ ուրիշ կենտրոններում այն ժամանակները շատ կային նոյննպատակ խմբեր: Հայ երիտասարդութիւնը սողալուած էր յառաջադէմ ու յեղափոխական զաղափարներով: Մի կողմից ուսւ յեղափոխական խմբումները, միւս կողմից Քիւրքաշայական գաղութում համալիւ էին ամենքին: Մտքերի մէջ տիրում էր արտակարգ յուզում: Մարտչիլից ու ժընելից հասնում էին յեղափոխական կոչեր: Պետրոզդադից ու Մուկայի ուսանողութիւնը բուռն վէճի մէջ էր՝ համամարդկային ու ազգասիրական զաղափարների շուրջ: Քիւրքաշայաստանը թւում էր աւետեաց երկիր. զնում էին այնտեղ ուսումնասիրական կամ յեղափոխական գործունեութեան նպատակներով: Վ. Կուրչեանի խորհրդաւոր պտոյտները գրաւում էին մաստաղ սրտերը: Քիֆլիսը եռ ու զեռի մէջ էր:

Ընկ. Սաթենիկը գտնում էր այդ ետուզիոյ կենտրոնում: Նրա եղբայրը՝ Նիկոլ Մատինեանը Փրանսական հեղապտոտարանի թարգման էր և նոյնպէս ժամանակի զաղափարական երիտասարդներից մէկն էր:

ցական գործունեութեան, Մաղիկ անունով: Մէկ թաւրից, մէկ Սալմաստի շրջան: Այս կողմերում է և Յովսէփը, մէկ Սալմաստի շրջան: Մաղիկն ու Տաշօն արդէն նշանածներ են: Սկզբիցի Սաքօի յուշերում յաճախ ենք հանդիպում Մաղիկին ու Տաշօին: Տաշօն զընում-զայլիս է վան, զէնք է փոխադրում, կարճակերպական աշխատանք կատարում: Մաղիկը օգնում է նորան: 1895-ին նա վճռում է անցնել Կարին կուսակցական գործով, գնում է Կարս, բայց ուսական իշխանութիւնները արգելք են հանդիսանում: 1896-97-ին նա մասնակցում է Ռանասորի Նախապարտատուութեան:

Արշաւանքից յետոյ, Տաշօն, այժմ արդէն Ռանասորի Իշխանը, ձերբակալւեց Փայաթուկ գիւղում: Մաղիկի թափած ջանքերի շնորհիւ ուսւ հելպատոսը միջամտեց և աքսորեց նրան Քիֆլիս: 1897-98-ին Իշխանը մնաց Միթիսի բանտում և դատապարտուեց աքսորի Վոլոզդա: Բանտից դուրս գալով ամուսնացաւ Օր. Սաթենիկի հետ, և երկուսը միասին մեկնեցին Իրանից աքսորավայրը, ուր մնացին մի քանի տարի: Իշ-

խանը պաշտօնավարում էր զաւառական ինճնավարութեան մէջ, իբրև քարտուղար: Այստեղ ծնեց նրանց միակ զաւակը՝ Արփիկը:

Աքսորից ազատելով՝ Իշխանը ընտանիքով վերադարձաւ թիֆլիս, ուր, սակայն, երկար չմնաց. եկեղեցական կաւածներ ջոյցի առթիւ նորից ուղարկեց արտօր, այս անգամ Հաշտարխան: Տիկ. Սաթենիկն էլ գնաց հետը:

Աքսորից վերադարձան թիֆլիս, ապա՝ Երևան: Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ նրանք Երևանում էին, երկուսն էլ, համապատասխան ասպարէզներում, մասնակցում էին ինճնապաշտպանութեան գործին: Սկսեցին ցարական իշխանութեան հալածանքները զաշնակցականների դէմ. Յովսէփը բանտում է մինչև 1912թ.: Տիկ. Սաթենիկի վրա է ա՛ ընտանիքի, և՛ բանտարկւած ամուսնուն օգնելու հոգը: Բանտից ազատելով՝ Յովսէփը հաստատեց թիֆլիսում՝ մօտից մասնակցելով հասարակական և կուսակցական աշխատանքներին: 1914-ից նա կամաւորական շարժման ամենաջերմ ջատագովներից ու ղեկավարներից է: 1915 թ.ին պետ է 7ըր կամաւորական զնդի: Ապա՝ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի անդամ: Հայաստանի Խորհրդարանի անդամ: Հայաստանի դեսպան թեհհանում: Եւ, վերջապէս, տարազիր Երօրպայում: Տիկին

Սաթենիկը միշտ և ամէն տեղ հետն է, կեանքի, դադափարի և զործի ընկեր: Եւ միասին էլ, միևնոյն գե-



ՆԱՏԱՆԱ ՄՍԱԽԵՆԱՆ
ընդամենում հանգչում են այսօր Փարիզի արւարձան՝ Շաւիլի գերեզմանատան բարձունքում:

ԻՍԿՈՒՀԻ ԹԻՐԵԱՔԵԱՆ

Նոյեմբեր 14-ին, Եգիպտոսի Չահագիկ քաղաքում, վախճանեց ընկերուհի Իսկուհի Թիրեաքեանը, Բանկ Օթթոմանի Հրաչի կինն ու զաղափարական գործակիցը:

Եարտ լինելուց յիտոյ, ուսուցչական պաշտօն է ստանձնում նոյն Արհեստանոցում, իսկ վերջը տեղափոխւում է Մաքրի-գիւղի ազգային ուսումնարանը: Արդէն զպրօցական նստարանի վրա Իսկուհին այ-



ՏԻԿ. ԻՍԿՈՒՀԻ ԵՒ ՀՐԱՉ ԹԻՐԵԱՔԵԱՆ

Ընկ. Իսկուհին ծնել էր 1874թ. Մայիս 1-ին, Պոլսում: Ուսումը ստացել էր Նարեկեան վարժարանում և աւարտել Բերայի Աղջկանց Արհեստանոցը: Երջանա-

քի է ընկնում ըմբոստ և աշխոյժ բնաւորութեամբ: Նրա վրա մեծ ազդեցութիւն է անում Մելքոն Կիւրճեանը (Հրանտ), որ դասաւու էր Արհեստանոցում և

իր անընդհատ ներշնչում էր հայրենասիրական ու յեղափոխական գաղափարները: Եւ երբ 1890-ին Պոլսում եւրեւում են հնչակեանները (Արվախի-Վարդ-Պատրիկեան և ուրիշներ) ու սկսում են կազմակերպութիւններ առաջ բերել, Իսկուհին դառնում է հնչակեան օրիորդաց խմբի գործօն անդամներէրց մէկը, և մասնակցում է Պատրիարքարանի ցոյցի նախապարաստութեան: Ինչպէս ինքն է գրում իր ինքնակենսագրական նշմարների մէջ, «այդ օրերուն ընկերուհիներս և ես անասման ուղեորութեամբ կը զբաղէինք զհնգեր ու թերթեր տեղափոխելով»:

Հնչակեանների շարքերում նա երկար չի մնում. «այդ կուսակցութիւնը իր կարգ մը ապիկար անդամներու շնորհիւ արդէն քայքայման վիճակի մէջ էր»: Հետեւում է նրանցից, զիչ յետոյ, անդամագրւում է Դաշնակցութեան և կազմակերպում է օրիորդաց մի խումբ: Օսանթանում է այն ժամանակաւ զանակցական գործիչներին՝ Բարկէն Սիւնիին, Արմէն Գարօին, Աշոտին, Հրաչին և ուրիշներին, մասնակցում է նրանց ժողովներին: Մտերմանում է Հրաչին և նշանուում նրա հետ: Շուտով թողնում է ուսուցչութիւնը և ամբողջապէս նւիրում յեղափոխական գործունէութեան:

1896թ. յուլիսին Պոլսում սկսւում են Բանկ Օթթոմանի գրաման նախապատրաստական աշխատանքները: Տեղի են ունենում խորհրդակցութիւններ, որոնց մասնակցում են Պոլսում գտնուող ու զբոսից եկած ընկերները՝ Ա. Գոնուրի, Ա. Միսաքեան, Բարկէն Սիւնի, Աշոտ, Հրաչ, Արմէն Գարօ և ուրիշներ, զբոսից եկած Արվախի, Մար, Բորիս (Մմբ. Պաշտրեան). կազմուում է բանկի գրաման և Սամաթիոյ կուիւնների նախադիւր, պատրաստում են մօտ 600 ուսմբ: Ժողովները, մեծ մասամբ, տեղի են ունենում Օր. Իսկուհիի տունը, ուր ամբարում էին և ուսմբերը: Այստեղից ուսմբերը փոխադրւում էին ուրիշ տեղեր: Ռումբերի փոխադրութիւնը կատարում էին Արմէն Գարօն, Հրաչը և Իսկուհին, յաճախ, չափից աւելի վտանգաւոր պայմաններում:

Բանկի ղէպքից յետոյ, Օր. Իսկուհին ծնողների հետ փոխադրւում է Բուլղարիա, հաստատւում է Վառնայում և դառնում է վարժուհի ազգային դպրոցի մէջ: Մի քանի ամիս յետոյ արիւս է և Հրաչը, որ, սակայն, երկար չի մնում ու նորից մեկնում է յեղափոխական գործով: Եւ միայն հինգ տարի յետոյ, 1901ին, վերադառնում է Վառնա և ամուսնանում Օր. Իսկուհիի հետ, որ այդ տարիներին ամբողջապէս տարւած էր դպրոցական ու հանրային-յեղափոխական գործունէութեամբ:

Ամուսնութիւնից յետոյ, նորապսակ գոյգը անցնում է Կովկաս՝ Սուխում, ապա՝ Թիֆլիս: Այստեղից երեք ամիս յետոյ, դարձեալ զանակցական գործով, տեղափոխւում են Իգմբի, ուր այդ օրերին յեղափոխական ձեռնարկներ էին պատրաստւում: Սակայն, մի ահաբեկման առթիւ տեղի են ունենում խուլարկութիւններ, ձերբակալւում են Հրաչին և զլիսաբաց, ոտաբոյրիկ ու ծեծի տակ բանտ են առաջնորդում: Յաջորդ օրը ձերբակալւում են և Տիկ. Իսկուհիին և չորս ամսական զաւակը ձեռքին՝ տանում են ոստիկանատուն: «Մերիկ ու ցորտ գետնայարի մը. ոստիկան ծըն ալ մեզի ըն- digitised by

կեր, գրում է ինքը ընկ. Իսկուհին: Գառստուն օր մնացի: Ու ամէն օր, կէս գիշերէ վերջ, վարյազ ոստիկաններով կուգային հարցաքննելու զիս: Վերջապէս, յուսահատելով, թէ պիտի չկարենան բան մը կորցել ինձմէ, սպանացին զաւակս խել: Սուկալի հարւած մըն էր այդ ինձ համար: Ու ատկէ ետք, ամէն գիշեր, երբ կը լսէի դրան բացփուլ, կը ցատկէի տեղէս ու կը զբերկէի Բարկէնը»:

Վեց ամիս մնում է բանտարկւած: Տեղի է ունենում դատավարութիւնը: Ահաբեկիչ ինքնը մահուան է դատապարտւում, Հրաչը՝ 101 տարեկ բերդարդելութեան, իսկ Տիկ. Իսկուհին, մի քանի ուրիշ ընկերների հետ՝ աքսորի: Իգմբիից տարւում է Պոլսի բանտը, այստեղից՝ Սամսոնի բանտը, ուր մնում է երկրորդ զաւակը: Մի քանի ամիս յետոյ հանւում է բանտից և, իբրև աքսորական, թողնում ոստիկանութեան հսկողութեան տակ»:

Սամսոնում ընկ. Իսկուհին մնաց հինգ տարի աքսորականի վիճակում, մինչ իր ամուսինը տանջւում էր բերդարդելութեան մէջ: Ի վերջոյ, որոշւում է և, ընկերների աջակցութեամբ, յաջողւում է փախչել Կովկաս: Նոյն ժամանակ տեղի է ունենում օսմանեան յեղաշրջումը, և Հրաչն էլ, ուրիշ հարիւրաւոր բանտարկեալների հետ, ազատութիւն է ստանում և նոյնպէս գալիս է Կովկաս»:

Այնուհետև սկսւում է կեանքի նոր շրջան: Ընկ. Հրաչը ընտանիքով փոխադրեց Պոլիս, ուր վարում էր «Ազատամարտ»-ի վարչական տնօրէնի պաշտօնը: Տիկ. Իսկուհին, իր ընտանեկան գործերից դուրս, մասնակցում էր և հասարակական գործունէութեան: Այսպէս՝ մինչև 1914-ի վերջերը, երբ ուրիշ կանանց հետ անցնում է Բուլղարիա, իսկ Հրաչը հարիւրաւոր ուրիշ մը տաւորականների հետ գնաց զնաց 1915թ. ապրիլին երզնէին: Տիկ. Իսկուհիի համար սկսեց աստանդական ու տանջալից մի կեանք — Բուլղարիա, Թիֆլիս, Սուլի, նորից Պոլիս, Եգիպտոս: Նա, իր երկու զաւակներէ հետ, ճաշակեց տառապանքի բոլոր տեսակները, բայց մինչև կեանքի վերջին վարկեանը մնաց հուսատարիմ պաշտած զաւանանքին, մինչև որ, հեռաւոր Զակաղեկում փչեց վերջին շունչը:

Հայ յեղափոխութիւնը հարուստ չէ կին գործիչներով: Հայ Շառուրտ Բողջինը, Սոֆիա Պերովսկայաներ ու Վէլյա Յիլենկերներ չունենք, տարաբարտարար: Եղածների մէջ ընկ. Իսկուհին, ինչպէս և ընկ. Սաթեմկը արժանի են առանձին յարգանքի ու երախտագիտութեան:

ԱՐՏԱՇԵՍ ՎԱՆԱՐԵԱՆ

Ամերիկայի Նիւյարքա Ֆոլս քաղաքում, կոյր աղիքի գործողութիւնից յետոյ, հիւանդութեան բարդացման հետևանքով, յուլիս 9-ին մեռաւ մեր երիտասարդ

*) Մինչև այստեղ, ընկ. Իսկուհին գրի է առել իր կեանքի յուշերը: Ինքնակենսագրակցանը, նրա մահուանից յետոյ, հրատարակւել է «Յուսաբեր»-ում 1930թ. նոյնմը. 20, 11 և 23: A.R.A.R.©

գործիչ ընկերներից մէկը՝ Արտաշէս Վանարեան, բուն անունով Արտաշէս Հացագործեան:

Վանարեանի մահը անկեղծ ցաւ պատճառեց ո՛չ միայն Ամերիկայի, այլ և բոլոր ընկերներին: Երիտասարդ, զարգացած, լուսամտ ու կայստան՝ Արտաշէսը համակ կեանք էր ու շարժում: Լինում էր ամէն տեղ, հասարակական բոլոր խաւերում. դիրահազորդ էր ու ընկերական: Ծարտար լեղում ու զբո՛ւ՛՛ կարողանում էր բեմից ու մամուլէ շէքերից խօսել ու խօսեցնել տալիք յայտնած մտքերը, բայց, մանաւանդ, յայտնելու ձևը դրաւում էին հանրային ուշադրութիւն և, յաճախ, հակադրեցութիւն առաջ բերում: Նա իր զբի՛ւր ծառայեցում էր մ՛իշտ հայ աշխատակուրծեան և Դաշնակցութեան ի նպաստ. այդ պատճառով առանձնապէս սիրւած էր հայ գաղութների աշխատակրական շրջաններում:

Վանարեանը վանեցի էր, Այգեանանի Նորաշէն Թաղից, ծնւած 1892 թէին: Նորաշէնի Թաղային ուսումնարանում էլ ստացաւ իր նախնական կրթութիւնը, ապա՝ Երամեան վարժարանում: 1909-ին, անցաւ Վանի Կենտրոնականը, ուր և կազմաւորեց նրա նկարագիրը: Նա մէկն էր Արամի, Սարգսի, Իշխանի շնչի տակ պատրաստուած «նոր սերնդից», Վանի երիտասարդական այն փայլուն փաղանքից, որից դուրս եկան շատ ընտիր գործիչներ, ինչպէս անգղոցեացի Բարունակ Կապուտիկեանը և Հմայակ Մանուկեանը: Արդէն աշակերտական նստարանի վրա Արտաշէսը աչքի ընկաւ իր ուշիմութեամբ և ցոյց տւած ընդունակութիւններով: Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ, նա անցաւ Պոլիս ուսանելու և այստեղ դարձաւ Հ. Յ. Դ. Ուսանողական Միութեան ամենագործօն անդամներից մէկը՝ մասնակցելով նաև ուսանողական «Երկունք», ամասաբլի խմբագրութեան: 1913-ին աւարտեց Պոլսի համալսարանի Իրաւագիտական բաժնին: Պատերազմից յետոյ աշխատակցեց «Ճակատամարտ»-ին և ուրիշ թերթերի: 1919թ. օգոստոսին տեղափոխեց Ամերիկա գործչի պաշտօնով, որ և վարեց փայլուն յաջողութեամբ մի քանի տարիներ: Միաժամանակ և աշխատակցեց իր «Հայրենիք»-ին: Առանձին հասորով հրատարակեց իր յօդածները շարքը բուլլետենի մասին, որին համոզւած հակառակորդ էր:

Վերջին տարիները Վանարեանը ունէր անձնական պարտում. ապահովագրական ընկերութեան ներկայացուցչ էր: Մասնաւոր աշխատանքը, սակայն, չարգելեց, որ Վանուհակ է կապւած մնալ Դաշնակցութեան գործին. նա մասնակցում էր կուսակցական կեանքի բոլոր արտայայտութիւններին՝ մամուլ, հրատարակչային ժողովներ, դասախօսութիւն, ընկերական հաւաքճոյթ, կազմակերպական աշխատանք: Կուսակցութեան ներթափանց կեանքն էլ շատ մօտ էր նրա սրտին. ապացոյց այն 5000 դոլարի ապահովագրութիւնը, որ կտակեց Դաշնակցութեան:

Վանարեանի ժողովրդականութեան ապացոյց էր այն բազմաթիւ յուզարկատուութիւնը, որ կատարեց Տիթթօրիում, յունիս 13-ին. ամբողջ գաղութը, և՛ ներկայացուցիչներ ուրիշ վայրերից եկել էին յախտնականութեան զերկը ճամբելու երիտասարդ ընկերով:

ՆՇԱՆ ՏԷՍՏԷԿԻՒԼ

Դեկտ. 21-ին, Բոստոնի արևարձան Վոտըրտաունում, կարճատև հիւանդութիւնից յետոյ, մեռաւ Դեկտ, 28-ին խուռն բազմութեան ներկայութեամբ, հողին յանձնեց ամերիկահայ փայլուն մտաւորականներից և Հ. Յ Դաշնակցութեան գործիչներից մէկը՝ ընկեր Նշան Տէստէկիւլ:

Ընկ. Տէստէկիւլը Բալուի Հաւաւ դիւղից էր, ծնած 1889 թէին: Մանուկ հասակից որբ՝ իր հօրեղոր հետ նա փոխադրեց Քարբերդ և 1907-ին աւարտեց Մէյքրէի Կեդրոնական վարժարանը՝ աշակերտելով Ռ. Չարդարեանին: Ապա երկու տարի ուսուցչութիւն արաւ նոյն վարժարանում և 1910-ին անցաւ Ամերիկա, ուր աշխատում էր և միաժամանակ ուսանում Բրաուն համալսարանում, որի ընկերարանական և գրական բաժինը աւարտեց 1917-ին:

Ամերիկա հասնելուց յետոյ, Տէստէկիւլը սկսում է մեծ եռանդով մասնակցել Դաշնակցութեան կեանքին: Հետզհետէ դասնում է «Հայրենիք»-ի գործօն աշխատակից, ապա և խմբագիր, ընտրւում է Կենտր. կոմիտէի անդամ, ստանձնում է գործչի պաշտօն, խմբագրում է «Փիւնիկ» գրական հանդէսը, դրում է ջաղաքական, բայց, մանաւանդ, գրական-քննադատական արժէքաւոր յօդածները, յոյս է ընծայում առանձին հասորներ, սկսում է աշխատակցել ամերիկեան մամուլին: Վերջին երկու տարին դրում էր ամերիկեան աղբյուրի «Christiana Science Monitor» լրագրում: Եւ 10-15 տարւայ ընթացքում դառնում է ամերիկահայ աչքի ընկնող մտաւորական ղէմքերից մէկը:

Այս արագ վերելքը արդէնք չէր պատահականութեան, այլ բնածին կարողութեան, կամքի և աշխատասիրութեան: Տէստէկիւլը ունէր կենդանի և խուզարկող միտք և կարողւոյ անյայտ տենչ: Եւ եր վրասուրբ և, ինքնուրոյն մտածողութիւն: Մնացել էր գաբմանակ կերպով իդէալիստ Ամերիկայի համայնակուլ ներթափաշտութեան մէջ: Մինչ ամենքը հե ի հ վագում էին դուրսի յետեղի, նրա մտահոգութիւնը, գերազանցապէս մտաւոր ու ուղեկան ապրումներով էր սահմանափակւած. այդտեղից էր ստանում նա իր սնունդը: Այդ միլիոնատէրերի աշխարհում գերեզման իջաւ նոյնքան հարուստ, որքան հարուստ էր դեռ Ամերիկա չեկած, Մէյքրէում:

Գաղութահայ մտաւորականի յեղափոխական գործունէութիւնը անխուսափելիօրէն դատապարտուած է մնալու մտքի ու խօսքի սահմաններում: Տէստէկիւլի դաշնակցական աշխատանքն էլ խօսքն էր ու զբի՛ւր, մանաւանդ զբի՛ւր: «Հայրենիք»ի հաւաքածուները թերթից չի կարող չնկատել Տէստէկիւլի ունեցած պատկանելի աշխատանքը. և՛ խմբագրականներ, և՛ պաշտպանիչ-ջաղաքական յօդածներ, և՛ գեղարւեստական ու գրական կտորներ, և՛ քննադատութիւն ու գրախօսական: Ունէր դիտելու և անհաղթ սուր արտայայտուչնորհք. դիտէր հակառակորդի թոյլ կողմը բունէլ. սէրում էր բանավէճը և չէր քաշուած սուր արտայայտութիւններից: Շիտակ և ուղղածիդ, դատողութիւնների մէջ անգիւղոյ, երբեմն կծու հեղինոյ, յաճախ ընդդիմադիր, ծայրահեղօրէն խստապահանջ ու աններող —

Տէստէկիւլի բնաւորութեան գծերն էին, որոնք եթէ իր պաշտպանած դատին օգուտ էին հասցնում, իրեն անձնապէս, յաճախ, պատճառում էին ցաւ ու տառապանք...

Կուսակցական գործունէութեան զուգընթաց Տէստէկիւլը գրադուստ էր և զուտ գրական խնդիրներով: Գիրքն ու գիրը նրա տարիքն էր: Գրքով սպրեց, գըրքով էլ մեռաւ: Իր աշխատութիւններէից յիշենք «Տիրոջ Այգիլին մէջ» գրական-քննադատական ինքնատիպ յօդաւածաշարքը, «Պատկերազարդ Հայոց Պատմութիւն» երկու հատորները, «Գրեւու Արեւստը» և այլն: Ունի և բազմաթիւ գրութիւններ՝ ցան ու ցիր օրաթերթներէ և պարբերականներէ մէջ:

Տէստէկիւլը տակաւին երիտասարդ էր և կարող էր դեռ խոշոր ծառայութիւն մատուցանել Հայ մշակոյթի: Նրա մահը ծանր կորուստ է Հ. Յ. Դաշնակցութեան, և՛, առհասարակ, Հայ կեանքի համար, մանաւանդ, այս գորշ օրերին երբ քննադողներէ տեղը մնում է պարապ. նոր ուժեր մեծ դժուարութեամբ են առաջ գալիս:

ՎԱՂԻՆԱԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ
(Վ. Իրանեան)

Մեր մտաւորականութիւնը, առհասարակ, թոյլ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի իր ապրած միջավայրը, մանաւանդ արեւելեան երկրներում: Տարիներով, նոյնիսկ ամբողջ կեանքը ապրում են Պարսկաստանում, կամ Միւրիայում և մնում են անծանօթ ու անհարորդ տեղական պայմաններին. լեզու չգիտեն, երկրի մտաւորականութեան ու ղեկավար ուժերի հետ յարաբերութիւն չունեն, երկրի ու ժողովրդի կարգերն ու բարքերը, պատմութիւնն ու սոցիոլոգիալ ուսումնասիրելու կամք չեն յայտնաբերում: Այդ պատճառով, Հայ ժողովուրդն էլ բաւարար չափով չի ներկայացում իշխանութեան ու չի կարողանում լիովին վայելել երկրի բարիքները:

Ընկ.Վաղինակը այս տեսակէտից բացառութիւն էր կազմում. նա մէկն էր պարսկահայ այն սակաւաթիւ մտաւորականներից, որոնք դիտակցում են երկրի կեանքով ապրելու կարևորութիւնը ո՛չ միայն անձնական, այլ և ազգային նկատմամբ: Այս պատճառով նրա մահը առանձնապէս ծանր կորուստ է մեզ համար: Նա մեռաւ դեկտ. 25-ին Սուլթանապատում:

Վաղինակ Սարգսեանը ծնւել էր 1890թ. մարտ 13-ին, Թաւրիզում, ուր և ստացել էր նախնական կրթութիւնը ծխական դպրոցում: Դեռ պատանի հասակից մըտել էր Հ. Յ. Դաշնակցութեան մէջ, որին հաւատարմօրէն ծառայեց մինչև կեանքի վերջը: Ծկուռ մտքի տէր, հարցասէր ու խոճուն մարդ էր. ինքնաշխատութեամբ ձեռք էր բերել լայն գաւազանք ու խորունկ ծանօթութիւն Պարսկաստանի անցեալին ու ներկայի: Գիտէր Հայերէն, պարսկերէն, Փրանսերէն, ռուսերէն, թիւրքերէն, մասամբ անգլիերէն և էսպերանտո լեզուները: Էսպերանտոի լուսաւոյն ներկայացուցիչն էր Պարսկաստանում:

Իբրև գործօն դաշնակցական, Վաղինակը մասնաւորապէս աչքի էր ընկնում մտքի ու գրչի ապարէզում: Թաւրիզից աշխատակցում էր Կոլիկասի և արտասահմանի դաշնակցական մամուլին՝ Յնգի ծածկանունով, 1910-ին հրատարակում էր «Ղարաղաղ» ամսագիրը, կապ էր պահում Թաւրիզի պարսիկ մտաւորականութեան հետ, մասնակցում Ատրպատականի յեղափոխական շարժման: Շատերի հետ նա էլ ձերբակալեց ռուսներէ կողմից, բայց յաղողեց ազատել ու տեղափոխել Մէշէտ, ապա՝ Թեհրան, ուր մօտիկ յարաբերութիւններ ունէր պարսկական շրջանների հետ: Երբ 1910-ին Թեհրան հասաւ Հայաստանի դեսպան Յ. Արզուսեանը, Վաղինակը մեծապէս օգտակար եղաւ նրան իր ծանօթութեամբ պարսկերէն լեզուին, կեանքին ու մտաւորական շրջանակներին:

Մէշէիսի բնաբնութիւնների առթիւ Վաղինակը ուղարկեց Սուլթանապատի շրջանը, ուր և հաստատեց ի վերջոյ: Պաշտօնեայ էր Սամանեան բանկի, ապա՝ Գարաղէոցեան վաճառատան: Վերջին 10-11 տարի Սուլթանապատում էր, որտեղից Վ. Իրանեան ծածկանունով աշխատակցում էր դաշնակցական մամուլին՝ տալով ինամաւծ յօդաւածներ Պարսկաստանի ընթացիկ կեանքի, տնտեսական ու քաղաքական վիճակի, գրականութեան ու արեւստի մասին: Ուսումնասիրում էր պարսիկ գրականութիւնը, թարգմանութիւններ էր անում, ձեռնարկել էր պարսկերէն-հայերէն բառարանի կազմութեան: Ամբողջապէս եռանդ ու ոգևորութիւն՝ նա հասնում էր ամէն տեղ՝ և պարսիկների և՛ հայերի մէջ: Պետական ու մտաւորական շրջաններում սիրւած ու յարգւած անձնաւորութիւն էր: Աշխատում էր կենդանի պահել Հայ-պարսկական բարեկամական կապերը:

Դժբախտաբար, առողջութեամբ տկար էր. թոքախտը մաշում էր նրա մարմինը: Վերջին տարին նրա դրութիւնը առանձնապէս ծանրացաւ: Ընտանիքով փոխադրեց Գաշան, որտեղի կլիման աւելի ևս աստուկացրեց նրա հիւանդութիւնը: Ստիպւած եղաւ վերադառնալ Սուլթանապատ, ուր և փչեց վերջին շունչը: Եքեղ ու համաժողովրդական թաղումը, որին մասնակցեցին ո՛չ միայն Հայերը այլ և պարսիկները, կարող է վկայել, թէ ի՛նչպիսի ջերմ համակրանք ու ժողովրդականութիւն էր վայելում հանդուրեալ ընկերը: Գերեզմանի վրա արտասանեցին բազմաթիւ դամբանականներ: Յուզիչ էին, մանաւանդ, պարսիկ մտաւորական Թահիրու խօսքերը. «Աղի՛ր Վաղինակ, Հայերից ո՞վ պիտի փոխարինէ քեզ. չէ՞ որ մենք դեռ ծրագիրներ ունէինք»...

Պարսկաստանի մեր մտաւորական ընկերները պէտք է լսեն պարսիկ մտաւորականի այս ճիշը և պիտի աշխատեն լեցնել ընկ. Վաղինակի թողած պարապը:

ՄԻԲԱՅԵԼ ՊԱԳԱՅԵԱՆ

Դեկտ. 8-ին, Ամբերիկայի Նէշլէ քաղաքում, արտիկաթեան յանկարծամահ եղաւ մեր շարքային հաւատարմ ընկերներից մէկը՝ Միքայէլ Պապայեանը: Հանդուրեալը Խարբերիչ Մորենիի գիւղից էր, ծնւած

1872 թւին: Հազիւ 17 տարեկան, 1889-ին նա անցնում է Ամերիկա, ուր գնանազան թաղաքներում գործաւորութիւն անելուց յետոյ, ի վերջոյ, հաստատուած է Նիւ-Հէմփշիր նահանգի Նէվլէ թաղաքում՝ ձեռք բերելով բաւական բարեկեցիկ վիճակ: Վաղ երիտասարդութիւնից ընկ. Միքայէլը մտնում է Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը և եղած բոլոր վայրերում գործուն աշխատանք է կատարում. նա հիմնել է մի շարք կոմիտէներ, նպաստել կուսակցութեան զարգացման, նիւթական լայն աւելացութիւն է ցոյց տուել: Թէ ընկ. Միքայէլը որքան էր սիրում Դաշնակցութիւնը, հոգեկան ինչպիսի ամուր կապերով կապւած էր մեր կուսակցութեան հետ, ցոյց է տալիս նրա թողած կտակը. իր ստացածքը նա բաժանել է միակ որդու, կնոջ և Հ. Յ. Դաշնակցութեան միջև: Թաղումը կատարել է դեկտ. 11-ին, ընկ. Պապայանի մարմինը հրկիգուել է և աճիւնը յանձնուել է Հ. Յ. Դ. Կենտր. Կոմիտէին, ապագային Հայաստան փոխադրելու նպատակով:

ԱՐՏԱՇԷՍ ՄԻՐՁԱՅՆԱՆ

Մեւել է 1885թ. Մշոյ Մովսէսը դիւրում: Մովսէսը Եսթերի յայտնի յեղափոխական տանիցն էր: Մովսէսը է Մշոյ Մուրաւ-Միխիթրեանի դպրոցում, և առաջին շրջանաւարտներից է (1904):

Դեռ ևս աշակերտական հասակից փարում է հայ յեղափոխական-ազատագրական գաղափարին և անդամագրւում Հ. Յ. Դաշնակցութեան: Դպրոցն աւարտելուց յետոյ, ամբողջովին ներխուժ է կուսակցական-կազմակերպական աշխատանքներին և, որպէս շրջանի գիտակից երիտասարդներից մէկը, շուտով աչքի է ընկնում հասարակական ասպարէզում:

1905-ին փոխադրում է Վան և ծառայութեան է մտնում ամերիկեան հիւանդանոցը: Որպէս բուժակ, մեծ օգտակարութիւն է ցոյց տալիս թաղնած և վիրաւոր յեղափոխականներին:

Արտաշէսի եռանդն ու գործուն մասնակցութիւնը կուսակցական աշխատանքներին, իր վրա է հրաւիրում համիտեան ոտտիկանութեան ուշադրութիւնը: Նա ստիպւած է լինում փախիչը Պարսկաստան, ուր և մնում է ամբողջ երկու տարի, շարունակելով իր կուսակցական աշխատանքները Մալմաստում: Այնտեղից անցնում է Կովկաս և Երկիր է վերադառնում միմիայն Օսմանեան Մահմանադրութիւնից յետոյ:

Մուշում Արտաշէսը դառնում է Ս. Զաւարեանի ամենասիրած ու հաւատարիմ գործակիցներից մէկը: Զաւարեանը, մի իւրեք երիտասարդներով շրջապատւած՝ Մշոյ շրջանում, հսկայական մշակութային-կրթութեան գործ է կատարել: Եւ այդ խմբի մէջ ամենից եռանդուն և մաքուր գաղափարական աշխատողներից էր Արտաշէսը:

1911թ. յետոյ Արտաշէսն անցնում է Բուլղարիա, ուր և մնում է մինչև համաշխարհային պատերազմը: Բուլղարիայում էլ նոյն եռանդով ու հաւատով ներխուժ է կուսակցական աշխատանքներէ:

Երբ կազմուած են կամաւորական խմբերը, Արտա-

շէսը մտնում է Անդրանիկի բանակը և ստանձնում է վաշտերից մէկի հրամանատարութիւնը: Մինչև վերջ Արտաշէսը մնում է Անդրանիկի հետ՝ մասնակցելով բոլոր կռիւններին:

1919-ի մայիս 28-ին յայտարարեց Միացեալ և Անկախ Հայաստանի ակտը, որից յետոյ Հայաստանի անդրանիկ Սորհրդարանը ընդունեցին 12 արեւմտահայ պատգամաւորներ: Դրանցից մէկն էր Արտաշէսը:

Այնուհետև Արտաշէսը ներխուժ է երկրի ներքին շինարարական - վարչական աշխատանքներին՝ մեծ ձեռնհասութեամբ վարելով էլջմիածնի դաւառի միլիցիայպետի պաշտօնը:

Փետրուրեան Ապստամբութեան շրջանին, Արտաշէսը նորից մարտական խմբի գլուխ անցած, հերոսաբար պաշտպանեց իրեն յանձնուած ճակատը: Ապստամբութիւնից յետոյ անցնում է Պարսկաստան, ուր և մնում է մինչև 1924-ի սկիզբը:

1924-ի դարնանը վերադառնում է Երևան և նոր թափով ու իրեն յատուկ անձնակրթութեամբ անցնում է կազմակերպական դժւարին աշխատանքների: Ահա՛, այստեղ է, որ երևան են գալիս Արտաշէսի կազմակերպական կարողութիւններն ու գաղափարական յստակատեսութիւնը: Դժբախտաբար, Արտաշէսի այդ շրջանի գործունէութեան վրայից ստիպւած ենք լուսութեամբ անցնել: Բայց ապագային, երբ ամէն ինչի մասին ազատօրէն գրելու հնարաւորութիւնն ունենանք, պէտք է տեսնենք, թէ ի՞նչպէս, հիւծախոյց կորացած այդ ուսերի վրա ծանրացած են եղել ամենապատասխանատու և դժւարին աշխատանքները, մասնաւոր, 1926թ. յունւարեան գանգաւածային ձերբակալութիւններից յետոյ...

Տարիների աստանդական ու ռազմական կենսւքը, զրկանքներն ու տառապանքներն իրենց աւերիչ գործը կատարել էին: Դեռևս Պարսկաստանում Արտաշէսը կրճէ հիւանդութիւն է ստանում, որը զնալով աւելի ու աւելի է խորանում: Երբ վերջին անգամ նրանից բաժանեցի, հիւծախոյց արդէն երրորդ աստիճանին էր հասած: Յերդրոցից, որ իրեն պահպանի ու այնքան էլ չտարւի աշխատանքներով: Դիւրաբուրած տոնով պատասխանեց, թէ ինքը շատ լաւ գտում է, որ վախճանը մօտ է և դրա համար էլ որոշել է, քանի դեռևս շարժւելու հնարաւորութիւն ունի, պիտի աշխատի գործին զոհարելով մնացած կենսւքը... Բաժանման վայրկեանին ուղեցի գրելու ու համարել: Մերժեց. —

— Եւրթերը թունաւորած են, կը վարակուես...

1926-ի վերջերին Արտաշէսը ձերբակալուած է: Չնայած բռնչկների վկայութեանը և հարազատների միջնորդութեանը, Չեկան մերժում է փոխադրել հիւանդանոց:

Երեք ու կէս տարի, ծայրահեղ հիւանդ վիճակում, նա տառապւած է Չեկայի ու բանտի մութ և խոնավ նկուղներում:

Ով տեսել է նրան հիւանդ վիճակում, միայն դարմանալ կարող է, թէ ի՞նչպէս է դիմացել այդքան երկար ժամանակ: Սակայն, պէտք է ծանօթ լինել Արտաշէսի խորը հաւատին, անսահման գաղափարակոնութեան և ուժեղ կամքին, համարելու համար, թէ՛ մահին դիմադրաւորը եղել է ո՛չ թէ նրա արդէն վեր-

ջացած Ֆիդիբալանը, այլ հողեկան կորույժ:

Արտաշէսը մէկն էր այն յեղափոխականներից, որ պահպանել էր մեր ազատագրական պայքարի սկզբնական շրջանի գործիչների անբժծ մաքրութիւնը, բարձր կիչալականութիւնը և հազարհետ համեստութիւնը:

Ա. Ա.

ՄՈՒՇԵՂ ԶԱՔԱՐՆԱՆ

Անցեալ տարւոյ սկզբին, բոլլեիկները կոչեկտիվացման քաղաքականութիւնը, հասաւ իր վայրագութեան գագաթնակէտին: Հայ գիւղը սնեւում էր խորհրդային գեղաբազմագութիւններից: Այլևս համբուրթեան բաժակը լեցած էր: Եւ Հայաստանի գիւղացին ըմբռնութեան դրօշ պարգեց:

Մէկ կողմից Ձեկայի դաւերն ու Հալածանքները և միւս կողմից իրենց տարրական իրաւունքների պաշտպանութեան գիտակցութիւնը, շատ շատերին հարկազրեցին գէնքի գիմել ու ապաստանել լեռները: Տարիների ընթացքում, ժողովրդի և իշխանութեան միջև տեղի ունեցող քաղաքացիական խուլ պատերազմը իր արտայայտութիւնը գտաւ զինական բախումների մէջ:

Պայքարը առանձին սուր կերպարանք ստացաւ հայոց լեռնաշխարհում: Ահեղ մարտի ձայնը հնչեց Ջանգելուրի և Վայոց Ձորի լեռներում ու ձորերում: Եւ աղք պայքարողները առաջին շարքերում կանգնած էր Մուշեղը:

Գիւղական համեստ ուսուցիչը, ճշմարտամային այդ օրերին դարձել էր ապստամբների ղեկավար: Ամիսներ շարունակ, նա իր խմբով, ահ ու զոդի մէջ էր պահում տեղական իշխանութեանը և Ձեկայի զորամասերին: Բազմաթիւ ընդհարումների ժամանակ միշտ յաղթող էր հանդիսանում Մուշեղի ըմբռստ խումբը:

Գիւղացիական շարժումը լուրջ մտահոգութեան մասնեց կենտրոնի կառավարութեանը: Այս մտահոգութիւնից թեկադրւած, իշխանութիւնը բանակցութիւնների մէջ մտաւ ապստամբների հետ ու սկսեց համոզել, որ լեռներից իջնեն:

Զգուշանալով Ձեկայի նոր դաւադրութիւններից, Մուշեղն իր խմբով որոշում է հեռանալ երկրից: Այդ

նպատակով նա յղանում է մի խելազար ծրագիր.— յարձակել Զուլֆայի կամուրջի վրա և գրաւելով այն, անցնել Պարսկաստան: Սակայն, մասնութեան հետեւանքով, կամուրջը վերցնել չի յաղողում, և խումբը նորից վերադառնում է Գարապետայ:

Կառավարութիւնը նեման ղեկիւտ է յայտարարում: Շատերը որոշում են իջնել գիւղ՝ խաղաղ աշխատանքի: Մուշեղը, մի փոքրիկ խմբի հետ մնում է լեռներում՝ շարունակելով պայքարը: Ապրիլ 27-ին, Մուշեղն իր տաս ընկերներով, Բիլաւի լեռներում շրջապատում է 200 ուս սահմանապահ զորքերի կողմից: Անհասար կռիւր սեւում է առաւօտից մինչև ուշ գիշեր: Գիշերը խումբը կարողանում է ճեղքել շրջան ու ազատել: Սակայն, կռիւ գաշտում թողնում են երկու սպանածներ՝ Մուշեղ Զաքարեանին և թուրք Մամեդին: Ընկերներին ապստիւտ համար, սրանք զոհեցին իրենց կանքը:

Մնել է 1894-ին Վայոց Ձորի Այնպուր գիւղում: Աւարտել է Նոր-Բալազէտի քաղաքային դպրոցը: Համաշխարհային պատերազմի ընթացքին ծառայել է սուսական բանակում, իսկ Հանրապետութեան օրօք՝ հայկական զորամասերում:

Գործօս մասնակցութիւն է ունեցել Փետրաբեան Ապստամբութեան կազմակերպման մէջ: Աչքի էր ընկնում որպէս պաղարեւ և ջալ կուղղ: Երբ Լեռնահայաստանից սուր զորաբանակը յարձակեց Դարալսպեագի վրա ու վերադարեց այն, Մուշեղը միշտ առաջին դիրքերումն էր: Կատաղի կռիւներ տեղի ունեցան Ղոթուրի կամուրջը գրաւելիս: Թշնամու զնդացիների տեղատարափ զնդանքներն արգելում էին կամուրջի վրա ոտք կոխել: Այն ժամանակ Մուշեղը դիրքից վերջապետում է առաջ և կամուրջի վրա ոտքից վերաւորում: Ընկերները հետեւում են իր օրինակին և գրաւում կամուրջը:

Նահանջի ժամանակ վիրաւոր Մուշեղը մնում է Գնդեւազում: Առողջանալուց յետոյ վերադառնում է գիւղ: Մի քանի անգամ բանտարկւում և ազատ է արձակւում: Վերջերս Դարալսպեագի գիւղերից մէկում ուսուցիչ էր: Ա. Ա.

Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Համարձում երախեան, «Յուշարձան Վան-Վասպուրականի, հատար Ա. Հրատ. «Յուշարձան»-ի Կեդր. Հրտ. Յանձնախումբի, Աղեքսանդրիա, 1929.

Այս մեծագիր 502 էջոց հատորի հեղինակը ծանօթ է հայ հասարակութեան — Վասպուրականի վաստակաւոր մանկավարժ և հասարակական գործիչ Հ. Երամեանը, որ երկու տարի առաջ վախճանուեց Եգիպտոսում խոր ծեղրութեան մէջ:

Սակայն, միայն մշակոյթով չի սահմանափակւում Հ. Երամեանի գերը. նա գործել է և Վանի հասարակական կենտրոնում: Իսկ իր այս հատորը ահագին ծառայութիւն է մատուցանում նաև պատմագրութեան: 1925-26 թւականներին, ամբողջ երկու տարի, Եգիպ-

տոսում նա թելադրել է իր յուշերը Կ. Նաւասարդին, և արգիւնքը ստացել է երկու հատոր, որի առաջինը միայն լոյս է տեսել դեռ: Հրատարակութեան ծախսը հոգացել են Հ. Երամեանի բարեկամներն ու յարգողները:

«Յուշարձան»-ը գրւած է, մեծ չափով, յիշողութեամբ, և զարմանալ կարելի է միայն հեղինակի սուր յիշողութեան վրա. այնքան նիւթ է հաւաքել տասնեակ տարիների ընթացքում: Նիւթի այդ անմիջականութիւնը, անկասկած, խոշոր առաւելութիւն է, բայց և որոշ թերութիւն. պատմաբանը, ոգուերեց առաջ, ստիպւած պէտք է լինի համեմատել ուրիշ աղբիւրների հետ: Բայց և այնպէս, Հ. Երամեանի հաղորդած փաստերն ու տեղեկութիւնները խիստ թանկագին են:

Չգլխոք է մոռանալ, որ հայոց պատմութեան վերջին յիսնամեակը շատ թույլ է մշակած, իսկ, յատկապէս, յեղափոխական շարժումներին վերաբերող մասերը գրեթէ յուսաբանած չեն. շատ դէպքեր չեն արձանագրած որևէ տեղ. շատ գործեր մնացել են անյայտութեան մէջ: Եւ, այս տեսակէտից, ամէն մի նոր յուշ կամ փաստաթուղթ արժէքաւոր գիւտ է մեր պատմագրութեան համար: Է. Երամանի «Յուշարձան»-ը այդ կարգի գիտերից է:

«Յուշարձան»-ի զբաղման կողմերից հիմնականը այն է, որ նրա հեղինակը չի սահմանափակել միայն անձնական կեանքի և ապրումների նկարագրութեամբ: Ընդհակառակը, անձը նրա համար լոկ մի թել է, որից բռնած նա առաջ է ընթանում և ճանապարհին արձանագրում է այն անձեր, որ իմացել ու զգացել է, սր տեսել է հողու աշգեբով:

«Յուշարձան»-ը բաղկացած է 13 մասերից կամ դրուիւններից: Առաջին մասը պարունակում է ընդհանուր տեղեկութիւններ ու դիտողութիւններ Վանի մասին, մինչև 19րդ դարու յիսնամեակ թւականները: Երկրորդ մասը վերաբերում է Երամանի կեանքի մանկական շրջանին: Այստեղ կան հետաքրքրական տեղեկութիւններ Վանի ՅՈՒԿԱՆ թւականների դարոցական գործի, ուսուցչների, իրիւեանի, Տ. Ամիրճանեանի, հայ-թիւրքական յարաբերութիւնների, վանեցիների կենցաղի մասին: Բնորոշ են հետեւի տողերը.

«1868ի մարտի վերջերս էր, որ Ամիրճանեանի հօր քաղաւը տեղի կունենար Ս. Յակոբի գերեզմանատան մէջ՝ դրացի թիւրք յակոսեանի անուամբ Բարբրու տեղադրարարի մը տակ: Եկեցեցա՛յ ինչսմանութեանց կողմէ եղած բողոքին անմիջական պատասխանը եղաւ նոյն գիշերն իսկ (Ս. Յակոբայ) վարժարանի երկիզուրը, որ մնաց անպատիժ: Մամուլքեմու կը յիշեմ, որ ծնունդի կամ գտակի տունին ականջէ ականջ շշուկ կը պտտել շարժուիս, թէ թիւրքերը պիտի բարդեն գմբզ, գի անհատական բռնութիւններ քաղաքին ու թալաններ գիւղերու մէջ տեղի կունենային սաւալ այդ օրերն իսկ՝ հակառակ կառավարութեան համեմատաբար շատ աւելի բարեացակամ վերաբերումին դէպի հայերը» (էջ 63):

Երրորդ մասում հետաքրքրական տեղեկութիւններ կան իրիւեանի, Վանի կրթական ընկերութիւնների, Պողոսեան-Պողոսեան վէճի, Վանի շուկայի հրդեհի, ուսն-թիւրքական պատերազմի, հայկական հարցի և այլ խնդիրների մասին: Առանձնապէս հանրապետութեան իսուում է շուկայի և Կոլեճի պատճառների մասին. թիւրք կառավարութեան նպատակն էր տկտրացնել օր օրի վրա յառաջադիմող Վանը՝ «Տուրքիայ անճնճ մտակի հայաշատ, բարգաւառ և ոգևորեալ կեդրոնը», որ կըրնար ռուսական արշաւանքի մը ընթացքին վտանգաւոր դարձալ»: Կառավարութիւնը աշուրջը հետեւում էր Վանում տեղի ունեցող շարժումներին. «Վառավարութեամ աչքէն չէին վրիպեր նաև ուսումնախնդիր ընկերութեանց կազմութիւնը, քաղաքի և գիւղի մէջ ստեղծած կրթական ոգևորութիւնը, թիֆլիզի մէջ երկու թեթիւրում Վանի շուրջ ցոյց տաւած հետաքրքրութիւնը և վանեցի պատգամաւորութեան մը մէկ դիմումն առ Գեորգ Դ. կաթուղիկոսը (1872), յնդրե-

լու համար անոր միջորդութիւնը պատկանեալ տեղքը՝ հարստահարութեանց բարձրան համար»:

Չորրորդ մասը պարփակում է «Աղբային ոգևորութեան առաջին շրջանը» 1878-1895թ. — Միացեալ Ընկերութեան կազմակերպութիւնն ու դորձուցութիւնը, Մ. Փորթուզլեանի ձեռնարկները, Յառաջիմական Միութիւնը, Հայաստանի մեծ սովը 1880-81ի, իրիւեանի և Միւսնտանի վարչութիւնը և այլն: Հետաքրքրական է առանձնապէս Յառաջիմական Միութեան վերաբերող մասը, «Միւսնտիչ Փորթուզլեան, վարժապետանցի տեսուչ, իր հետ ունենալով Տիգրան Ամիրճանեան, Հայրապետ Ճանիկեան, Կարապետ և Մարկոս Նաթանեան և այլք, ընդամենը տասը հոգի, իրոք զեկավար շինվաղիք անդամներ», կը կազմէ Յառաջիմական Միութիւնը, որուն պիտի կրնային մասնակցել շատ ուրիշներ բաւանորդ անամբ, պայմանաւ, որ անոնք միևնույն ամսակալը (ամսական 5 դահեկան) վճարելով հանդերձ՝ միայն խորհրդակցական ձայն ունենան: Միութեան նպատակն էր, կատարելիք քաղաքական կուսակցութեան պաշտօնը: Այսպիսով, Յառաջիմասէր Միութիւնը, որ կազմւեց 1879թ., հանդիսանում է առաջին քաղաքական կուսակցութիւնը Հայաստանում:

Յառաջիմական Միութեան առաջին գործն է լիւնում տօնել Սահմանադրութան տարեդարձը 1879թ. մայիս 24-ին Վարզաում: Հանդէսին հրախրում են «բաղը պաշտօնական մարմինները, ընկերութիւնները, պետական թիւրք ու հայ պաշտօնատերեր, երեք հիւպատոսները և վերջապէս ինքն կուսակալ Հասան փաշան, որ առաջնորդ երևեալ եպիսկոպոսին բարձակից՝ կը նախագահէր հանդէսին»: Մասնակցում են մօտ 20 հայ ընկերութիւններ իրենց զբօսակիրով: «Հանդիսավայրին շուրջ խումբէն էր 20 հազարէ անելի բազմութիւն մը՝ քաղաքէն ու մօտակալ գիւղերէն և շարունակ «կեցցէ՛ Սահմանադրութիւն» ազալակներով օղը կը թնդանէին: «Ջիւակի» ընկերութիւնը յատուկ համագոյնտով և հրացաններով, ի ձայն փողոց և թիֆլի, հանդիսաւոր մտաւ գործեց շրջափակին մէջ և անս ամենքը, մեծ ու պտտիկ, կը ծափահարեն և կելոյրալիք կը պտտան. «կեցցէ՛ «Ջիւակի» ընկերութիւնը»: Հանդէսի ընթացքին և արագը գիշերը ու քաղաք վերադարձին՝ արժանապի մօտակալ լիւնումը, և հրաձգութիւններով և արձակած փամփուշտներով մթութիւնը կը յուսաւորէր» (էջ 118-19):

Հինգերորդ մասը ամբողջապէս վերաբերում է Երաման Վարժարանի հիմնադրութեան ու զարգացման:

Վեցերորդ մասում պատմում են 1880-85թ. դէպքերը: Այստեղ արժէ արձանագրել, որ արդէն «մինչև 1885ի սկիզբները, մեր վրիպէքը բարոյապէս և ներքալէս նախապատեղադրեանին անելի բարգաւառ կեանք տաւցած, այլ և հոգաբարձութեան մէջ ներառութիւններ մտած էին, շնորհիւ վարագի երկրագործական վարժարանին: Խրիւեան հիմնեց զայն բարեկամներու նպատակով 1883ին և առաջին անգամ ինքն երապայտն բերել տաւ»:

հերկելու, ցանկելու, հեճելու և կալսելու գործիքները :

Առաջ բերենք և Հետեւեալը. «Յմաստօրէն պնդողներ կային, թէ դէր-հիւպատոս Կ. Կամարական, որ այնքան ազգեցիկ դիրք մը շինած էր, Հասանի (Վալի) պահանջման վրա էր, որ այլուր փախադրեցաւ 84-ի փոքրերը : Կամարական 78-ի աշունէն մինչև 84 պաշտօնավարելով իրրև հայ և հիւրասէր հիւպատոս, իր մտաշնչի բնաւորութեամբ յոյժ սիրելի դէմք մը դարձած էր հարուստին և աղփատին : Պետական և օտար շրջանակներու մէջ ևս իր վայելած ազդեցութեան շնորհիւ, հայոց շատ խնդիրները նպաստաւոր լուծուով կը ստանային. նա բարեկամ էր ամէն դարձողներու և մասնաւորապէս Փոքրուգայեանի կեդրոնակամին և անոր գոյութիւնը կապահովէր՝ ամէն տարի անոր պիտոնի բացը բացելով» . (էջ 181) :

«Տարիներ յետոյ . 86-ին, առաջին անգամ էջմիածին գումած տոննս, Տուսիկ վրդ . Տէր-Մովսէսեանց խտուր կը մեղադրէր գկամարական, որ իրր թէ ցանացած ըլլաք ապստամբութեան պէս շարժում մը զբրգոնել վանի մէջ՝ պատրուկ հայրաքանդու համար ուսակամ արշաւամիջ մը, ինչ որ կը յուսան եղիք նաև Գ. Արծրունին՝ ի թիփլիզ և Փոքրուգայեան՝ ի վան : Իսկ երիւնեան Յայն իսկ ի Պերլին չէր ծածկած իր հասագումը Սան Սքէֆանոյի 16րդ յօդածի հիման վրա ուսակամ ուղղակի պաշտպանութիւնը նախամեծար համարելու մտանք, ուէ զինպ ինքնապաշտպանութեան հակառակ լինելով հանդերձ : Թիրքերէն շատեր ևս հայկական շարժումէ մը կը կասկածէին և պատասխանատու կը բռնէին ազատասէր երիւնեանը, որ այդ կասկածին աւելի տեղի կուտար Կամարականի և Փոքրուգայեանի հետ մօտիկ յարաբերութիւններ մշակելով» . (էջ 180) :

Մի կտոր ևս . «82-ին թիփլիզի մէջ յեղափոխական խնդրումներ կը ծրագրէին, և Փիրումեան իրրև գործակալ կամ սերմնացան, զրկած էր վան : Գոթթէ միաժամանակ եկան նաև Ջաֆէ Թէվէֆէիեան և վանեցի Արսէն Թոյնախեան, սակայն, երբն ալ վանի մէջ յեղափոխական շարժում մը կանխեսաւ համարելով՝ Փիրումեան ի քաղաք և Թէվէֆէիեան ի վարագ ուսուցչութեան հետևեցան, իսկ Թոյնախեան՝ բանասիրական հետազոտութեանց ելալ վանէն սկսեալ Պիրլիս և այլուր : 84 թականին էր, կարծեմ, որ Պաֆուէն «Ազատութեան Աւետարեթ» յեղափոխական թերթի թիւերը զրկեցան վան՝ մասնաւոր յանձնարարութեամբ» . (էջ 202) :

Եթեմերորդ զվտում պատմուած և Երամեանի ճամբորդութիւնը զէպի Թիֆլիս, Պոլիս ու Վիէննա և վերադարձը վան՝ Պոլիս, Տրապիզոնի ու Կարինի վրայով : Մեզ ճամբոր աւելի Հետաքրքրական է յաճորդ Տրդ զուրիւր, ուր խօսուած է ընդհանուր Հայածանձնեւորի մասին : Վերջ և գտնուած վանի գալուր կանըր . սկսուած են խիստ ճնշումներ ու Հարստահարութիւններ : Երևան են գալիս քաղաքական խնդիրներ . յեղափոխական շարժում, միախորհրդեր, կրօնական Հատուածականութիւն, Հայածանձներ զարդոցարի, ընկերութիւններ, Հայերէն Հրատարակութիւններ ու գործիչներ զէմ : Այսպէս, «87-88ին պատահեցաւ Պաշտպալ-Վան նստումը վրա Զույս-Վետիկի առաջին հայ

իրոտակային ղէպքը, որուն գոհ գացին Յովհաննէս Ազրիպասեան և Վարդան Գոյոշեան : (Կուսակալ) Խալի պէշ Կաթանեանի խորհրդով իրր պարտաւակալութիւն (էշքըյա) ներկայացուցաւ սայն ղէպքն ի Պոլիս, որպէսզի քաղաքական գոյն շատախ խնդիրը : Բայց քանի մը անձեան ղէպքեր ևս տեղի կուենան և հուսկ ուրեմն Խալի պէշ, անշուշտ կեդրոնի հրամանով, ստիպեցաւ կազմել խաղաարարական (միւզիք) ղէպքեր ու թուղթեր քննելու պաշտօնով բոմբիւն մը, ուրուն կանգամակցէր նաև բոլիս-ճամբորդ Աւետիս Պարբեան» . (էջ 250) :

Իրար են յաճորդում խուզարկութիւններն ու ճիւղակալութիւնները : Մարդկանց բանտ են նետում ամենամեզ բաների ճամբոր . մէկէ մօտ գտնուած է կասկածելի զերք, ուրիշը ազգային երգ է երգել կամ ոտանար սարասանել, երրորդը Հայրենասիրական ճառ է խօսել — բանտ : «Բանտին մէջ սակայի չարչարաններ ալ կը տրւէին . . . Գարեգին Բաղէշեցեան կամ Մտնուկեան, որ դեռ կապրի ի Քալիֆոռնիա, քանտի մէջ յաննեթով պատր երեսն ի վեր խոյածու մնաց մէկ-երկու օր, ինչպէս և իր բանտակից Արսէն վրդ . Թոյնախեան» : Բացի այդ բանտ են նետուած Գանիէլ վրդ . Արեակից, Ալիւրի գիւղացիներինց 6 հոգի իրենց ուսուցիչ Մ . Երստանեանի հետ և ուրիշներ :

Գ. Մանուկեանը ինքը այսպէս է նկարագրում այդ խաչելութիւնը .

«Առանձնարանի մէջ, պատին վրա երկու երկաթեայ ցիցեր գամուած, հասակիս բարձրութենէն քիչ մը վեր, այնպէս որ հագիւ ռոֆիս ծայրերը գետին կը հպէին, կոնկալ պատին, ռոմերս շղթայած, երկու թեւերս այդ ցիցերուն կապած, այդ դիրքով չեմ կարող յիշել 52 թէ 56 ժամ կապած պահեցայ անմտնող և հագիւ թէ ուշք վրաս էր, երբ հարցաքննիչ դատաւորը և ռոտիկանապետը՝ առանձնասենեակիս կողպէքը կրտրեցին (զի բանդապետը բացակայ էր) և զիս արձակեցին կապաքննեթէն ու շղթաներէն : Յետոյ իմացայ, որ Արսէն վարդապետն ալ միևնոյն կերպով, իմ հանդիպակաց առանձնասենեակին մէջ կապած էին պատին» . (էջ 254) :

Ի Հարկէ, նման ճնշումները ստանց Հակազդեցութեան չէին մտում . «Առյն հայաժամեմերով աւելի կը գրգռէին զգացումները և յեղափոխական խնդրումը կը սկսէր վարակել հոգիները : Մարտիլիայի «Արմենիա» թերթը 85էն սկսեալ կը բողոքէր արդէն թիրքաց բռնութեանց դէմ : Վաղանիկ Երստանէ» թերթին ի Պոլիս մտաքը արգիլելը գրելով՝ «Արմենիա» կը յայտարարէր . «Ի հարկէ, անիրաւութեան երկրին մէջ, Իրստանէն ի՞նչ գործ ունի : վանի «Հայրենասիրացի», կամ «Արմենական» կուսակալութեան անդամներէն ումեմ ա՛նքնամ միախոր Էրն, որ 180ական թականներու վերջերը կը կարծէին, թէ մէկ-երկու հարիւր հոգիով կարելի է վանի պահականոցներն ու բերդը գրաւել» . (էջ 266) :

1890 թականների սկզբին վան է գալիս ճրդ գորարանակի Հրամանատար չէրէզ Զէքէ փաշան՝ Համիդէ գորազնդեր կազմելու պաշտօնով : Կուսակալ Խալի բէյը Հրատարակուած է և, 1891թ. վերջերը,

տեղը նշանակուում է Մուլթանի թիկնապահ դիւրըլի Բահրի փաշան: Հալաթանքերը հասիրի դէմ նոր թափ են առնում: Հայ աղաներն ու մասնիչները օգնում են Բահրի փաշային: Ժողովուրդը պատասխանում է ահաբեկումներով: Վերջին կը խտանային հայիմ ու Պաիրիմ, հոյն համեմատութեամբ և հայ ժողովուրդի մէջ ինկած յեղափոխական կրակն արծածելով հնոցներ կը ձևացնէր ու ետևէ ետև կը գործելի՛ն տե՛ստերնը՝ արդար կամ անարդար: Ոմն նշամ Թերզիպաշեանի, ծանօթ Թերզիպաշեաններէն տարբեր ընտանիք մը, Կարապետ Նալպանտեանի, Ջոզ-Աղա մականամար Գեորգ Զրադեանի և, վերջապէս, Յակոբ Գլընեանի (ձիպի Յակոբ) տե՛ստերնը կը յարողդէի՛ր իրարու... 90 էն սկսեալ Ռոպէտքեան տե՛տար մը կը ստառներ Վանի վիլայէթի վրա, մինչ որ 95ի Օգոստոսին, վերջապէս, պաշտօնակն կը լինէր Վանի չար սգին՝ Պաիրիմ» (էջ 288):

Գծբախտաբար, Հ. Երամեանը չի տալիս Վանի այդ շրջանի ներքին կեանքի և հասարակական ուժերի փոխադարձութեանց մանրամասնութիւնները, որոնք ձափոյց աւելի հետաքրքրական նմիթ պիտի կազմէին մեր նորագոյն պատմութեան համար: Հէնց այս տե՛ստերնը — ինչպէ՛ս է ին կազմակերպուում նրանք, ի՞նչ արձագանգ էին դռնում ժողովրդական լայն խաւերի մէջ, որքա՞ն էին նպատուում մասնութիւնների ու դաւաճանութիւնների առջն առնելու և հայ Հասարակութեան քաղաքական դասակարակութեան:

Յրէ մատուտ խօսուում է միսիոնարութիւնների մասին: 10րդ մասը պատմական տեսութիւն է հայկական յեղափոխութեան շուրջը: Այստեղ աւելի շատ կան պատմական ծանօթ փաստեր ու խորհրդածութիւններ, քան հեղինակից իրուում տեղեկութիւնները: Երամեանի դատողութիւններն ու եզրակացութիւնները որքան էլ ինքնատիպ ու հետաքրքրական լինեն, զրքի գլխաւոր արժէքը նրա յուշերի մէջ է: Այս տեսակէտից աւելի արժէքաւոր է յալըրի՝ 11րդ մասը, ուր պատմուում է Վանի 1895 սեպտ.—1896 հոկտ. դէպքերի, շարդերի ու ինքնապաշտպանութեան, պետութեանց ներկայացուցիչների կատարած դերի, յեղափոխական շարժումների մասին:

12րդ մասը վերաբերուում է 1896—1908թ. դէպքերին—վերալինական ճիգեր, ազգային—մշակութային վերելք, առանձին գործիչների կենսագրականներ և այլն: Եւ, վերջապէս, 13րդ մասը պարփակուում է Ռիմեանի կաթուղիխոսութեան շրջանը — կալածանքի դրուում ու դիմադրութիւն, ազգային ու քաղաքական ընդհանուր իրադարձութիւններ ինչնչ. 1908 թ.ակաւոր և մի քանի գորութիւններ՝ ուղղուած հեղինակին գանգան անձանց կողմից:

Ահա «Յուշարձան»ի բովանդակութեան համառոտ ամփոփում: Ընթերցողը շատ հետաքրքրական նրութիւն կը գտնէ նրա մէջ: Պատմաբանը կողուի հայ հասարակական շարժման մի շարք երևոյթների լուսաբանելիս:

Ի հարկէ, ինչպէ՛ս ամէն յուշ, Երամեանի գիրքն էլ գուրկ չէ թերութիւններից — փաստական անձնուրութիւններ ու վիճելի տեսակէտներ, երբեմն միակողմանի կամ պարզունակ բացատրութիւններ, մերթ պարզ

անտեղեակութիւն: Այդ առաջ է դալիս նրանից, որ հեղինակը խօսուում է իրատ շատ հարցերի մասին և չի վարենում դուրս գալ իր ծանօթութեան ու հասողութեան սահմաններից: Այդքանը, սակայն, ներկի է: Պատմաբանի գործը կը լինի սխալը՝ մէկ կողմ նեղել և առնել միայն ճիշտը:

Մի դիտողութիւն էլ հրատարակիչներին: Գիրքը չունի բովանդակութիւն և մի քան գտնելու համար ստիպած ես լինում ամբողջ հատորը թերթի: Լաւ կը լինէր ունենալ և անունների ցանկ՝ դիւրացնելու համար օգուելը: Յաջորդ հատորը հրատարակելիս անհրաժեշտ է ուղղել այս սխալը:

Այս բոլորով՝ «Յուշարձան»-ի հրատարակիչների արածը արժէքաւոր և շնորհակալութեան արժանի գործ է: Հ. Երամեանի՝ դիւրքը իր կարևոր տեղը կունենայ մեր «յուշեր»-ի գրականութեան մէջ:

Ս. ՎՐ.

Պատմութիւն Ամերիկայի Գաղափարական Կուսակցութեանց, 1890—1925. գրից Մամուկ Գ. Ճիգմկեան, տպ. «Նար Օր»-ի, Ֆրէզո. 1930.

572 էջ, ընտրել թուղթ, մաքուր սուպրուութիւն, մօտ եօթը տասնեակ լուսանկար, ամուր կազմ և — անյառակ դատարկութիւն: Սկզբից մինչև վերջ փորոցային բամբասանք, դէսից-դէնից առնած ասէկոսներ, թեթևալիկ դատողութիւններ ու եզրակացութիւններ, խեղաթիւրում, կեղծիք, կիբք ու հայհոյանք, թայֆայական նեղմիտ Նաչիւներ, խնամական գնահատութիւններ, պարագ ոչնչութիւնների ջատագովանք, զարափարական մաքուր գործիչների ու գործերի անաւարկութիւն—ասա այս «պատմութիւն» մեծազորով անուղը կրող տղայամիտ շարադրութիւնը, որ իր վերնագրով կարող է մարդկանց թիրիմացութեան մէջ ձգել:

Պատմութիւն ամերիկահայ կուսակցութեանց... Հեղինակը տարրական հասկացողութիւնն իսկ չունի պատմութեան մասին: Նրա գրածը պատմութիւն չէ, այլ փողոցների ու արձաբանների խօսակցութիւն և իրար հետ շկապած, այտեղից—այտեղից հաւաքած «վաւերագրեր»: Բաւական է ստել, որ հեղինակի համար որպէս գլխաւոր աղբիւր ծառայել է գամբիւրային և աղբանոցային գրականութիւնը, ինչպէս «Վ.—Գ. Հնչակեան ընկերների դատաստաններ» կուսակցական ներքին հրատարակութիւնը՝ լի անորակելի աղտոտութիւններով, կամ «Հնչակ»-ի յաւելած «Ոճրագործ Դաւաճանները», կամ Մուշեղ եպ.—ի ու Սապահ—Իրլեանի թայֆայական գրածքերը և այլն: Ահա—ասարակ, ձիգմէնեանը գարմանայի սէր և ախորժակ ունի դէպի կասկածելի գործերը և առանձին հանձնողով է քրքրում հակառակորդ գործիչների շլացուած ճերմակեղէնը: Մարդ աղղակի գարմանում է թէ ո՞րտեղից է նա հաւաքել այդքան գարշաւու զփաստերը, «վաւերագրեր» ու «պատմութիւններ»: Ըստ երևոյթի նրա քիթը ցեխի ու կոյալուրի՝ հոտից գառ ուրիշ հոտ ընդունակ չէ առնել: Չէ՞ որ այդ անհամար թայֆայական

վէճերից, դաւերից ու խորհրդաթիւններից դուրս
Հայոց կեանքում լաւ գործեր և ազնիւ գործիչներ էլ
կան...

Սխալ կը լինի, սակայն, սակէ, որ ձիգմէճեանի
Համար լաւ գործեր ու ազնիւ գործիչներ չկան: Կա՛ն,
բայց միայն ուսմկավար, կուսակցութեան շարքերում
կամ նրա շրջապատում: Գրանից դուրս — Սողոմ-Գո-
մոր ու Բարեկոնի աշտարակաշինութիւն: Իսկապէս,
եթէ ձիգմէճեանի գրածը պատմութիւն լինէր, մենք
դէ՞թ Ռամկավար կուսակցութեան պատմութիւնը կու-
նենայինք, քանի որ գրքի գլխաւոր մասը սրան է
յատկացւած, բայց ընթերցողը այս կուսակցութեան
մասին էլ լրիւ գաղափար չի Հանում: Հեղինակը յա-
տուկ նպատակ է դրել՝ փառարանել այս կուսակցու-
թիւնը, իր գիրքը գարդարել է, շնչին բացառութեամբ,
միայն ուսմկավար դէմքերով, իսկ արդիւնքը ստացւել է՝
խղճուկ ծաղրանկար:

Ի հարկէ, մեր կողմից անլրջութիւն կը լինէր
ձիգմէճեանի «Երկասիրութեամբ» ըստ էութեան գրազ-

ւելը: Մեր նպատակն էր լրիկ գրուչացնել ընթերցողին,
որ չխաբւի գրքի անունից ու արտաքինից. մէջը ար-
ժէքաւոր բան չկայ: Եւ ոչինչ չի մոցնում Հայ աղա-
տագրական շարժման պատմագրութեան մէջ. ո՛չ մի
Հաւելի առնելիք նիւթ, պատմական վերլուծութիւն կամ
մեկնարարութիւն: Եւ մի աւելորդ անգամ ապացուցա-
նում է, թէ ինչպիսի՜ յիմարութիւնների է ընդունակ
կրթից կուրացած մարդը...

Գիրքը վերջանում է հետեւեալ խորամիտ խրատով.
«Պէտք է կեդրոնացնենք մեր ուժերը, միաձույլ ու Հա-
մանազ գործունէութիւն պէտք է ըլլայ մեր նշանա-
բանը: Վերածնութեան ստեղծագործ աշխատանքին
պէտք է լծին բոլոր ուժերը: Հեռի թշնամութենէ ու
ստեղծութենէ, սէր և զոհողութիւն պէտք է բխին մեր
սիրտերէն Հայաստանի և Հայութեան բոլոր գաւակնե-
րուն Համար»:

ձիգմէճեանի 572 էջոց Հատորը հիմնական հեր-
քումն է այս իմաստութեան...

Ս. Վ.

Ա Ր Տ Ա Ք Ս Ո Ւ Մ

Շահան Նաթալի արտաբուսած է Հ. Յ.
Դաշնակցութեան շարքերէմ:

Հ. Յ. Դ. ԲիիԻՐՕ

ԱՍՏՅԻԱԾ ԳԻՐՔԵՐ

Ռ. Զարդարեան, Ամբողջական Երկեր, Ա. Հրատ.
«Նահատակ Գրադէտներու Բարեկամներ»-ու, 1930
Փարիզ:

Հրանդ, Ամբողջական Երկեր, Ա. Հրատ. «Նահ.
Գրադ. Բարեկամներ»-ու, 1931 Փարիզ:

Մ. ձիգմէճեան, Պատմութիւն Ամերիկահայ Գա-
ղաքական կուսակցութեանց, 1930 Ֆրէզնո:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Խ Ի Ի Ն

«Դաշնակ-Հոյալուն» (Մտքաբարկան	33
Այնտեղ, ուր սոցիալիզմ են կառուցում	34
Գրգռական հարցն Ինտերնասիոնալում	37
Թիւրքիայ շուրջ	40
Ռիկովից յետոյ (Ա. Ասուածատրեան)	44

Հայաստանում	46
Սեֆարեցի Սաֆօի ինֆանկեսագրութիւնը	48
Ինտերնասիոնալ	50
Մեր գոհերը	53
Գրախօսական	60

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանա .

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէ՛մ՝

M-lle S. AGOPIAN

5, rue des Gobelins, PARIS (13^e)